ԱՊՐԻԼ 1864 ԹՈՒԱԿԱՆԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ԻՆՉ ՈՐ ԿԸ ՍԵՐՄԱՆԵՍ, ԱՅՆ ԵՒՍ ԿԸ ՀՆՁԵՍ.

(Շարունակութիւն և վերջ.)

ՉՈՐՐՈՐԴ ԳՕԴՈՒԱԾ.

ԾԱՂԱՔԱՉՔ.

Հ՚աթեներ եկան ու գնացին — անցաւ ամառը և գալոց ձմեռը նոյնպէս — բայց հայր Շաֆրինգերի լոյսը ոչ ամենևին կատարուեցաւ։ Արդարև, տանը և օտարների ներկայ լինելով, վիլլին ցոյց չտուեց ոչինչ, թէ ինչ էր կրում իւր սրտի մէջ, և երևումէր զուարթ ու ուրախ, աշխողակ և աշխատասէր. բայց, երբ նա միայն էր սարերի մէջ կամ թէ այծերը պահումէր, կամ թէ գիշերով, երբ քնած էին ամենեքեան, ինքը միայն հրսկումէր իւր անկողնի մէջ — այնուհետև շատ անգամ թափվումէին նորա աչքից մեղմ տրտմութեան և վշտի արտասուք, և նա տխուր էր այն բանի վերայ, որ չգիտէր, թէ ո՛վ է ինքը և թէ ամենևին միայնակ էր աշխարհի վերայ, անհայր, անմայր և անազգական։ Ոչ թէ այն պատճառով, որ նա չէր բոլոր սրտով և հոգով սիրում իւր հոգաբարձու ծնողքը. ամենևին ոչ։ Բայց ծածուկ կասկածումէր նա, մի գուցէ բեռն էր միայն Պետրոս Շաֆրինգերի համար, և այս իրողութիւնը տրտմեցնումէր նորան, որովհետև տես-

սանուամբ, որ իւր Հոգաբարձու Հայրը շատ հարուստ էր աշխարհային բարիքով և եթէ կարօտութիւն իսկ չէր կրում, այնու ամենայնիւ երբեմն բաժակուած էր շատ փոքրով բաւականանալ: Մանաւանդ գալոց գարնան միջոցին: Որովհետև անցած ամառը բոլորեքեան հիւանդ էին, բաց ի Վիլլհուց, վասն որոյ ժողովուած չէր ըստ բաւականին խոտ այծերի համար, և ձմեռան մէջ պիտոյ էր տասներկու այծերից ինն հատը մորթել, ապա թէ ոչ, այդ անբաղդ անասունքը սովից պիտի սատակուէին: Երեք մնացածներն ևս շատ օգտակար չեղան. պատճառ, դժուարութեամբ միայն պահպանել էին նոցա կեանքը, և նոքա կաթն չէին տալիս, որ գերդաստանի գլխաւոր արդիւնքն էր եղած: Ահա բանս պատրաստուեր Վիլլհուն մեծ հոգս և ծանր վիշտ և նա մտատանջուեր, որ այնքան փոքր էր իւր կարողութիւնը թեթևացնելու գերդաստանի աղքատութիւնը և պակասաւորութիւնը: Թէպէտ աշխատուեր նա, որչափ կարող էր, — բայց այդ հերիք չէր նորա համար. նա կամեցած կը լինէր և աւելի արդիւնք յառաջացնել, իւր առ ի սրտէ սէրը, երախտագիտութիւնը ցոյց տալու հոգաբարձու ծնողներին: Բայց ինչ կարող էր առնել նա: Գնալ վարձկան դառնալ և թողնել գերդաստանը: Դորա համար շատ մանուկ էր նա, և ոչ իսկ Հայր Շաֆրինգերը թոյլ կը տար երբեք պղպիսի բան: Վիլլհուն ոչինչ ճեռմ չէր, բայց միայն սիրուն կերպարաններ քանդակել փայտից, և գորանով իսկ պարապուեր գրեթէ չափազանց ժրաջանութեամբ, բոլոր ձմեռը, այլև գարունը, մինչև կը գար ժամանակը, երբ կարող էր արածեցնել այծերը:

Ընդհակառակ մի առաւօտ նստած էր նա լուռ և տրտում մի ապառաժ քարի վերայ և մտածումեր այս ու այն բանի վերայ. մինչև ոչ հեռի նորանից այծերը արածումէին սարակողերի վերայ: Նա մտածումեր անցածը և հարցանումեր ինքն իւրեանից, ո՛վ էր արդեօք ինքը յատկապէս և ո՛վ կարող էին լինել իւր ծնողքը, ո՛ւր էին ընակում նորա և ինչո՛ւ համար իւրեան, իբրև մի ամենևին փոքրիկ մանուկ, բաց էին մերժել իւրեանց սրտից և տանից: Ապա մտածումեր ներկան, թէ ինչպէս պէտք էր նորան ջանալ օգտակար լինել իւր բարի խնամարկու ծնողներին և հալումաշ էր լինում տրտմութենից, որ չէր ինքը աւելի հասակաւոր, աւելի զօրեղ և աւելի հմուտ, որ կարողանար մի հնարք գտանել: Վերջապէս մտքի մէջ որոճումեր և գալոցը, և գլուխը կոտրումեր այն բանի վերայ, արդեօք կը գտանէր մի օր իւր ծնողքը, և եթէ կը գտանէր, արդեօք իւր հարազատ ծնողքը այնպիսի սիրով սիրելո՞ւ էին իւրեան, ինչպէս խնամարկու ծնողքը: Եւ ամենայն տեսակ օդեղէն ամրոցներ էր շինում մտքի մէջ, այո՛ փառաւորապէս փայլատակող ու կայծակող, ինչպէս ալպեան սարերի սառցապատ կատարքը նորա գլխի վերայ — կամ թէ պղտոր ու մռայլ, ինչպէս մառախղային ամպերը, որ սարերի խոնաւ ձեղբուածներուն և այրերի մէջ ցած էին իջանում: Գուցէ արդարև նորա ծնողքն առաստապէս օրհնած էին բաղդի բարիքով, բնակումէին մի գեղեցիկ տան մէջ այգիով ու գաւիթով, կամ թէ այո՛ մի ապարանքի մէջ հրաշալի ծառաստանով — և եթէ նորա այժմ գտանէին նորան, ապա և ինքը հարստանալու էր և կը կրէր գեղեցիկ հանդերձներ և ա-

մենայն տեսակ զարդարանք, և սոցա հաւան էր նա։ Բայց մի րոպէից յետոյ քանդուեցան այս փառաւոր օդեղէն ամրոցները, ինչպէս մի թղթաշէն տուն մի երեխայի փշրուքենից։ Նորան ինչ օգուտ որ և իցէ հարստութիւն, եթէ պէտք էր նորան հրաժարուիլ իւր հոգեւարքու ծնողներից և քոյրերից։ Ո՛չ. աւելի սիրելի էր նորան աղքատ ու աննշան մնալ, քան թէ միշտ պէտք լսած նոցանից, և բարեաւ մնա՛ ասել այն սարերին, այն ընտանի, քաղցր ձորին, ուր ապրել էր նա այնպիսի երջանիկ օրեր և գտել էր այնքան հաւատարիմ սէր և կարեկցութիւն։ Բայց ինչպէս կը լինէր, եթէ նորա ծնողքը աղքատ էին և կարօտ նորա օգնականութեանը, նորա երեխայական սիրոյն։ Ինչպէս կը լինէր բանը, ինչպէս ապա։ Մի՞ թէ նա չէր լինելու ստիպուած հետևել նոցա, բաժանորդ լինել նոցա աղքատութեան, նոցա անբաղդութեան և օգնական լինել նոցա։ Ո՞հ, ինչպէս ծանր ծանրանում էր այս հնարաւորութիւնը նորա սրտի վերայ և ճնշում էր նորա հոգին։ Ա՛րդարև ինքը չգիտէր, թէ ի՞նչ բանի ցանկանար։ Կէս մի փափագում էր նա ծանօթանալ իւր հարազատ ծնողներին և կէս մի գարձեալ կասկածում էր, մի գուցէ այդպէս զզուէր իւր հոգեւարձու ծնողներից, որ այնքան սիրելի էին նորա սրտին և այնքան լիամասն արժանի էին նորա երեխայական սիրոյն, անձնանուիրութեանը և հաւատարմութեանը։

Ընդհակառակ տարուբերուելով յուսոյ, փափագի, վշտի, կասկածանքի և տրտմութեան մէջ, շատ անգամ նստում էր նա ամբողջ ժամեր խորասոյզ եղած երազների մէջ, այսօր իսկ անձնատուր լինելով այսպիսի զգացողութիւններին, և ահա, անկարծելի, մի ձորաւոր, բայց քաղցր ձայն վեր թըռցրեց նորան իւր մտայած վարանմունքից։

«Ո՞վ, դո՛ւ փոքրիկ տղայ», ձայն տուեց նորան մի մարդ — «Ես կամէի գնալ դէպ ի ջրվէժը վերևում, սարերի մէջ։ Ա՛յս տե՛ղ արի և ասա՛ ինձ, արդեօք կարելի՞ է գտանել մի ուղեցոյց դէպ ի այն տեղ»։

Վիլլին բացեց աչքը և տեսաւ իւր ցածումը, մօտ հարիւր ոտնաչափ դէպ ի խոր, հետևակ ճանապարհի վերայ մի պատանի տղամարդ պարկը քամակին, մի պահարան կտաւ տակին և մի կոպիտ ալպեան գաւազան ձեռնում, որոյ վերայ թիկին տուած, վեր էր նայում դէպ ի մանուկը։ Օտարականը կրումէր գլխին մի լայնեզերեայ գդակ, որ պիտի պաշտպաներ նորան արեգակի ճառագայթներից, մի թեթև վերարկու բաց կերպասից, խայտաճամուկ կտաւեայ վարտիք և ամուր կօշիկներ հատ յատակներով, որ շատ ճանապարհորդութիւնք լցուցել էին։ Թէպէտ նորա հագուստը պարզ էր, սակայն ունէր ամենևին գեղեցիկ կերպարանք և նորա խոշոր ու կրակոտ աչքերը, թխադէմ գլոր գլոր մազերը, որ խաղում էին նորա ճակատի և քունքի վերայ, արծուային քիթը և նուրբ ընչացքը (բեղերը), տալիս էին նորան միանգամայն պրակտական ու քաղցր տեսք։ Մեր Վիլլին շատ հաւանեցաւ օտար պարոնին և իսկոյն ցած թռաւ դէպ ի նա, որ նորան, որչափ կարող էր, տեղեկութիւնք տայ։

«Ըստուծոյ ողջոյնը ձեզ, սիրելի պարոն», ասաց նա քաղցրութեամբ,

«Հարցանո՛ւմեք մի ջուվէժի մասին։ Ա,դպիսի բաներ բաւական շատ կան այս տեղ և մինը միւսից գեղեցիկ»։

«Լաւ ընչքան ևս լաւ», պատասխանեց օտարականը. ուրեմն մեք կը որոնենք շատերը և կ'ընտրենք առաւել գեղեցիկը։ Բայց այն ջուվէժը, որ ես կամէի տեսանել, ասվում է Շոէյբլի, և քաղաքում ասացին ինձ, որ ես այս տեղ, գիւղում, կը գտանեմ մի ուղեցոյց, որ տանէ ինձ այն տեղ»։

«Հ՚աա, առ ի սրտէ յօժար եմ ես լինել ձեր ուղեցոյցը», եթէ իմ Տայրը թոյլ կը տայ ինձ։ Եկէք հարցանենք նորանից — մեր տունը հինգ հարիւր քայլ հեռաւորութեամբ այս տեղից գտանվում է այն ձորի մէջ»։

Վ,աղցր հայեցուածքով օտարականը քննում էր սիրուն մանուկին, որ այդպիսի պատրաստականութեամբ առաջարկում էր իր սպասաւորութիւնը և բարեացակամօրէն ժպտեցաւ դէպ ի նա։

«Դու մի պատուական տղայ ես», ասաց նա։ «Ա,րի ուրեմն, բայց զո պայծառը։ Մի՞թէ չեն փախչելու նորա»։

«Չ՚անեւի՛ն», անհոգութեամբ կրկնեց Վ,իլլէն — «նորա գտանումն այս տեղ բաւական շատ խոտ և հեռանալու չէն։ Եկեցէ՛ք միայն իմ հետ, ազնիւ պարոն»։

Ջ,ուարթ քայլերով Վ,իլլէն երթում էր օտարականի կողքին և բերեց նորան իւրեանց խուղը հօր մօտ, որ յօժարութեամբ տուեց իր հաւանութիւնը ուղեցոյց լինելու օտարականին։

«Հ՚ոգի՞ է ճանապարհը մինչև Շոէյբլի ջուվէժը», հարցրեց սա։

«Այրեք ժամի ճանապարհ, հեշտ ու լաւ», պատասխանեց Վ,իլլէն։ «Եւ ձեզ հարկաւոր է աջողակութեամբ ոտք շարժել, ազնիւ պարոն. պատճառ, ճանապարհը երթում է վեր ու վայր սարերի մէջ և մի շաւիղ նկատելի չէ»։

«Հ՚ալև երեք ժամ հեռո՞», ասաց օտարականը զարմացած։ «Փոքրի՛կ տղայ, մի՞թէ դու այդպէս քաջ հմուտ ես այդ տեղերին»։

«Հ՚օ՛, հմուտ եմ. հարցրեցէ՛ք միայն հօրիցս», պատասխանեց Վ,իլլէն։ Ամէն մի սար, ամէն մի ձոր, ամէն մի ծերպ, ամէն մի շաւիղ, ամէն մի փոքրիկ վտակ և ամէն մի ջուվէժ յայտնի է ինձ շրջակայքումս։ Ո՛չ ապաքէն շատ անգամ եղած եմ ես այծեամների որսում, այլև, ուրիշ ժամանակներում, ճանկռտելով վեր եմ ելել սարերը դէպ ի ամենայն կողմ։ Հարցրեցէ՛ք հօրից, նա կը վկայէ այդ, որպէս և, թէ Շոէյբլի ջուվէժից աւելի գեղեցիկները կան այս տեղերում։ Ձեզ պիտոյ էր ընտրել Լաւի ջուվէժը և Էլսի քարավազքը, մանաւանդ թէ Ուրի անուն վտակը։ Դա մի փառաւոր տեսարան է։ Ափսո՜ս, որ ոչ մի ոք կարող չէ հասանել այն տեղ, բաց ի ինձանից։ Բայց մի ամենևին չնաշխարհիկ բան է դա»։

«Ուրեմն դու կը տանես ինձ և այն տեղ», ասաց օտարականը, ժպտելով տղայի զմայլանքի վերայ։

«Հ՚օ՛, առ ի սրտէ յօժարութեամբ, — բայց ձեզ պիտոյ է աջողակութեամբ ոտք շարժել. ձեզ համարձակ չէ գլխի պտոյտ գալ. պատճառ, ճանապարհը դէպ ի Ուրի վտակը տանում է շատ մօտ անդունդների կողքից

և մի ապառաժի մէջքի վերայով, ուր պիտոյ է շատ զգոյշ լինել, եթէ չը-
կամիք երկու հազար ոտնաչափ խորութեամբ դէպ ի ցած վիժուիլ»։

«Ընդհօք չկա՛յ միւս ճանապարհ դէպ ի այդ տեղ»։

«Ճկա՛յ, պարոն։ Եւ այդ իսկ է պատճառը, որ ոչ մի մարդ հասանում չէ
այն տեղ։ Ես ինքս երկու տարի միայն յառաջ յայտնի եմ կացուցել այդ
տեղը, ուր փախել էր ինձանից մի այծեամն ապառաժի մէջքի վերայով։
Ես ցած վազեցի նորա քամակից մինչև դէպ ի ձորը, նա այնու ամենայնիւ
ազատուեցաւ ինձանից, որովհետև չունէի հրացան, ինչպէս հայրս. ապա
թէ ոչ, նորան դէպ ի գետին գլորած և տուն բերած կը լինէի։ Արդարև,
եթէ ունենայի մի փոքրիկ հրացան, շատ գեղեցիկ կը լինէր և այծեամները
շուտով կ'առնուին դորա հոտը։ Բայց ինչ պիտոյ է այսքան շատախօսու-
թիւն։ Եթէ պիտոյ է պարոնիդ, պատրաստ եմ լինել ձեր ուղեցոյցը։ Բայց
նախ և յառաջ պիտի ասէք ինձ, արդեօք ազա՞տ էք դուք գլխի պտոյտից.
ապա թէ ոչ, լաւ էր ձեզ հրաժարուիլ այդ ճանապարհորդութենից»։

«Ընհօգ եղիր, փոքրիկ դու», պատասխանեց օտարականը։ «Իմ ոտքս
ամուր է և իմ աչքս անսպրթաք — ուր կարող է մի այլ ոք գնալ, կամիմ
և ես գնալ։ Ուրեմն, յառաջ ընկիր, որ մեք պատշաճ ժամանակին վերա-
դառնանք դէպ ի տուն»։

Վիլլին առաւ իւր հետ մի կտոր հաց և այծի պանիր, դուրս բերեց իւր
ալպեան ճանապարհի գաւազանը, հրաժարական ողջոյն տուեց ծնողներին
և քոյրերին և ապա դուրս գնաց դէպ ի սարերը։

«Ո՞ր կամիք որ տանիմ ձեզ յառաջ, պարոն», հարցրեց նա, երբ որ
երկու սարագնաց ճանապարհորդները հասել էին մի տեղի, ուր նեղ ապա-
ռաժ շաւիղները դէպ ի զանազան կողմ ճիւղաւորվումէին։ «Ա՛յն տեղ վեր
է տանում ճանապարհը դէպ ի Շէյրլի ջրվէժը — այն տեղ դէպ ի Էլսի
ջրվէժը — և այն տեղ վեր դէպ ի Ուրի վտակը»։

«Ես կամիմ քո ընտրութեանը թողուլ, Վիլլի — այսպէս չէ՞ քո ա-
նունը, փոքրիկ դու», ասաց օտարականը։ «Եթէ դու կարծումես, թէ Ուրի
վտակը ամենից առաւել գեղեցիկ ջրվէժն է, ապա տար ինձ այն տեղ»։

«Հարմար է, պարոն. ապա պէտք է մեզ այն տեղ վեր գնալ», ասաց
Վիլլին։ «Երբ որ արդէն հասած էինք այն տեղ, անտարակոյս, շատ գոհ և
հաւան պիտի լինէիք. պատճառ, մի այդպիսի հրաշալի բան, ինչպես Ուրի
վտակն է, չկայ բոլոր աշխարհի վերայ։ Եւ այժմ մանաւանդ շատ ու շատ
գեղեցիկ է նա, ըստ որում ձիւնը վերեւում սաստիկ հալվումէ և բոլոր ջուրը
հաւաքվումէ վտակի մէջ։ Ա՛յդ դուք ապաշաւելու չէք ճանապարհի վերայ,
թէև նա փոքր ինչ դժուարին և աշխատեցուցիչ էր»։

«Մնո՛ղ այդ քո հոգսը չլինի», պատասխանեց օտարականը — «Ես ար-
դէն սովոր եմ երկար հետևակ ճանապարհորդութիւնների ալպեան սարերի
մէջ և չեմ վաստակում շուտով։ Քաջալերուի՛ր, յառաջ ընկիր, մանո՛ւկ
դու»։

Հուարթութեամբ յառաջ ընկաւ Վիլլին։ Հնշտութեամբ վեր ելաւ
նա զառ ի վեր և դժուարացուցիչ շաւիղները, այնպէս որ օտարականը,

Թէև ոտքը քաջ ու լաւ շարժումէր, հազիւ Թէ կարողանումէր հետևել Նորա յետքից։ Աւելի բարձր ու բարձր տանումէր ճանապարհը ապառաժ-ների և գլորուած քարերի վերայով, խոր սարածերպերի և անդունդների մօտից, խանդակների վերայից, ուր մի կոպիտ տաշած ծառաբուն պիտի լը-ցուցանէր կամրջի տեղը, մինչև ճանապարհորդները վերջապէս հասան մի սարաբամակի, որ զառ ի վեր և սեպացած դէպ ի վեր բարձրանալով մի անչափ խորութենից, այնքան նեղ էր, որ ասես Թէ հազիւ Թէ կարող էր ոտքը ամրանալ այն տեղ։ Մօտ հազար քայլափոխ ձգվումէր այդ սարաքա-մակը իբրև մի դանակի քամակ և միւս կողմի վերջումը շշափումէր մի խո-տորնակ հանդիպակաց ապառաժի պատ, որ ևս առաւել զառ ի վեր և սե-պացած, ասես Թէ, գլուխը բարձրացնումէր մինչև ամպերի ներսը։

«Ո՛հ այն տեղերից պիտի անց կենանք մեք, պարոն», ասաց Վիլլէն, դադար առնելով սարի քամակի առաջև և սրբելով ճակատից մարգարտա-նման քրտնքի կաթիլները։ «Եթէ գլուխը ազատ է պտոյտից, ապա ոչինչ վտանգ չկայ այդ տեղ — բայց արդարև գլուխը չպիտի պտոյտ գայ. պատ-ճառ, ով որ ցած գլորուեցաւ անդունդների մէջ, նա կենդանի դէպ ի վեր գալու չէ այն տեղից։

( )տարականը Թեպետ արդէն փորձուած էր իբրև քաջ ճանապարհորդ ալպեան սարերի մէջ, սակայն փոքր ինչ շուարուեցաւ, երբ որ նայելով սարի քամակի վերայ, աչքի տակ ձգեց Նորա երկայնութիւնը։ Առաւել շատ տեղերում Նորա լայնութիւնը հազիւ Թէ հասանումէր մի կամ երկու տանաչափի. Թող այդ. նա շատ տեղերում պատառուած, ճեղքոտուած և ապառաժի կտորներով ցանուած էր, որ և մեծապէս դժուարացնումէին անցանելը նոցա վերայից։

«Եթէ մեք անց էինք կացած սարի քամակի վերայով, այնուհետև ի՞նչ կը մնար մեզ առնելու», հարցրեց նա։

«Պատ պէտք է մեզ Թռչել դէպ ի ապառաժի պատը այն տեղ» ասաց Վիլլէն։ «Բայց այս շատ դժուար չէ. պատճառ, Նորա վերայ կայ մի տա-փարակ տեղ, որ ունի բաւական տարածութիւն։ Բայց սորանից յետոյ դա-լու է ամենադժուարինը. այդ տեղ հարկաւոր է մեզ ապառաժի պատին սեղմուած, չորս Թաթերի վերայ յառաջ սողալ մինչև դէպ ի անկիւնը այն տեղ և ապա աջ ձեռքի վերայ դէպ ի միւս կողմը Թեքուիլ։ Այս է ամե-նից առաւել վտանգաւոր գործը։ Բայց եթէ սորանից ազատուելէինք, ա-պա ուղղակի ցած կ'երթանք ձորի մէջ. այնուհետև ոչինչ վտանգ չկայ։ Այո՛, ճանապարհը հնշտ չէ գտանել, և ես երբէք Նորան գտանելու չէի, եթէ այծեամը յառաջընթաց եղած չլինէր ինձ։ Երկմիտ եք դուք, պարոն։ Բայց եթէ դուք չեք զգում ձեր անձը ամենևին ապահով, ապա Թող յետ դառնանք և որոնենք Շէյբլի ջրվէժը. Այդ տեղ չկայ ոչինչ վտանգ, Թէ-պէտ նա կիսով չափ այնպէս գեղեցիկ չէ, ինչպէս Ուրի ջրվէժը այդ տեղ ցածում»։

( )տարականը արդարև, ասես Թէ զգումէր իւր մէջ մի ծածուկ սար-սափ գլուխ պտտեցնող ճանապարհի երեսից, ուր մի սայթաք քայլափո-

խուԹիւն, մի ամենափոքրը պտոյտ գլխի կարող էր պատրաստել մի ահաւոր դահավէժուԹիւն դէպ ի խոր անդունդը և անփախչելի մահ—բայց նա ճրնշեց իւր մէջ երկիւղի զգացողուԹիւնը և ցոյց տուեց իւր անձը բոլորովին պատրաստ հետևելու տղային։

«Ուրեմն դու շատ անգամ եղած ես այն տեղ, Վիլլի», հարցրեց նա։

«Այո՛, շատ անգամ, պարոն — այդ տեղ մի աննման գեղեցիկ տեսարան է պատկերացնում ջրվէժը»։

«Ապա, Աստուած քո հետ, յառաջ ընկիր։ Ուր դու յաջողուԹեամբ անց ես կացել, և ինձ կը յաջողուի անց կենալ։ Յառաջ գնա։ Թոյլ անց կենանք»։

«Հարի՛ է, ազնիւ պարոն։ Ուրեմն դուք երկիւղ չունիք։ Ասեմ ձեզ ստոյգը, գործն ևս այնպէս սարսափելի չէ, ինչպէս երևում։ Միայն Թէ ձեացէք միշտ ինձ մօտ, և եԹէ ձեր գլուխը կը սկսէր պտոյտ գալ, ապա ՀանգարտուԹեամբ ցած նստեցէք քարերի վերայ, խփեցէք ձեր աչքը։ Դա կ'օգնէ և գլխի պտոյտը անց կը կենայ։ Ուրեմն յառաջ գնանք»։

ԾնեԹև ու աղատ իբրև մի այծեամ Վիլլին ոտք կոխեց վտանգաւոր շաւղի վերայ և այնպիսի զուարԹուԹեամբ քայլերը փոխուէր նորա վերայ, որպէս Թէ մի կանաչ դաշտի վերայ զբօսնուէր։ Օտարականը շատ մօտից հետևուէր նորան, քաջուԹեամբ յառաջ էր դիմում աչքերը բևեռած իւր առաջև դրած շաւղի վերայ առանց Թևքելու հայեացքը դէպ ի աջ ու ձախ։ Ասպէս նորա բաւական շուտով յառաջ ընկան և մի կէս ժամից յետոյ առանց փորձուԹեան հասել էին սարի քամակի վերջին։ Մի խոր ձեղքուածով, մօտ երեք ոտնաչափ լայնուԹեամբ միւս կողմի ժայռերին պատը բաժանած էր սարի քամակից։ Բայց որովհետև ապառաժը այս կողմ ու այն կողմ ընդարձակվում էր մի տեսակ տափակուԹեամբ, վասն որոյ շատ վտանգաւոր չէր ոտիները ձեղքուածի վերայից։ Վիլլին ԹեթեՎ ու աջողակ Թռաւ միւս կողմը և օտարականը առանց յապաղելու հետևեցաւ նորան։ ՑաջողուԹեամբ երկուքը կանգնած էին այն կողմի տափարակի վերայ, և Վիլլին ուրախուԹեամբ ծափ զարկեց, երբ իւր ուղեկցի ոտիները դէպ ի միւս կողմը այնպիսի յաջողուԹեամբ կատարուած էր։

«Մինչև այս տեղ հասած էինք, պարոն», ասաց նա — «և ձեացած ճանապարհը կը յաջողուի նոյնպէս։ Բայց ես կամէի խրատ տալ ձեզ, ձեր ճանապարհի պարկը յետ Թողուլ այս տեղ։ Այն տեղ ցածուէրը դա հարկաւոր չէր ձեզ և այս տեղից ոչ ոք տանելու չէ դորան»։

«Բայց ի՞նչ հարկաւոր է ինձ դորան Թողուլ այս տեղ. դա ծանրուԹիւն չէ ինձ», ասաց օտարականը։

«Գնու ամենայնիւ լաւ կը լինէր, եԹէ դու այն նեղ շաւղի վերայ սողալով ոչինչ կողմից արգելք չունէիր», պատասխանեց Վիլլին։ «Ես խընդրում եմ ձեզանից, Թողէք դորան այս տեղ, և այն բանը, որ դուք կռան տակին ունիք, նոյնպէս։

«Այդ անկարելի է, Վիլլի։ պատճառ, իմ պահարանիս պատճառով եկած եմ ես այս տեղ», պատասխանեց օտարականը։

«Ա՛յդ բանի՞ պատճառով։ Եւ ի՞նչ խորհուրդ ունի այդ»։

«Ո՞վ դու միամիտ տղայ, մի՞թէ տակաւին նկատել չես, որ ես նկարիչ եմ։ Ահա՛ դա իմ նկարչութեան պահարանն է, որոյ թերթերի վերայ ես նկարում եմ ամեն գեղեցիկ բան, ինչ որ տեսանում եմ, և երբ որ վերադարձել եմ դէպ ի տուն, այնուհետև նկարում եմ դոցանից մեծ մեծ պատկերներ։ Հասկանո՞ւմես այժմ, թէ ինչո՞ւ համար պահարանից կարող չեմ ես հրաժարուիլ»։

«Ա՛հ՛, այո՛, թո՛ղ այդպէս լինի», ասաց Վիլլին — «այնու ամենայնիւ — ցանկալի էր ինձ, որ դուք այդ բանը թողուիք այս տեղ։ Շատ գրժուար կը լինի ազատապէս շարժել ձեր ձեռքը, եթէ ձեր կռան տակ ունէիք պահարանը»։

«Ընդհատ են այդ խօսքերը, Վիլլի. պահարանը պիտի մնայ իմ հետ. նա պատկանում է ինձ այնպէս, որպէս ձեռը բազուկին»։

«Ես դորան հաւան չեմ», ասաց Վիլլին տարակուսելով։ «Բայց մի բան ասեմ ձեզ. տուէք ինձ դորան, աղնիւ պարոն. ես դորան կը պահեմ ամենայն զգուշութեամբ, որ ոչինչ վնաս չհասանէ դորան»։

«Ո՛չ, ո՛չ, Վիլլի. թո՛ղ տուր ինձ։ Պահարանը ծանր չէ և չէր ինձ լինելու շատ մեծ արգելարիթ. յառաջ գնա՛ — ես կը հետևիմ քեզ»։

Վիլլին ամենևին հաւան չէր այս տնօրէնութեանը։ Նա գարձեալ ըստիպագին խնդրեց օտարականից, որ յանձնէր իւրեան պահարանը, բայց նա չկամեր տեղիք տալ այդ բանին. ուրեմն Վիլլին ստիպուեցաւ թոյլ տալ, ինչպէս կամեր օտարականը. միայն թէ յօժար չէր նկարչի ընթացքին և երկբայութեամբ շարժում գլուխը։

«Այժմ դուք գիտէք», ասաց ուղեցոյց տղան։ Բայց խնդրում եմ, որ նախատեսութեամբ զգուշանաք և արգելք չպատրաստէք ձեզ. գօտիկով ամրացուցէք նորան ձեր մէջքին, այնուհետև գոնեայ բազուկները և ձեռները ազատ կին»։

Այս խորհուրդը աւելի ընդունելի երևեցաւ օտարականին, և նա հետևեցաւ դորան։ Ապա հոգ տարաւ Վիլլին, յառաջ տանելու ճանապարհը։

«Ո՛րինչև այն անկիւնը լաւ կ՛երթայ բանը», ասաց նա։ «Բայց այն տեղ պիտոյ է ձեզ վեր ուղղել ձեր անձը, ձախ ձեռնով բռլորել անկիւնը, ձեզ ամուր պահել և յետոյ ձախ ոտքը յառաջ դնել։ Ուշագի՛ր եղիք միայն, ինչպէս առնելու եմ ես — մի այնքան վտանգաւոր բան չէ, ինչպէս երևում է, այլև ես կ՛օգնեմ ձեզ։ Այժմ չորս ոտքի վերայ սողացէք իմ հետևից շատ մօտ»։

Վիլլին չոքեց ծունկերի վերայ և սողաց չորս ոտքով մի նեղ շաւղի վերայ, որ միայն տալիս էր այնքան տարածութիւն, ուր կարող էին ձեռք ու ծունկն ամրութիւն գտանել։ Դէպ ի աջ ուղղահայեաց վեր էր բարձրանում ապառաժի պատը, և դէպ ի ձախ կոկորդը բացել էր մի անդունդ, որոյ խորութիւնը անհասանելի էր մարդկային աչքի։ Բայց օտարականը չըվայպաղեց հետևել Վիլլիու օրինակին։ Նա սողաց նորա հետևից և մի քանի

րոպէից յետոյ հասան նորա ապառաժի անկիւնին, որոյ շրջակողմանէ պիտոյ էր թեքուիլ դէպ ի աջ։

«Լաւ է, դէպ ի վեր նայեցէք, աղնիւ պարոն», ասաց Վիլլին։ «Առանց վտանգի կարելի է վեր ուղղել անձը, որովհետեւ ճանապարհը այս տեղ աւելի լայն է, քան թէ դէպ ի յառաջ։ Նայեցէք, ահա ոտքս այս տեղ անկիւնին շատ մօտ — ձախ բազուկս տարածումեմ անկիւնի շուրջը — ապա ձախ ոտս հետեւեցնումեմ — և — այնուհետեւ անցել էի միւս կողմը։ Այս տեղ մի ճեղքուած կայ պատի մէջ, այդ տեղ կարող էք ամուր հաստատել ձեզ, և օգնել ձեզ պատրաստ եմ նոյնպէս»։

Նկարիչը արդարեւ մի վստահ մարդ էր, սակայն աչքի առաջեւ դրած վտանգի երեսից դող ու սարսափ զգաց իւր մէջ։ Մինչեւ այժմ եղած շաւիղը այս տեղ յանկարծ կորուսելով, վերջանումեր մի անդունդով։ Մօտ տասն ոտնաչափ խորութեամբ թեպէտ կար մի սանդուղք քանի մի թուփերով, բայց այդ սանդուղը շատ նեղ էր, թուփերը շատ թոյլ, քան թէ դրա կարող էին արգելել մի մարդու գահավիժումն թիւն ցածումը կոկորդը բացած անդունդի մէջ։ Եւ այժմ նկարիչը, վասն հասանելու Վիլլուն, որ արդէն ողջ և առողջ կանգնած էր ապառաժի պատի միւս կողմում, պիտի ոտքը անդունդի վերայով ներս դնէր օդի մէջ, առանց դիտելու, արդեօք գըտանելու էր միւս կողմում բաւական հաստատութիւն, ուր կարող էր ոտք ամբացնել։ Սարսափ եկաւ նկարչի վերայ, գոյնը թռաւ երեսից։

«Աստուած», աղաղակեց Վիլլին, որ գլուխը անկիւնի շրջապատով ձգեց և նկարչի այլակերպութիւնը նկատեց — «մի՞թէ պատրաստ է գալիս ձեր դուխը, պարոն։ Հանգստացէք, հանգստացէք, ես մի րոպէում ձեր մօտ կը լինիմ»։

Չէշտ ու աղօթակ անց կացաւ Վիլլին այն փոքրիկ միայն տարածութեան վերայից, որ բաժանում էր նորան օտարականից, և մի րոպէում նորա կողքին էր։ Օտարականը տեսաւ, թէ Վիլլին ինչպէս հեշտ յաղթումեր ահացուցիչ արգելքին, և նորա առաջին քաջութիւնը վերադարձաւ։

«Ահա մի թեթեւ սարսափ էր միայն, Վիլլի», ասաց նա։ «Բայց դա անցաւ։ Երթ դու — ես քեզանից յետ չեմ մնալու»։

Վիլլին բևեռեց մի տարակուսաւած հայեացք օտարականի երեսի վերայ, բայց որովհետեւ նորա գծագրութիւնների վերայ նկատեց միայն վստահութեան բացայայտութիւն, վասն որոյ չյապաղեց նա, այլ վերադարձաւ դէպ ի ապառաժ սարի միւս կողմը։ Հապճեպ թէ նա անցել էր, ոտք կոխեց նորա քամակից նկարիչը։ Նորա ձեռը, նորա բազուկը երեւեցան և Վիլլին տարաւ նորանց դէպ ի այն ճեղքուածը, որ իւր հարկէ տալիս էր մի ապահով հաստատութիւն։ Օտարականը յաջողեցաւ ապառաժի վերայ, ձախ ոտքը յառաջ դրեց, ինչպէս Վիլլին ասել էր նորան, և ահա կամէր հետեւեցուցանել աջ ոտքը, բայց յանկարծ ձախ ոտքը սայթաքեց (գուցէ պրծաւ) ապիից և նկարիչը մարմնի կիսով կախուած մնաց անդունդի վերայ։

«Վա՛յ իմ փրկիչ», ձայն տուեց Վիլլին, զարհուրանքից ըմբռնուած։ Բայց իսկոյն ուշը վերան ժողովեց, երբ որ տեսաւ, որ նորա ճանապարհա-

կիցը ձախ ձեռնով աւուր բռնած ունի ապառաժից. Վիլլին երկու ձեռքով ըմբռնելով նորա ուսերը, դէպ ի վեր քարշեց նորան, գործ դնելով իւր ամենայն զօրութիւնքը։

«Այժմ ծանկը դէպ ի յառաջ», ձայն տուեց նա. «քաջ կացիր միայն, այսուհետև ոչինչ վտանգ չկայ։

Նկարիչը հնազանդեցաւ, Վիլլիու օգնականութեամբ արդէն վերուզրեց իւր անձը և մի ակնթարթից յետոյ գտանվուածքը կատարեալ ապահովութեան մէջ։

Լսոր շունչ քարշելով և երկիւղից մի փոքր գունաթափուած, թիկն տուեց ապառաժի պատին և շնորհակալու հայեացքով նայուածքը Վիլլիու վերայ։

«Այս մի խաղ չէր, պարոն», ասաց սա, որոյ երկիւղը պակաս եղած չէր օտարականի երկիւղից։ «Բայց դուք քաջ պահեցիք ձեր անձը։ Եթէ ձեռքը բաց թողած լինէիք, ապա կորած կը լինէիք»։

«Ու այդ իմ յատուկ սիրալմամբ», պատասխանեց նկարիչը։ «Եթէ ոտս մի ճկուածաչափ աւելի յառաջ դրած լինէի, չէր պատահելու այդ ձախորդութիւնը։ Վերադարձի միջոցին, աւելի զգոյշ կը լինիմ։ Այժմ յառաջ գնա, Վիլլի։ Քեզ յօժարութեամբ կը հետևիմ ես. պատճառ, ես տեսանում եմ, որ դու քո բարեկամը բարձի թողի չես առնում նեղութեան մէջ։ Առանց քո օգնականութեան, այնու ամենայնիւ գլխիվայր կը կործանուէի անդունդի մէջ։

«Բայց և դուք», ասաց Վիլլին թեթևաբար, — «ինձ բարձի թողի առած լինելու չէիք։ Բայց ձեր նկարների պահարանը։ Որ է ձեր պահարանը, տէր»։

Նկարիչը ձեռքը տանելով գէպ ի գօտիկը — և ահա և՛ս աւելի գունաթափ եղաւ, քան թէ յառաջուց եղած էր, երբ որ ամենահարկու վտանգի մէջ տանջուած էր։ Գօտիկը պատառուած էր և պահարանը, ինչպէս երեւումէր, վիժուած էր անդունդի մէջ և կորած էր յաւիտեան։

«Ա՛խ մի ծանր կորուստ է», ասաց նկարիչը, առ ի սրտէ ցաւելով. «մի ամբողջ տարուարդիւնքը կորած է անվոխարինելի։ Ո՞վ տղայ, ինչո՞ւ ականջ չդրեցի քո տուած խրատին, և յետ չմողեցի այդ թանգագին պահարանը»։

«Ո՞ր թէ այդ պահարանը այնքան թանգագին է Ձեր աչքում, աղնիւ պարոն», հարցրեց Վիլլին։

«Լաւել թանգագին, քանթէ դու կարող ես հասկանալ, սիրուն մանուկ», պատասխանեց օտարականը։ «Ես գրեթէ իմ բոլոր կեանքս ըղհել եմ, ճանապարհորդելով Տիրօլստանի, Իտալիայի և Հելվետիայի մէջ և ուսումնասիրելով այդ աշխարհների բնութիւնը, և ահա, երբ որ արդէն գրեթէ հասած էի իմ նպատակիս, երբ որ արդէն ամենայն օր և ամենայն ժամ նուիրել էի իմ նպատակիս, այժմ յափշտակուած է իմ ձեռքիցս իմ աշխատութեան բոլոր վարձը։ Այդ մի դառն և ցաւեցուցիչ բան է, եւ ես եղրազել էի այնքան գեղեցիկ երազներ բաղդաւորութեան և փառքի և պատուի։ Բոլորը գրած է այժմ թաղուած անդունդի մէջ»։

«Ջամբերեցէք, դեռ ևս կորած չէ ամենայն բան», ասաց Վիլլին մի շուտափոյթ հայեացքով դէպ ի անդունդը։ «Այն տեղ ահա կախուած է պահարանը թուփերի վերայ, որ մի բաղդատ որ դիպուածով բռնել են նորան, և — այո՛ պիտոյ էր փորձ փորձել — ևս ցած կը ճանկռտեմ ապառաժը և դէպ ի վեր կը բերեմ ձեր պահարանը։ Թէպէտ այդ չէր այնքան հեշտ բան, բայց ևս մանկական հաւարձակութեամբ աւելի դժուար գործեր կատարել եմ։ Այդ տեղ յուսալի էր յաջողութիւն»։

Յառաջ քան թէ նկարիչը կարող էր յետ պահել մանուկին, սա ցած քերուեցաւ դէպ ի խորքը, օգուտ քաղելով ամենայն փոքրիկ դուրս ցցուած ժայռից, ամենայն ապառաժի ճեղքից, և յաջողութեամբ հասաւ այն տափարակին, ուր թուփերը արմատ էին արձակել։ Այս տեղ տարածուեցաւ նա տափակ զառ ի վայրի վերայ, մարմնի կէսովը սողաց տափարակի ափի վերայ, ամրացաւ այդ տեղ ոտերովը, ապա դուրս պարզեց ձեռքը, ըմբռնեց պահարանը, արձակեց ուրախութեան ձայն, դարձուցած թանգագին կորուստը առաւ ատամների մէջ և ուրախութեամբ զմայլուած վերադարձաւ դէպ ի իւր ճանապարհակիցը, որ՝ահից ու երկիւղից դողալով նայել էր այդ յանդուգն ձեռնարկութեան վերայ։

«Վիլլի, դու իմ սիրելի մանուկ, այդ ինչ յանդգնութիւն էր քո կողմից», ասաց նկարիչը, երկու ձեռով ըմբռնելով իւր պահարանը։ «Ինձ պիտոյ էր յանդիմանել քեզ, որ դու այդպիսի թեթևամտութեամբ քո կեանքը վտանգի տակ դրեցիր. այնու ամենայնիւ պիտի շնորհակալ լինիմ քեզ, որ դու իմ առաւել պատուական սեփականութիւնը փրկել ես»։

«Ես չկամիմ լսել ոչինչ շնորհակալութիւն, աղնիւ պարոն», պատասխանեց մանուկը ամենայն քաղցրասրտութեամբ։ «Ես ուրախ եմ, որ կարողացայ առնել ձեզ մի սպասաւորութիւն, փրկելով այն պահարանը, որ ունի ձեր համար այնքան մեծ արժանաւորութիւն։ Այժմ թո՛ղ յառաջ գնանք, որ տեղ հասանենք և ուրի վտակը տեսանենք, քանի որ արեգակը փայլում. պատճառ, այդ միջոցին ամենագնդեցիկ է նա իւր հայտաճամուկ ծիածանի գոյներով»։

Զուարթութեամբ յառաջ վազեց նա և նկարչին դժուար չէր հետևել նորան, որովհետև այժմ ճանապարհը միատեսակ հարթութեամբ դէպ ի ցած էր գնում և ոչինչ արգելք պլլես խափանաւոր չէր նոցա շտապմանը։ Շուտով տեղ հասան նոքա, և նկարիչը աչք ձգելով շրջակայքի վերայ, զարմացական ձայն արձակեց այն փառահեղ և հոյակապ բնութեան վերայ, որ լինելով միանգամայն մեծատարած և զմայլեցուցիչ, լցուցանում էր նորա սիրտը հիացմամբ և ոգևորութեամբ։ Ուրի վտակը թնդալով և որոտալով ցած էր վիժվում մի ճեղքուած ապառաժի պատից, զանազան հատուածներով կաղմում շատ ջրվէժներ և վերջապէս փրփրալով ու եփուելով հաւաքվում էր մի ընդարձակ գոգաւորութեան մէջ, ուստի կատաղի արագութեամբ քարաժայռերի կողմների և ջարդ ու փշուր արած ծառաբունների վերայից որոնումէր մի ելք, դէպ ի աւելի հեռի։ Մի ջրեղէն փոշու ամպ ծածկում էր ջրվէժը մի թեթև և թուխիկ վերարկուով, որ արեգակի ճա-

ռագայթներից փայլատակելով, երևումէր կայծակնացայտ մարգարիտներով ցանած, ԱՀ ու ձախ կողմից ահագին քարաժայռեր, շատ տեղ ճեղքոտուած և դէպ ի դուրս պարզուած տեղերում, ծառերի և թուփերի զուարթ կանաչութեամբ զարդարուած — ծառերի և թուփերի, որ կազմումէին մի գրաւիչ ներհակութիւն կամէի պէս սպիտակ, դէպ ի վեր ցայտուն ալիքների խառն ի խուռն բազմութեան հետ։ Ամենից բարձր բարձրանումէին դէպ ի վեր սառցապատ ալպեան կատարների սուր ծայրերը և դոցանից աւելի բարձր—կապուտակ երկինքը թեթև, լողացող ամպերով, հսկայամարմին անդամանդ արեգակովը, որ մի փայլուն լուսեղէն հեղեղ թափումէր այն բոլոր վսեմական փառահեղութեան վերայ։

«Ա՛յո՛, արդարև սա մի աւելի բան է, քան թէ ամենավառ երևակայութիւնը կարող էր երազել իւր շատ հմայքաւոր պատկերների մէջ», ձայն տուեց նկարիչը, սիրտը շատ խոր շարժուած։ «Ա՛յժմ կրկնապատիկ շնորհակալ եմ քեզ, մանուկ, որ դու բերել ես ինձ այս տեղ. պատճառ, իմ բոլոր կրած նեղութիւնքը և տագնապքը են մի ընդմիշտ գին այս բոլոր փառահեղութեան համար»։

«Ա՛յդպէս չէ՞. այս տեղ հրաշալի՛ գեղեցիկ է, ազնիւ պարո՛ն», ասաց Վիլլին ուրախացած։ Ա՛յո՛, այո՛, երկար պիտոյ էր որոնել, մինչև կարելի էր ուր և իցէ գտանել մի այդպիսի գեղեցիկ տեղ։ Ի՛նչպէս շատ եմ և շատ աչքերիս փայլատակումէր ամենաանբուռ ուրախութիւն։ «Արդեօք ձեզ երկարանալու չէր ժամանակը։ Ինձ պիտոյ է մի քանի ժամ անպատճառ նըստել և նկարել, եթէ կամէի ես գոնեայ մի թեթև նմանատիպ այս բոլոր հրաշալի փառահեղութեան ներս մուծանել իմ ստուերագրական մատենի մէջ»։

«Նկարեցէ՛ք միայն, ազնիւ պարո՛ն», պատասխանեց Վիլլին ժպտելով և տարածուեցաւ կանաչ, պարարտ մամուռի վերայ։ «Այս տեղ միշտ շուտով անցանումէ ինձ ժամանակը, թէև պիտոյ էր ինձ մի ամբողջ օր անցուցանել։ Նկարեցէ՛ք միայն, ես չեմիմ շփոթիլ ձեզ»։

Նկարիչը որոնեց իւր համար մի պատշաճաւոր տեղ, դրեց իւր պահարանը մի ապառաժի կտորի վերայ և ժրաջան նկարումէր շատ ժամեր։ Վերջապէս, երբ որ արեգակը խոնարհումէր դէպ ի արևմուտք, վեր կացաւ տեղից և կոչեց իւր մօտ Վիլլին, որին ցոյց տուեց իւր աշխատութիւնը։ Մանուկը ձայն արձակեց զարմացած. պատճառ, նկարիչը, ասելս թէ, մի կախարդական զօրութեամբ փոխադրել էր թղթի վերայ այդ լեռնավայրը և հմայքաւոր գծագրութեամբ պատկերացուցել էր բնութեան բոլոր վսեմափառութիւնը։

«Լ՚ա՛ւ, գեղեցիկ է», ասաց Վ.իլլին։ Ա՛յո՛, դա է Ծ.ովի վտակը և նորա փառաւոր ջրվէժը և մառախուղի ամպերը և քարաժայռերը և ծոլորը։ Ի՚նչպէս երջանիկ եք դուք, աղնիւ պարոն, որ կարող էք մի այդպիսի գեղեցիկ բան չինել»։

Օտարականը ժպտեցաւ և շրջուեց Թերթը։ «Եւ այս ի՞նչ է», հարցրեց նա։

«Ո՞վ իմ վերկիր, այդ ես եմ», ձայն արձակեց Վ.իլլին, բայց մերայինք ինչպէս կ՚ուրախանան, երբ որ տեսանեն այդ։ Այնպէս չէ՞. դուք կը ցուցանէք նոցա այդ պատկերը։ Դա ծոլորովին իմ երեսս է, ասես Թէ հայելու միջից գողացած։ Բայց ի՞նչ օգուտ ունի այդ պատկերը ձեր համար, աղնիւ պարոն»։

«Որպէս զի հիշատակ, կամիմ առնուլ դորան իմ հետ, տղայ», պատասխանեց նկարիչը։ «Դուք պատրաստել ես ինձ մեծ ուրախութիւն, բերելով ինձ այս տեղ. և ուժին սիրել եմ ես, նորա պատկերը նկարում եմ իմ համար, որ միշտ դալար մնայ իմ հիշողութեան մէջ։ Այժմ հասկանում եմ դուք ինձ»։

«Լ՚ա՛ւ, այո՛, այդ հասկանում եմ, և շատ ուրախ եմ, որ և ես չքաւոր տղաս, գտանվում եմ այդ տեղ, այդ գեղեցիկ գրքի մէջ», պատասխանեց Վ.իլլին։ Բայց և ինձ սիրելի էր ունենալ ձեր պատկերը նոյն խորհրդով. պատճառ, և դուք ինձ շատ հաւանելի էր, աղնիւ պարոն։ Բայց գուցէ իմ խնդիրս մի անպարկեշտ բան է։»

«Լ՚ռնեւին ձէ, Վ.իլլէ»։ Երբ որ վերադարձած էինք տուն, ես կը նկարեմ իմ դէմքը և դու կը տանաս այդ պատկերը։ Բայց այժմ թո՛ղ գնանք. ապա Թէ ոչ, գիշերը վերայ կը հասանէր մեր վերադարձի ճանապարհի վերայ»։

Վ.իլլին չընդդիմացաւ դորան, այլ նորագտած ջորւթեամբ գարձեալ յառաջ վազեց։ Վտանգաւոր տեղը ապառաժի պատի մօտ առանց որ և իցէ վտանգի անց կացան նոքա, և երեկոյեան աղօտալուսով երկու ճանապարհորդքը յաջողութեամբ հասան գարձեալ Պետրոս Շաֆրինգերի խուցին, ուր Վ.իլլիոտ պատկերը ոչ փորը հիացքի և զարմացքի նիւթ գարձաւ։ Երեկոն և գիշերը պիտի նկարիչը մնար այդ տեղ, և գալոց առաւօտուն իսկ, երբ նա կամէր հրաժարուիլ, չմոռնց նորան Վ.իլլին, որովհետև կամէր ցոյց տալ նորան և միւս գեղեցիկ տեղերը շրջակայքում։ Մի ամբողջ շաբաթ նկարիչը մնաց այդ բարեպաշտ մենրների մօտ, փոքրիկ ալպեան խուցի մէջ և այդպէս տեղեկացաւ նոցա բոլոր յաւերին և ուրախութիւններին, իմացաւ Վ.իլլիոտ սկիզբը և գլխի անցքը և նորա կեանքի բոլոր ընթացքը։ Վ.իլլին շատ սիրելի գարձաւ նորան և միւսերը նոյնպէս, բայց Վ.իլլին ամենից առաւել, որովհետև նա մի ամենին արգարասիրտ, բարի և կամակատար տղայ էր։ Անձանձիր առաջնորդութեամբ նա հնարին իւր սիրելի, փառաւոր սարերի միջով և առ ի սրտէ ուրախանում էր, տեսանելով որ Աւգուստինը—այսպէս էր օտարականի անունը — այնքան գեղեցիկ պատկերներ նկարում իւր պահարանի Թերթերի վերայ։ Յաւելի եղաւ նորան, երբ վերջում Աւգուստինը պիտոյ է հրաժարուէր։ Երկու ժամի ճանապարհ Վ.իլլին ուղեկից և

ղաւ նորան և ապա հրաժարական ողջոյն տուեց նորան։

«Ներեա՛ ինձ, պարո՛ն», ասաց նա քաղցրախառն տրտմութեամբ և արտասուքը աչքերումը։ «Ձիշդ եղիր և մեղ և հաւատացէ՛ք ինձ, որ մեր երբէք մոռանալու չենք ձեզ»։

«Ա՛յդպէս յուսամ և ես, Վիլլի, իմ սիրելի մանուկ», պատասխանեց օտարականը առ ի սրտէ — «և որ դու մի յիշատակի նշան ունենաս, վէր կալ այս, ինչ որ ես նկարել եմ քո և քոյրիների համար։ Վէր կալ այս և ս», յաւելացրեց նա, դուրս հանելով ծոցից մի ծանր ոսկի դահեկան— դորանով կարող էիր դու մի քանի ուրախ օրեր պատրաստել քեզ և այդպէս յիշել ինձ»։

Ա՛յսչափ թեամբ թղթի մէջ ամփոփած ծրարը ընդունեց Վիլլին — բայց արծաթից հրաժարուեցաւ ամենևին և բոլորովին — Պարոն Աւգուստինը ստիպուած էր դարձեալ ծոցը դնել այդ արծաթը։ Այնուհետև Վիլլին առ ի սրտէ գրկախառնեց նկարիչը, տուեց նորան վերջին հրաժարական ողջոյնը և քաղցր տրտմութենից յաղթուած շտապեց իսկոյն վերադառնալ դէպ ի տուն։ Այս տեղ միայն լացեց նա ծրարը — և ահա մի ուրախութիւն, մի գեղեցիկ անակնկալ ուրախութիւն։ Ոչ թէ միայն Պարոն Աւգուստինի պատկերը ամփոփած էր ծրարի մէջ, այլև Պետրոս Շաֆրինգերի, և մօր և քոյրերի պատկերքը, այլ սիրելի ալպեան խուղը իւր գաւիթով և այգիով և այծերով. բոլորը այնպէս նման, իբրև թէ հայելու միջից գողացած էր, այնպէս որ ոչինչ աւելի գեղեցիկ բան տեսած չէին նոքա։ Վիլլին ցնծութեամբ բարձրաձայն, և միւսերը շատ ուրախացած էին, և օտարականը իւր սիրելի յիշատակով և հրաժարական ընծայով գրեթէ և՛ս աւելի նաղելի էր դարձել նոցա։ Պատկերները վայելչութեամբ պատեցին ապակիով ու շրջանակով, և այս բանի մէջ շատ հմուտ և աջողակ էր Վիլլին. այնուհետև կախեցին նորանց խուղի մէջ վասն յիշատակի։

Այդ սորանով դեռ ևս չվերջացաւ բանը. պարոն Աւգուստինը դարձեալ տեղեկութիւն տուեց իւր մասին։ Չորս օր յետոյ եկաւ լրաբերը քաղաքից, ներս մնաւ Շաֆրինգերի խուղը և յանձնեց մի փառաւոր հրացան այծեաններու որսի համար, մի նամակի հետ միասին Վիլլիու հասցէով։ Նամակի մէջ գրած էր այսպէս. «Աստուծոյ ողջոյնը քեզ, իմ սիրելի Վիլլի. խնդրումեմ որ ընդունես այդ զէնքը իբրև բարեկամական յիշատակ. դորանով կարող էիր դու շատ ու շատ այծեամներ դէպ ի գետին գլորել։ Քո հաւատարիմ, քեզ առ ի սրտէ սիրող բարեկամ Աւգուստին»։

Վիլլիու աչքերից թափուեցան ուրախութեան արտասուք այս գեղեցիկ ընծայի և իւր բարեկամի սիրալից խօսքերի վերայ։ Իսկ հայրը ասաց. «Դա արդարև մի պատուական պարոն է, և դու, Վիլլի, անկասկած, պարծանք կը բերես այդ ընծային։ Ես մտածումեմ, որ այծեամները շուտով կ'ատնուն դորա հոտը և կը զգան, որ ցածումը այս ձորի մէջ մի որսորդ յայելացել է։ Աստուած օրհնէ այդ ազնիւ պարոնը. արդարև նա շատ ուրախութիւն է պատրաստել մեզ իւր կենակցութեամբ մեր հետ»։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԱԴՈՒԱԾ

ԱՍՏՈՒԾՈՑ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆԸ.

Պետրոս Շաֆրինգերը չէր սխալվում իր գուշակութիւնների մէջ։ Շատ չտևեց, որ ահա Վիլլիու հրացանի ձայնը թնդաց բարձրումը սարերի մէջ և հեռաւոր սառցապատ գաշտերում, և շատ սակաւ էր պատահում, որ մանուկ որսորդը դուրս գնար, առանց վերադառնալու որսը ուսերի վերայ։ Նորա համբաւը իբրև համարձակ և աջողակ որսորդ այծեամների տարածուեցաւ մօտակայքում և հեռակայքում. դորա վերայ յաւելացաւ այն հանգամանքը, որ Աւգուստին անուն նկարչի այցելու թենից յետոյ աւելի և աւելի յաճախ գալիս էին օտարականք այդ ձորի մէջ և ցանկանում էին տեսանել ջրվէժքը և յատակապէս Ուրի վտակը։ Նորա հարցանումներին Վիլլիու մասին, և չկամէին ոչինչ այլ ուղեցոյց, բացի ի նորանից։

Վիլլին միշտ յուսանում էր իր անձը պատրաստ սպասաւորելու, որովհետև նա իր աշխատութեան համար ստանում էր առատ վարձ և իր ճանապարհորդութիւններից տուն էր բերում ինչ ինչ գեղեցիկ գումարներ արծաթի, որ երբէք պահում չէր իր ձեռքում, այլ միշտ յանձնում էր մօրը։ Սորանով առ փոքր փոքր վերադարձաւ բարեկեցութիւնը այն փոքրիկ ալպեան խուղի մէջ և երկար չտևեց, որ դարձեալ տասներկու այծեր արածէին ալպեան սարերի կանաչ խոտերի մէջ, այծեր, որ պատկանում էին Պետրոս Շաֆրինգերին և արդարև, գիւղի շատ վատ այծերից չէին։ Օտար ճանապարհորդների եկաւորութիւնը, փոխանակ նուազելու ժամանակով, օրէ օր յաւելնում էր և վերջապէս օտարականքը խնդրում էին, որ Վիլլին առաջնորդէ նոցա այդ աշխարհի աւելի հեռաւոր շրջակայքում, և սակաւ չէր պատահում, որ նորա ամբողջ շաբաթներ պահէին Վիլլին իւրեանց մօտ։ Ասպէս ահա Վիլլին կամաց կամաց նայնքան ևս հռչակաւոր դարձաւ իբրև ուղեցոյց ալպեան սարերի մէջ, ինչքան որպէս այծեամների որսորդ նոյն չափով առատացան և նորա արդիւնքը, ուստի շատ փոքր բան գործ էր դրնում նա իր յատուկ պիտոյքի համար։ Մեծապէս ուրախ էր նա, որ կարող էր բոլորը տալ իւր հոգաբարձու ծնողներին և ցուցանել նոցա այն խորին երախտագիտութիւնը, որ լցուցանում էր նորա բարի և հաւատարիմ սիրտը։ Որ չափով կարող էր նա իր անձը օգտակար կացուցանել իւրայիններին, նոյն չափով նորոգվում էր նորա սրտի մէջ առաջին զուարթամտութիւնը։ Նա տեսանում էր, որ ինքը իւր պատուական հոգաբարձու ծնողներին ծանրութիւն չէր, որ նա արդարև կարող էր փոխարինել նոցա, ինչ սէր և լաւութիւն ցուցել էին իւրեան. և այս բանս լցուցանում էր նորա սիրտը այնպիսի խնդութեամբ և շինում էր նորան այնպէս երջանիկ, որ չէր այլևս ցանկանում որ և իցէ փոփոխութեան իւր կեանքի մէջ։ Նորա պատուական խնամարկու ծնողքը գիտէին այժ դին հատանել այդ սիրելի տղայի մտերիմ սրտին և տիրապէս սիրում էին նորան հաւասար սիրով, ինչպէս իւր-

եանց հարազատ երեխայքը։ Շատ, շատ անգամ հայր Շաֆրինգերը ուրախանում էր այն բանի վերայ, որ ինքը այդ անհայր ու անմայր, բարձի Թողի արած մանուկը ընդունել էր իր տան սեղանակից և իր հոգևորդի. պատճառ, Վիլլին դարձել էր մի ճշմարիտ օրհնութիւն նորա համար։ Նորա գոյքը բազմացաւ. նա, ամենաչքաւորը այն գիւղի մէջ, շուտով դարձաւ առաւել հարուստը իր լոյրը դրացիների մէջ, և քրիստոնէական մարդասիրութեան սերմի հատիկը, որ նա վստահութեամբ դէպ ի Աստուծոյ օգնութիւնը սերմանել էր, օրէ օր բերում էր նորան աւելի գեղեցիկ և աւելի քաղցր պտուղներ։ Այսպէս այս ամենաքեան միասին և առանձին շատ գոհ էին միմեանցից, և Վիլլին էր ամենագոհը, որովհետև այլևս տեղիք չունէր մտատանջութեան իւր սիրելի հոգաբարձու ծնողների մասին։ Թէպէտ չլսեցին նորան և տեսակ տեսակ փորձանքներ. պատճառ, միւս ուղեցոյցները ալպեան սարերի մէջ շրջակայքում, նախանձում էին մանուկ տղայի լաւ արդիւնքին և աշխատում էին այս և այն վնասը հասցնել նորան և ցաւեցնել նորան պէս պէս անզգամութեամբ — բայց դորա վերայ չորտեցաւ և չզայրացաւ Վիլլին և երբէք մտաբերում չէր չարին չար հատուցանել, ոխակալութեանը ոխակալութիւն, նախանձուն նախանձ, չարեացակամութեանը չարեացակամութիւն։ Ցայտնի, ուղիղ, բարեխիղճ և արդար ընթացքով գնում էր իւր ճանապարհը, ոչ ում ստիպագին առաջարկում էր իւր սպասաւորութիւնը, ոչ մինը իւր հակառակորդներից չէր բամբասում, բայց և մերժում չէր ոչինչ առաջարկութիւն, որ հասանում նորան օտար ճանապարհորդների կողմից։ Այս պատճառով նա տեղիք չունէր ինքն իւրեան չանդիմանելու, այնու ամենայնիւ վստահում էր այնքան արծաթի, որ կարող էր ամենևին երջանիկ և գոհ ապրել։

Բայց այժմ պարտ է մեզ Թողուլ Վիլլին և հեռանալով նորանից, ցամաքի ու ծովի վերայով փոխադրել մեր անձը դէպ ի մի աշխարհ, ուր անցել էր մի անցք, որ հրաշալի կերպով պիտի լուսափայլ կացուցանէր այն անբաղդ, դիպուածի կամքին Թողած, դէպ ի աշխարհ դուրս ձգած մանուկի ծննդաբանութիւնը։

Լ՚օրդ Սէյմուր, մի հարուստ և բարձրապատիւ անգլիացի աշնուական, մօտ մի տարի յետ վերևում պատմած անցքերին, իւր ագարակից տեղափոխ էր եղած դէպ ի Լոնդոն, ուր նա յաճախ տալիս էր փառաւոր խնջոյք, ուր և հաւաքվում էր մեծ բրիտանական մայրաքաղաքի առաւել երևելի հասարակութիւնը։ Մէկ կամինք մեր ընթերցողքը Հելվետիայի փոքրիկ, նեղ ալպեան ձորից դուրս հանել և տանել լօրդի փառահեղ սրահների մէջ. մի գեղեցիկ բնութեան պարզ մեծութենից մի ապարանքի զեղջ հոյակապութեան մէջ, ուր ամենայն բան փայլում էր ոսկուց և արծաթից և թանգագին քարերից, ուր խշխշում էին թաւիշ և մետաքս, ուր առաստաղից մինչև յատակը ձիգ հայելիք հարիւրապատիկ ցոլացնում էին հարիւրաւոր ճրագների լուսի հեղեղը, ուր և ոչինչ գեղեցիկ, թանգագին և փառաւոր բան պակաս չէր, ինչ որ մի անշահելի հարստութեան կարողութիւն ձեռնհաս էր ժողովել մի տեղ։

Ի այց Լորդ Սէյմուրը գործ էր դնում իւր հարստութիւնը ամենաշնիւ կերպով։ Նա սիրում էր ճարտարութիւնը, և այդ պատճառով նորա գահլիճները լցուած էին ճարտարութեան մեծագին գործերով, որ շատ անգամ գրաւում էին իւրեանց վերայ հիւրերի զարմացքը։ Եւ այսօր մի պատկեր, որ Լորդ Սէյմուրը երեկեան օրին գնել էր նշանաւոր արծաթով և դուրս էր դրել մի, հասարակութեանը բաց սենեկում, գրաւեց շատ այցելուների ուշադրութիւնը։ Այդ պատկերը յանդիման էր կայուցանում մի ալպեան աշխարհ, մի փառահեղ ջրվէժով, համարձակ դէպ ի վեր բարձրացող ապառաժեայ պատերով, որ ասես թէ ներս էին ցցվում ամպերի մէջ։ Մեծ և հոյակապ, և իւր ամենևին պարզութեան մէջ, այդ պատկերը զարթեցրեց մի մեծ հարցասիրութիւն և միշտ ժողովրդին նորա առաջև բազմութիւնը զննելով նորան զարմացական և հաւանական բացագանչութեամբ։

«Երդարև մի գեղեցիկ, փառաւոր պատկեր, Լորդ Սէյմուր», ասաց մի ըստ երևութին շատ երևելի մարդ դէպ ի տանուտէրը, որ կանգնած էր նորա կողքին։ «Հոյակապ ալպեան բնութիւնը այնպէս ստոյգ և կենդանի պատկերացուցած է, որ կարծումիր քո անձը փոխադրուած Հելվետիայի սարերի մէջ տեղ։ Մի մեծ և հուչակաւոր նկարիչ պիտի լինի նա, որ այս պատկերը ձևացուցել է»։

«Մեծ — այո՛։ Հռչակաւոր—ո՛չ, եթէ նա, ինչպէս յոյս ունիմ, այդպիսի չքաւնար այս պատկերովս, իմ արքայազն տէր», պատասխանեց Լորդ Սէյմուրը։ «Նկարիչը դեռ ևս մի պատանի մարդ է, և սա առաջին պատկերն է, որ նա իրրև պտուղ իւր ճանապարհորդութիւնների, ճարտարութեան հանդիսարանի մէջ տուել է տեղեակների դատողութեանը։ Այդ տեղ տեսայ ես պատկերը և ոչ թէ միայն իսկոյն գնեցի դորան, այլև պատուիրեցի պատանի նկարչին երեք այլ պատկերներ յօրինել»։

«Դուք արդարև յառաջել էք ինձանից, իմ Լօրդ», պատասխանեց արքայազն իշխանը — «պատճառ, խոստովանումեմ, որ ինձ նոյնպէս շատ ցանկալի էր գործ տալ ձեր նկարչին։ Լոնդոնո՞ւմն է նա»։

«Այո՛ նորկայ է այս տեղ, իմ արքայազն իշխան» պատասխանեց Լօրդը մատնացոյց առնելով մի պատանի մարդ, որ վառուելով ուրախութենից, ականջ էր դրել գովասանութիւններին, որ տուած էին իւր պատկերին։ «Խնդրեմ, իմ ազնիւ պարոն Ալգուտին, մօ՛տ եկէք։ Նորին վսեմութիւնը, արքայազն իշխանը ցանկանում ծանօթանալ ձեր հետ»։

Կարմրատակելով և համեստաբար, բայց մի ազատ և վստահ վայելչութեամբ Ալգուտինը, որին մեք ծանօթացանք Հելվետիայի մէջ, մօտեցաւ արքայազն իշխանին և ողջունեց նորան խոնարհութեամբ։ Արքայազն իշխանը նկատելի հաճութեամբ ընդունեց պատանի նկարիչը, քաղցր հայեացքով զննեց նորան, և ապա ուղղեց դէպ ի նա մի քանի բարեացակամ խօսքեր։

«Դուք արդարև նկարել էք մի ճարտարապետական դործ, պարոն», ասաց նա։ «Երբ որ դուք ձեր պարտականութիւնքը լցուցել էիք դեպ ի իմ

բարեկամ Սէյմուրը, այնուհետև ցանկալի էր ինձ, որ դուք ձեր ժամանակի մի մասը նուիրէիք ինձ։ Այդ պատկերովը ահա դասակից էք արել ձեր անձը ճարտարապետների առաջնին կարգին, և ես նկատումեմ, որ պիտի շտապիլ, եթէ կամէի օգուտ քաղել ձեր քանքարից»։

«Շատ ողորմած է ձեր վսեմութիւնը», պատասխանեց Աւգուստինը իր վստահ բարեխիղճ բնաւորութեամբ — «պատճառ, ինձ պարտ է խոստովանել ձեզ, որ հազիւ թէ արժանի եմ ձեր բարեացակամ գովասանութիւնների կէսին։ Այդ պատկերը է մի լոկ գաղափար մի զարմանալի գեղեցիկ հելլէնական կողմի, ուր տարել է ինձ մի բաղդաւոր դիպուած միջնորդութեամբ մի ամենաշնիւ հովուական տղայի ամենագրաւիչ փոքրիկ երեսով»։

«Ա՛պա — պատմեցէք, պարոն, դա պիտի մի հարցասիրութեան արժանի բան լինի», ասաց արքայազն իշխանը, հանգստանալով մի նստարանի վերայ, մինչ շրջակայ մարդիկը պատկառանքով չետ քարշուեցան կազմելով մի կիսաբոլորակ, բայց չհետանալով այնքան, որ Աւգուստինի պատմութիւնը անլսելի լինէր նոցա։

Դահլիճը պայծառ լուսաւորուած էր, ահագին աշտանակները տարածումէին իւրեանց շողշողուն լոյսը դէպ ի հեռաւոր անկիւնները, և այժմ կարելի էր նոյնպէս նկատել երկու տիկնայք, որ մօտ տասն քայլափոխ ունկնդիրներից հեռի նստած էին մի արուեստաւոր յօրինած նարնջենի, մրտենի և օլէանդրեան հովանոցի մէջ և երկար ժամանակ արդէն խորասոյզ եղած մի մեղմ շշնջաձայն խօսակցութեան մէջ։

«Արդեօք ոչի՞նչ բան կարող չէ զուարճացնել ձեր սիրտը, սիրելի Էդիլ Ուիլֆօրդ», հարցրեց միւս տիկինը, մինչ տղամարդերը դեռ ևս կանգնած էին պատկերի չորս կողմով։ «Ա՛յս փառքի և մեծութեան մէջ, այս ղուարթ և ուրախ հիւրերի մէջ դուք ցուցանումէք միշտ մի տրտում, գունաթափ երես, մի մռայլ հայեացք, և ոչ իսկ մի ժպտումն հալածումէ մի քանի րոպէ ձեր տրտմութիւնը»։

«Ձա՛ ինչպէս կարող եմ ուրախների հետ ուրախ լինել», պատասխանեց Էդիլ Ուիլֆօրդը մի մեղմ գլխաշարժութեամբ։ Երբէ՛ք, երբէք կարող չեմ իմ Ուիլհամն, իմ քաղցր, սիրելի մանուկս մոռանալ։ Ձեզ յայտնի է արդէն, թէ ինչ ահաւոր պատահար խոնարհեցուցել է ինձ և մի ժամի մէջ ոչնչացրել է իմ կեանքի բոլոր ծաղիկները»։

«Իմ միտս է գալիս այդ բանը մի աղօտ, բայց ոչ ճիշդ յիշողութեամբ», պատասխանեց Էդէլ Սէյմուրը։ «Թուք կորուսէք ձեր առհասին այրը և շուտով դորանից յետոյ ձեր մի հատիկ զաւակը, մի գեղեցիկ տղայ։ Այսպէս չէ՞ անցքը։

«Ո՜հ։ եթէ այդպէս լինէր միայն», ասաց Էդիլ Ուիլֆօրդը։ «Այնուհետև խոնարհելու էի վերին տեսչութեան կամքին և արդարև մխիթարութիւն գտած կը լինէի այն մտածութեան մէջ, թէ իմ Ուիլհամս հասել է յաւիտենական երանութեան։ Բայց մինչև այս ժամս չգիտեմ ևս, արդեօք իմ զաւակս կենդանի՞ է, թէ մեռած։ Մի անթափանցելի քօղ ծածկումէ այդ գաղտնիքը։ Ո՜վ իմ Աստուած, եթէ նա ապրումէր — գուցէ թշուա-

ուսմեան, մեղքի, յանցաւորութեան մէջ մեծացած, ապա ձրչափ զար-
հուրելի»։

«Ա՛յդ ի՞նչպէս բան է, Լէգի Ուիլիօրդ, այդ ի՞նչպէս բան է», հար-
ցուց Լէգէ Սէյմուրը կենդանի ցաւակցութեամբ։ «Դուք չէիք, արդեօք
կենդանի է ձեր մանուկը։ Դորան յայտնակե՞լ են ձեզանից։ Ես լսել եմ,
թէ նա ձեր ապարանքի ձկնարանի մէջ խեղդուած է»։

«Ա՛յդպէս կարծուեցին — այդպէս կարծուեցի և ես սկզբում,
բայց շուտով յառաջացան իմ մէջ երկմտութիւնք այդ մասին, և այս երկ-
մտութիւնքը, որոց կարող չեմ յաղթել, թունաւորումն իմ բոլոր կեան-
քը։ Դատեցէք ինքներդ, ազնիւ բարեկամս հի։ Ա՛յն գիշերին, երբ իմ ա-
մուսին այրս մեռաւ, չքացաւ և իմ Ուլհամս։ Իմ սիրելի ամուսնակցի մա-
հու անկողնից գնացի ես մանուկիս ննջարանը։ Իմ սիրտը բեկուած էր, իմ
հոգիս դղրդուած էր ամուսնակցիս անխոհարինելի կորստով։ Ամենագառն
ցաւից նուաճուած, նկատեցի այնուհետև, որ երեխայի անկողնի վարա-
գոյրները ձգած էին, և կարծուեցի, թէ նա քնած էր։ Իմ արտասուքը
թափուեցաւ — անցաւ բաւական երկար միջոց, մինչև կարողացայ ես փոքր
ի շատէ ուշս վերաս ժողովել։ Վերջապէս մօտենումեմ երեխայիս անկող-
նին, որ նայելով մանուկիս, իմ ամուսնակցի ամենաթանգ ժառանգու-
թեան վերայ, մխիթարութիւն և արգահատութիւն գտանեմ։ Ես դողդո-
ջուն ձեռքով յետ եմ քարշում վարագոյրը, և իմ տղաս, իմ Ուիլհամս
չկայ։ Բալկոնի դուռը բաց էր — ցածումը գտանվումէր ձկնարանը — իմ
առաջին մտածութիւնը եղաւ, թէ մանուկը պիտի վեր եկած լինի վանդա-
կապատի վերայ և այն տեղից դէպ ի ցած գլորուած լինի։ Իմ ահարկու եր-
կիւղական աղաղակս ժողովեց իմ մօտ ծառայքս — մի քանի խօսք իմ բե-
րանից բացայայտեցին բոլորը — ծառայքս ներքև վազեցին, տակնուվեր ա-
րեցին բոլոր ձկնարանը որոնելով իմ երեխաս — բայց ոչինչ չգտան,
եթէ ոչ դիակը մի փոքրիկ շան, որ սովորութիւն ունէր մանուկիս անկողնի
մօտ քնել։ Ուիլհամը անհետացել էր։ Կրկին և դարձեալ վեր ի վայր շրջե-
ցին ձկնարանի խորութիւնը — տակից ու վերևից քրքրեցին յատակի տիղ-
մը — բայց անօգուտ։ Երեխան չքացած, անհետացել կերպով չքացած էր,
և բոլոր հարց ու խնդիրը ոչինչ հետք ցոյս չձգեցին։ Աստուած միայն գիտէ,
թէ ինչ եղաւ այդ անբաղդ, սիրելի մանուկը»։

«Ես զուք չունէիք ոչինչ կասկածանքի շարժառիթ որ և իցէ մարդուց,
որ կարողացած կը լինէր յանցաւոր գտանուիլ դէպ ի այդ մանուկը»։

«Ո՛չ զբից!» պատասխանեց Լէգի Ուիլիօրդը, արտասուքը աչքերում։
Մի հատ մարդը, որին կարող էր շահատէտ լինել իմ երեխայի չքանալը,
էր իմ սկեսարարը, իմ ամուսնակցի ժառանգը, այժմեան Լօրդ Ուիլիօրդը,
որ այն տեղ կանգնած է ալբայաղն իշխանի կողքին։ Դորան արդելք
էր երեխան — այո՛ նորան միայն — բայց նա այն միջոցին չէր Անգլիայում,
այլ իւր վերադարձի վերայ արևելեան Հնդկաստանից դէպ ի իւր Հայրե-
նիք։ Կէս տարի միայն յետ իմ մանուկի անյայտանալուն, եկաւ նա և
նորա ցաւը հղօր վախճանի վերայ այնպէս անկեղծ էր, որ ես առհասարակ

կարող չեմ նորան այնպիսի գործի ընդունակ համարել։ Դա ամենաքնքուշ ուշադրութեամբ վարուեցաւ իմ հետ, աշխատութեր մխիթարել և վեր ուղղել իմ, խորին տրտմութեան մէջ թաղուած, սիրտը — ինչպէս և լինէր ստուգութիւնը, ես կարող չէի յաղնալ և ոչ ամենաւիղար կասկածանք նորանից։ Ի՛նչպէս կարող էր նա իմ թշնամութեան պատճառը լինել»։

«Ա՜յնու ամենայնիւ, մանուկի անհետաքար չքանալը շատ զարմանալի է», ասաց Լէդի Սէյմուրը։ «Լօրդ Ուիլֆօրդին ես հաւան չեմ, նա իւր ևրեսի վերայ ունի մի բան, որ ազդում իմ մէջ երկիւղ, ատելութիւն և զզուանք դէպ ի նա։ Ինչ որ նա ինքը արել չէ — մի՞թէ կարող չէր առնել տալ մի կաշառուած վատթար մարդու ձեռքով։ Տեսէք, Լէդի Ուիլֆօրդ, ինչպէս մռայլ, ինչպէս վայրենի և խորթ է նորա երեսի տեսքը։ Դա մի մարդ է, որից ոչինչ լաւ բան յուսալի չէ, բայց որից խիթալի է ամենայն վատ բան»։

Ե՛ւ արդարև Լօրդ Ուիլֆօրդը ցուցանումեր մի օտարոտի և այլանդակ դէմք։ Այն րոպէին, երբ Լէդի Սէյմուրը վերջին խօսքերը ասաց, կազմուեցաւ մի կիսալուսնակարգ արքայազնի իշխանի չորս կողմը, և Լօրդ Ուիլֆօրդը, լուսարձակ ճրագներով պայծառապէս լուսաւորուած, կանգնած էր նորա մօտ, դէմ յանդիման այն տիկնայցը, որ կարող էին ճշդապէս քննել նորան։ Մի խոր, սպառնալից խորշոմութիւն ակօսեց նորա դեղնագոյն ճակատը, յօնքերը, որոց տակ երկիւղալից կայծակներ դուրս էին ցայտվում նկարչի վերայ, մանալաբար կուտուած էին, ներքին շուրթը կծկուելով սեղմած էր ատամների մէջ։

«Յիրաւի, ես զարհուրում նորանից», ասաց Լէդի Ուիլֆօրդը։ «Ականջ դնենք երիտասարդ նկարչին — ասես թէ, նորա խօսքերը մեր տարակուսանքը կը լուծանէին»։

Երկու տիկնայքը նստած էին ամենևին հանդարտ, ժամանակ առ ժամանակ քննողական աչք էին ձգում Լօրդ Ուիլֆօրդի վերայ և զգաստաբար ուշադիր էին նկարչի պատմութեանը։ Աւգուստինը պատմեր ամենևին պարզապէս, ինչպէս ինքը եկած էր մի առանձնացած փոքրիկ ձոր Հելվետիայի մէջ, այդ տեղ գտել էր մի հովուական տղայ և վեր էր կալել նորան իբրև ուղեցոյց դէպ ի մի գերօրինակ փառաւոր ջրվէժ։ Կենդանի գոյներով նկարագրեց ձորը, մանուկը, նորա խնամարկու ծնողքը, փոքրիկ ալպեան խուղը, վտանգալից ճանապարհը դէպ ի Ուրի վտակը, Վիլլևու վատահութիւնը և աջողակութիւնը, և ի վերջոյ տեղեկութիւն տուեց, թէ ինչ օտարոտի կերպով այդ տղան երեք կամ չորս տարեկան հասակում ընկել էր ձորի մէջ։

Նորերիքեան կենդանի հարցասիրութեամբ հետևումէին պատմութեանը. բայց ամենից առաւել Լօրդ Ուիլֆօրդը երևումեր դղրդուած. պատճառ, մի սաստիկ կարմրութիւն և դեղնայնի գունատութիւն փոխ առ փոխ և յանկարծ ներկումէին նորա երեսը, քրտնքի մեծ կաթիլներ պատել էին նորա կնճռուած ճակատը, և նորա ծունկները, ասես թէ, դողդոջումէին. որովհե-

տէ՛ր նա կծկուած բռնել էր այն աթոռի յենարանից, որոյ վերայ նստած էր արքայազն իշխանը։

«Կ՚ապեցէ՛ք, նայեցէ՛ք» շշնջեց Լէդի Սէյմուրը դէպ ի իւր բարեկամուհին — «թէ ի՛նչ զարհուրելի տպաւորութիւն կայ ձեր սկեսրարի երեսի վերայ! վախումէմ, նորա ուշը վերայից գնայ և սիրտը նուաղի»։

Լէդի Ուիլֆօրդը չկարողացաւ ոչինչ պատասխան տալ նորան. նա ըզգումէր իւր անձը իրրև թէ քարացած, և ահա նուաղումէր սիրտը։ Նկարչի պարզ պատմութիւնը դղրդեց նորա հոգին մինչև ամենախորին հիմքը — մի երանական գուշակութիւն զարթեցաւ նորա մէջ, որպէս թէ այն բարձի թողի արած մանուկը, այն Վիլլին կարող էր լինել է՜ր երեխան, որպէս թէ վերջ ի վերջոյ Աստուծոյ անքննելի նախախնամութեամբ բացուել էր մի հետք, որ պիտոյ էր քըրքրել դէպ ի յառաջ. արդէն կամէր մայրը ղգաստանալ այն քարացուցիչ և խելքը տանող կարկամութենից և յարձակուիլ նկարչի վերայ, որ աւելի ճիշդ տեղեկութիւնք խնդրէ նորանից — և ահա նկարիչը առաւ մի մեծապարունակ պահարան սեղանի վերայից և ասաց ժպտմամբ.

«Գուցէ ցանկալի էր ձեզ, արքայազն տէր, տեսանել այն զմայլեցուցիչ, ինձ ամենևին անմոռանալի մանուկի պատկերը։ Ես նկարեցի նորան իմ ստուերագիրների մատենի մէջ — և ահա՛ մի ճիշդ գաղափար նորա սիրուն, քաղցր և բաց դէմքի»։

Արքայազն իշխանը վեր կալաւ պահարանը, աչք ձգեց նորա մէջ և արձակեց մի անակնկալ զարմացման ձայն.

«Ո՞նչ զմայլեցուցիչ մանուկ։ Նայեցէ՛ք, իմ պարոններ», ասաց նա։

Տղամարդերը թափուեցան նորա ջորս կողմը — բայց յանկարծ նոցա խուռն բազմութիւնը ճեղքուեցաւ, մի գունաթափ, գեղեցիկ տիկին երեւեցաւ այն տեղ։ Նորա սպիտակ դողդոջուն ձեռը վեր կալաւ նկարչի ստուերագիրների պահարանը, մօտեցրեց իւրեան — մի հատ հայեացք — և իսկոյն ձայն արձակեց։ «Ողորմած Աստուած. նա՛ է. իմ մանո՛ւկս, իմ Ուիլեամս»։

Այնուհետև Լէդի Ուիլֆօրդի լեզուն կապուեցաւ — այն երանացուցիչ անակնկալ ուրախութիւնը յաղթահարեց նորան. կարողութիւնը վերայից գնաց, և նա գլորուեցաւ իւր հետ եղած բարեկամուհու, Լէդի Սէյմուրի գրկախառնութեան մէջ։

Ոլոր շրջակայ պարոնները, այո՛ նոյն ինքն արքայազն իշխանը աշխատեցին Լէդի Ուիլֆօրդի սիրտը յետ բերել և փոքր միջոցից յետոյ նա բացեց աչքերը։ Նորա հայեացքը որոնումէին իւր սկեսրարը — նա չէր թացել էր։ Բայց ի՛նչ փոյթ էր մօրը։ Նա ըմբռնեց նկարչի ձեռից, դուրս հանեց գօտիկից մի մեդալիոն և մատուց նորան։

«Ա՛ռ կալէք, վե՛ր կալէք և համեմատեցէք այս պատկերը այն պատկերի հետ», ասաց նա։

Աղաստինը ընդունեց մեդալիոնը և կարող չէր զսպել իւր մէջ մի հիացման բացագանչութիւն։ «Արդարև, այս նմանութիւնը մի զարմանալի

բան է, մայ Լէդէ», ասաց նա։ Վաղուց արդէն տեսած էք այն մանուկը. սա մի և նոյն երեսն է, ինչպէս իմ ատուերագիրների պահարանի մէջ։ Համեմատեցէք դուք ևս, արքայազն տէր»։

«Ընտարակոյս, իմ սիրելի Լէդէ Ուիլֆօրդ», ասաց արքայազն իշխանը»։ Բայց ինչ բան կարող էր դղրդել ձեր սիրտը։ Սոքա են միայն երկու պատկերը մի և նոյն մանուկի»։

«Ո՛չ, ո՛չ», պատասխանեց Լէդէն — «այս է իմ հանգուցեալ ամուսնակցի պատկերը, երբ որ նա իբրև տասներկու տարեկան մանուկ նկարուած էր — և այո — Աստուած իմ, ես կարող չեմ այլևս տարակուսել — այս է պատկերը նորա որդու և իմ մանուկի, որ տարիներով յառաջ յափշտակել են ինձանից»։

Հաւակցութիւնը, որ այս խօսքերը շարժեցին, ընդհանուր էր։

«Ա՛յս է երկինքը, մայ Լէդէ, ձեր ասածը կարող է իրաւ լինել», ասաց արքայազն իշխանը։ «Նմանութիւնը անչափ զարմանալի է, և այդ նմանակցութիւնը առանց նկարչին յարակցութեան լինելու էր անչափ արժանայիշատակ բան։ Բայց թո՛ղ լսենք ձեր ներանից, մայ Լէդէ — թէպէ հասաւ ձեզ այդ ձախորդութիւնը կորուսանելու ձեր զաւակը ձեր ամուսնակցի հետ միասին»։

Այդ Լէդէն որոշեց օրը և ժամը։

«Իսկ այժմ, իմ սիրելի պարոն Աւգուստին», արքայազն իշխանը դարձուց դէմքը դէպ ի նկարիչը — «կարող էք մեզ ասել, որ տարում, և ի՞նչ միջոցում այն փոքրիկ մանուկը բերած ու ձգած է Հելվետիայի ձորի մէջ»։

«Ընծայն ճշդութեամբ, իմ արքայազն տէր — մանուկը այնպէս պրաւեց իմ ուշադրութիւնը, որ շատ հոգոզութեամբ տպաւորել եմ յիշողութեանս մէջ ամենայն բան, որ վերաբերվում էր նորան։ Մանուկը 18.. թուականի օգոստոսի 5 ին եկած է այն ձորի մէջ, և որդեգրուած է պետրոս Շաֆրինգերի կողմից»։

«Հաճելամատ է», ասաց արքայազն իշխանը, «ընդ ամենը տասն օր զանազանութիւն, ուրեմն այնքան միջոց, որ հարկաւոր էր Անգլիայից Եւրոպայի ցամաքահողը և Հելվետիա գալու համար։ Ես ցանկանում եմ ձեզ բաղդաւոր լինել, Լէդի Ուիլֆօրդ։ Դուք դարձեալ գտել էք ձեր զաւակը — գոնեայ ես իմ կողմից ամենևին տարակոյս չունիմ այդ մասին»։

Մեծ ողորմած և առատաշնորհ Աստուածը լցուցանէ իմ երանական յոյսը», ասաց Լէդէ Ուիլֆօրդը, մի երկնային բաղդաւորութիւն խօսելով նորա ճառագայթազարդ աչքերում։ «Բայց դուք, իմ պարոն» — խօսքը դարձուց դէպի Աւգուստինը — «արդեօք կամէք պատրաստել ինձ ուրախութիւն, օգնական լինելով մի մօր գտանելու իւր որդին։ Կարո՞ղ էիք իմ աղաչանքին, խնդրանքին տեղիք տալ և լինել իմ ուղեկիցս»։

«Հարկաւոր չէ ձեր խնդիրը, մայ Լէդէ», քաղցրութեամբ պատասխանեց նկարիչը։ «Ես արդէն մտքումս դրել էի առաջարկել ձեզ իմ անձը իբրև ուղեցոյց, և խնդրում եմ ձեղանից հրամայել ինձ, ինչպէս հաճոյ է ձեզ»։

«Վեղեցիկ ընթացք ձեր կողմից, իմ աղնիւ պարոն», խօսեց քաղցրութեամբ արքայազն իշխանը և բարեացակամութեամբ շօշափեց նկարչի ուսը։ «Ճանապարհորդեցէ՛ք և դարձուցէք մի քնքուշ մեր իւր սիրեկան որդին։ Հաւատացնում եմ ձեզ, որ մեծ կրելու չէիք, երկու շաբաթ յետ ձգելով ձեր աշխատութիւնքը»։

Թէև մի ամբողջ տարի յետ ձգէի, ձերդ վսեմութիւն, ես ոչինչ կը համարէի այդ կորուստը համեմատելով այն ուրախութեանը, որ ես զգալու էի դարձուցանելով այդ սիրելի մանուկին իւր մօրը։ Եօ՛րը, մեծապատիւ տիկին, հաճոյ է ձեզ ճանապարհ ընկնիլ»։

«Իսկա՛յն, իսկա՛յն», կրկնեց Լէդի Ուիլֆօրդը։ «Ոչ մի րոպէ չկամիմ յապաղել։ Գալոց առաւօտուն մեզ պարտ է Դուվրում լինել և շոգենաւով յառաջ գնալ։ Աստուա՜ծ իմ. մոռացեցէ՛ք, կարո՞ղ է մի մայր, որ իսընդրումէ իւր զաւակը, մի տարիներով արտաստուած, ողբացած զաւակ, — կարո՞ղ է մի այդպիսի մայր մի րոպէ աւելի յապաղել, քան թէ անհրաժեշտ հարկաւոր էր»։

«Ո՛չ, ո՛չ, մայ Լէդէ — ես պատրաստ եմ անյապաղ», ասաց Աւգուստինը։ «Ես շաւալումեմ դէպ ի տուն հոգալու ամենակարեւոր գործերը և ուղղակի կը գամ ձեր ապարանքը»։

«Լաւ մենակին այդպէս, իմ սիրելի», ասաց արքայազն իշխանը։ «Դուք աւելի և աւելի գրաւումեք իմ համակրութիւնը։ Վեր առէք իմ կառքը, նա կը տանէ ձեզ տուն, յետոյ դէպ ի մայ Լէդէն։ Ոչինչ հակառակութիւն! Ալէ՛ւ խնդրումեմ ձեզմանից, որ յետ ձեր վերադարձին դէպ ի Լոնդոն, անպայման չառնէք ինձ, այլ ձեր առաջին պցելութիւններից միոը բաշխէք ինձ։ Բարեա՛ւ մնացէք, պարոն։ Եւ ձեզ, մայ Լէդէ, Աստուծոյ օրհնութիւնը ուղեկից լինի ճանապարհի վերայ»։

Լէդի Ուիլֆօրդը հրաժարական ողջոյն տուեց իւր բարեկամուհուն և դնաց տուն, ուր անյապաղ ճանապարհի պատրաստութիւնքը հոգացուեցան, արկղները տեղաւորուեցան, կառքերը դուրս բերուեցան կառքատնից, և պատուիրեցաւ սուրհանդակի ձիանը բերել։ Մինչև սոքա կը գային, տիղ Հասաւ արդէն Աւգուստինը և տարուեցաւ դէպ ի Լէդի Ուիլֆօրդը, որին դարձեալ մի ըստ միոջէ պատմեց նա իւր գլխի անցքը Հելվետիայում, անցքը, որ պիտի ունենար այնքան մեծագիշեռ հետեւանք։

«Ես ոչինչ տարակուսութիւն չունիմ, մայ Լէդէ, որ դուք մանուկը գտանելու և իբրև ձեր հարազատը խոստովանելու էք», եղրափակեց նա իւր պատմութիւնը։ «Աստուծոյ մատն է, որ ինձ առաջնորդել է դէպ ի այն ձորը, ուր պիտի ծանօթանայի այն մանուկին։ Եւ դարձեալ Աստուծոյ մատն է, որ ինձ բերեց Լորդ Սէկյմուրի մօտ, ուր ես պիտի դտանէի ձեզ և մերկացնէի մի գաղտնիք, որ դուցէ թէ երբեք դուրս գալու չէր քօղի տակից, եթէ ես ըստ երեւութին ամենևին պատահարար ընկած չլինէի այն բոլորովին մեկուսի ձորի մէջ, եթէ իմ մէջ չդացած չլինէր այն միտքը, որ նկարէի իմ ստուերագիրների պահարանի մէջ մանուկի գեղեցիկ երեսը, եթէ արքայազն իշխանը չեղած լինէր այնքան մարդասէր դէպ ի ինձ, և եթէ, վերջապէս,

դուք ինքներդ նոյնպէս ըստ երեւութին ամենէին պատահաւոր ներկայ եղած չլինէիք Լօրդ Սէյմուրի սրահում»։

«Լա՛ւ, աներկբայ, այս բոլորը պարզ և պնուռ ամենայնիւ արժանայիշատակ կերպով հանդիպած իրողութիւնների մէջ ճանաչումիս և ես Ամենաարարձրելոյ իմաստուն և երանացուցիչ տեսչութիւնը», պատասխանեց Լէդի Ուիլֆօրդը։ «Շատ ու շատ անգամ, խաղալ գիշերի մէջ աղօթել եմ առ Աստուած, որ նա յետ տար ինձ իմ զաւակս. և ահա ցերը մերժել չէ իմ պաղատագին աղօթքը, այլ թոյլ է տուել, որ դա տեղ գտանէր Իւր սուրբ աթոռի մօտ։ Ա՛խ, ամենայն բանի մէջ, օ՛վ Աստուած, նկատելի է քո տեսչութիւնը» — յաւելացրեց նա, վեր ուղղելով հայեացքը դէպ ի երկինք — «և պիժմ կրկնապատիկ վստահ եմ դէպ ի քո շնորհը և գթութիւնը!» — Եկէք, իմ երիտասարդ բարեկամ։ Սիրտս ստիպադին քարշումէ դէպ ի զաւակս, և ամեն մի կորած րոպէ կրակի պէս վառվռմէ հոգուս վերայ»։

Նոքա շտապեցան դէպ ի ցած, ներս մտան պատրաստի կանգնած կառքի մէջ և որոտագին արշաւանքով թռան տեղից։ Ձորս կողմը պատել էր գիշեր — բայց երկնքում փայլատակին աստղերը, ինչպէս ամեներանական յոյսի ճառագայթարձակ աստղերը ամենաբաղդաւոր մեր սրտի մէջ։

ՎԵՑԵՐՈՐԴ ՅՕԴՈՒԱԾ.

ԻՆՉ ՈՐ ԿԸ ՍԵՐՄԱՆԵՍ, ԱՑՆ ԵՒՍ ԿԸ ՀՆՉԵՍ.

Նայն իսկ գիշերին, հալիս թէ անցած էր կէս ժամ, Լէդի Ուիլֆօրդի ուղևորութենից յառաջ, մի թևեթև ճանապարհորդական կառք, ձորս արագ ձիերով լծած, վազումէր դէպ ի Դուվը։ Բացի ձիավարից, նստած էր կառքի մէջ մի հատ մարդ։ Խաւար մազերի վերայ թուխս նստած, կծկուել էր նա մի անկիւնում և ժամանակ առ ժամանակ ժողովումէր իւր զօրութիւնը, որ սպառնալիքով, անէծքով և խստումնութով ստիպէր ձիավարին աւելի և աւելի շտապեցնել ճանապարհորդութիւնը։ Ձիանքը հողմի հետ հաւասար վազումէին. պնուռ ամենայնիւ կառքի մէջ նստած մարդու աչքում երևում էր այդ թռիչքը բաւական արագ։ «Ցառա՛ջ գնա, յառա՛ջ գնա», ձայն էր տալիս նա։ «Աւելի քա՛ջ գործ դիր մտրակդ, նզովեա՛լ շուն, ապա թէ ոչ, գնտակը կ'իջուցանեմ գլխիդ մէջ։ Ցառա՛ջ գնա, թէև դու կարո՛ր լինէիր։ Ամեն մի րոպէ վաղ հասած ստանցիային, շահ կը բերէ քեզ մի մի գինէ. յառա՛ջ, յառա՛ջ»։

«Ներայց ձիանքը կը խորտակուին սայլի առաջև, պարո՛ն», պատասխանեց ձիավարը։

«Մո՛ղ խորտակուին, միայն թէ կը դիմանային մինչև մեռաւար ստանցիան», վայրենի ձայնով աղաղակեց տղամարդը։ «Հեռացի՛ր միայն։ Ամեն մի ձիուն, որ կը խորտակուի, քսան գինէ։ Հուռա՜ տղաս, քշի՛ր ձիանքը, որ կայծերը թաւիւուին»։

Ձիավարը շարժեց մօրակը ձիանքի վերայ — կառաղի վազողութեամբ յառաջ էր տարվում կառքը տափարակ ճանապարհի վերայ, հեւացող ձիերը բաշերը շառաչմունին հողմի մէջ, կայծերը թաւվում էին նոցա պայտերի տակ, տուներն ու ծառերը սուրերների պէս թռչում էին աղմկաշարժ սայլի մօտից։ Այժմ գոհ էր երևում ճանապարհորդը, որ ունէր պղպիսի շտապողութեան տեղիք։ Նա դարձեալ քամակը տուեց բարձերին։ Բայց սակաւ րոպէներից յետոյ կրկին վեր թռաւ, երկիւղածին քննողական աչք ձգեց դէպ ի յետ ճանապարհի վերայ, և դարձեալ որոտաց ձիավարի վերայ, որ նա մօրակէր ձիանքը մինչև դէպ ի արիւն։ Այսպէս անդադար և անհանգիստ յառաջ էր գնում ճանապարհորդութիւնը — անասունները, սակս թէ, կլանում էին ճանապարհը իւրեանց առաջև — փոշեղէն ամպեր դէպ ի վեր պոռթկուեցան — ճանապարհորդը աղաղակում էր «յառա՜ջ, յառա՜ջ», ձիավարը ճայթեցնում էր մօրակով — վերջապէս հասան ստանցիային։

«Դուք պիտի գոհ լինիք, պարոն», ասաց ձիավարը։

«Ձիանք, ձիա՛նք», գոռաց ճանապարհորդը։ «Ահա քեզ երեսուն գինէ։ Բայց ձիանք, ձիա՛նք, ինձ պարտ է շտապել»։

Ընծաները թէեր տուեց ախոռի սպասաւորներին և ձիավարներին։ Մի ակնթարթի մէջ չորս որձ ձիեր լծուած էին սայլի մէջ և նոյնչափ կառաղի արագութեամբ վազեց սայլը դիշերային խաւարի միջով։ Լուսաբացից յառաջ, ճանապարհորդը ներս մտաւ Դուվրի մէջ, շտապեց դէպ ի նաւահանգիստը, վարձեց ծանր արծաթով մի շոգենաւակ, որ կարող էր իսկոյն ճանապարհ դուրս գալ, հրամայեց իւր կառքը և կապոցը տեղաւորել նորա մէջ և դուրս գնաց դէպ ի ջրեղէն անապատը։ Մի խաւար ժպտումն պայծառացրեց ճանապարհորդի խաւար կերպարանքը, երբ որ մեծ թիակաւոր անիւները սկսան վեր ի վայր փորել ջուրը և նաւը ծուխ արագութեամբ թրթռչումէր ալիքների վերայից։

«Այսաւնէր, երբ է գալոց շոգենաւը ճանապարհ ընկնում դէպ ի Եւրոպայի ցամաքահողը», հարցրեց նա։

«Ո՛չ յառաջ կէսօրից, մայ Լօրդ», պատասխանեց նաւավարը։

«Լաւի՛ է, շա՛տ լաւի», շշնջեց ճանապարհորդը հաճելցած։ Մի՛ խըներէք ածուխը և մեքենան, պարոն։ Ինձ պիտոյ է շտապել, ես առատութեամբ կը վարձատրեմ ձեզ։ Քանի ժամ կարող էք ուելի վաղ հասանել նաւահանգստին, քան թէ մեր քամակից եկող նաւը»։

«Տասներկու ժամ ուելի վաղ, մայ Լօրդ, եթէ ամենայն բան յաջող գնայ»։

«Ընտրէ՛ք, տասնեւերկու ժամ, և ես կը կրկնապատկեմ ձեր տասնեւչորս վարձը։ Շուտո՛վ, պարոն — ամեն մի ժամը ոսկի արժէ ինձ»։

Նաւավարը զարմացած նայումէր իւր ճանապարհորդի վերայ — բայց ոսկու շողշողիւնը արեց և նորա վերայ իւր ներգործութիւնը։ Նա խոնարհեցրեց իւր գլուխը, ապա ցած վազեց դէպ ի կրակատեղը, տուեց մի քանի պատուէրներ և հնոցի վառողը նոր ածխակտորներ ձգեց կրակի մէջ շոգեղէն կաթսայի տակ։ Շատ չանցաւ, և ահա՛ երևեցաւ ներգործութիւնը։ Մեքենան աշխատութեամբ կատաղի սաստկութեամբ, անիւները թռչտէին, աւլիքները փրփրոտէին, նաւը կրկնապատիկ արագութեամբ ճանապարհ էր կտրում խուոված, դէպ ի նաւի առաջակողմը վեր ցայտող ջրի միջով։

«Մ՚եք ոչ թէ տասնևւոթ, այլ քսան ժամ աւելի յառաջ կ՚երթանք, եթէ հաշիւ ձգենք երկրորդ նաւի ուղևորութեան յապաղանքը», ասաց նաւավարը իւր ճանապարհորդին։

«Հ՚ա՛տ բարի, տէր իմ», պատասխանեց ճանապարհորդը։ «Ձեր վճռասը լինելու չէր, եթէ ինձ շուտով տեղ հասուցանէք»։

Իրրև հրեղէն սուրհանդակ, կատաղի շտապողութեամբ թռչտէին շոգենաւը փայլուն ջրերէն տափարակի վերայ և գոլորշիղէն ամպերը, որ նորա ծխահանից արձակվումէին, թողէց շատ հեռի իւր քամակում՝։ Աւելի և աւելի պայծառանումեր երեսը ճանապարհորդի, որ մի հեռացոյց ձեռքում՝ ստէպ ստէպ քննումեր ծովի երեսը իւր չետքում և հաճութեամբ տրորումեր ձեռները, եթէ չէր նկատում ոչինչ բան, որ կարող էր հոգսի մէջ ձգել նորան։ Բոլոր միւս նաւերը, որ հաւասար ուղղութեամբ նաւում էին, յետ ընկան և մի քանի րոպէից յետոյ մնացին շատ հեռի նորա քամակում՝։ Ինչպէս ծիծեռնակի թեթև թռիչքը արհամարհումէ օդի ընդդիմութիւնը, նոյնպէս նաւը արհամարհումեր ալիքների ընդդիմութիւնը և արագութեան մասին վիճումեր դլխիվեր հետ, որ խաղալով պտոյտումեր պայծառ ջրերի մէջ։ Նաւաստիքը օտար նաւերի վերայ, որոց մօտից անցանում էր շոգենաւը, ապշութեամբ նայումէին այս նորանշան տեսիլքի վերայ. բայց հաղիւ թէ կարող էին նորա իւրեանց հիացքից ղգաստանալ, և ահա՛ շոգենաւը անցել էր և գոլորշիքի թևերի վերայ չքացել էր աչքից։

Ընդմէջ, մայրական սէրը արա՛գ էր — բայց դորանից էս առաւել արագ երևումեր չար խղճի տիպանքը, ահ ու դողը, մի գուցէ մերկացուէր մի նայտառակ յանցանք, այն անամօթ ագահութիւնը, որ չկամէր թողուլ ձեռքից իւր յարիշտակած կողոպուտը։

Ա՚նանապարհորդը — հազիւ թէ հարկաւոր էր այս տեղ նորա անունը տալ — էր Լօրդ Արթուր Ուիլֆօրդ, Լէդի Ուիլֆօրդի սկեսրարը, որ իւր եղբօր մահուանից յետոյ և զինի փոքրիկ Ուիլհամի անյայտանալուն ստացել էր ճոխ ժառանգութիւնը, յարիշտակելով մանուկից։ Նա էր եղած, որ մանուկը գողացել էր նորա մօրից և ծածուկ բերել էր Անգլիայից դէպ ի Հելվետիա, որ այս տեղ բարձի թողն առնէ նորան չքաւորութեան, թշուառութեան և մոռացութեան մէջ։ Նա կարծել էր, որ իւր խաւար գործը երբէք ընկնելու չէր յերեկի լուսի տակ, այն չար սերմը, որ ինքը ամբարիշտ ձեռքով սերմանել էր, երբէք ծլելու չէր և յառաջացնելու մի ահաւոր հունձ։ Տարիներ, երկար տարիներ եկել ու գնացել էին և նորա յոյսերը

ունայնացրել չէին։ Եւ ահա, ինչպէս մի կայծակ կապուտակ երկնքից, զարկեց նորա պլեխին նկարչի յայտնագործութիւնը։ Այնքան երկար միջոց անբաղդացած մայրը ճանաչեց իւր զաւակը — նա պիտի գտանէր նորան — քօղը, որ ձգած էր այն խայտաւուկ գաղտնիքի վերայ, պիտի վերացուէր — յանցաւորը պիտի ընկնէր դատաստանի և պատժի տակ։

Այս բոլորս պարզուս պայծառ դրած էր Լօրդ Ուիլֆօրդի հոգու առաջև, երբ որ նա ծածուկ լօրդ Սէյմուրի փառաւոր սենեակներից հեռացաւ և վերադարձաւ դէպ ի տուն։ Ո՛նչ պիտի առնէր, ի՛նչ հնարք գործ պիտի դնէր, որ խափանէր մի նախատական գործի հրատարակութիւն, որ մշտնջենաւոր ամօթով նշաւակելու և ստիպելու էր նորան դուրս տալ յաւիշտակած գոյքը օրինաւոր ժառանգին։ Միայն մի նոր, է՛ս աւելի սև յանցանք, քան թէ առաջինն էր, կարող էր փրկել նորան, և Լօրդ Ուիլֆօրդը այս յանցանքից չսարսափեցաւ։

«Այդ մանուկը պիտի մեռանի — չքանայ, յառաջ քան թէ մայրը կը հասանէր նորան!» Այս էր այն խաւար խորհուրդը, որ լցուցանուկեր նորա հոգին, երբ որ նա զգաստացել էր այն ապշութենից, որոյ մէջ ընկղմել էր նորան նկարչի զարմանալի յայտնագործութիւնը։ Ով որ առաջին քայլափոխն արել է, ով որ մի յանցանք գործել է, նա փոքր կը պատահի, որ յետ ինախչի երկրորդ յանցանքից։ Լօրդ Ուիլֆօրդը մտածեց, կշռեց, կրկտեց։ Շատ հեշտ էր նորան խելամուտ լինել, որ մայրը անյապաղ ուղևորուելու է դէպ ի Հելվետիա, որ իւր կորուսած զաւակը սեղմէ իւր մայրական սրտին։ Նա պիտի աւելի շուտափոյթ լինէր, քան թէ մայրը, նա պիտի նորա առաջքը կտրէր, նա պիտի իւր գործի վկան վերացնէր։ Այդ րոպէին հրամայեց նա ձիանք բերել, մի ոսկելից արկղ տեղաւորեց սայլի մէջ, և մինչ յուսալից մայրը իւր սաստիկ խռոված սրտի դղրդման հետ պատերազմումէր, արդէն յանցաւորի սայլը թռչումէր դէպ ի Գուվը ճանապարհի վերայ։

«Ամենայն բան գնումէ յաջողութեամբ», շշնջեց նա, երբ որ Գերմանիայի եղերքը, մառախլով պատած, դուրս երևեցան ծովից։ «Ես տասն և ութ ժամի ճանապարհով յառաջ եմ. ես կը կրկնապատկեմ այդ յառաջընթացութիւնը, օր ու գիշեր ճանապարհորդելով և ձիավարների ծոցը ոսկով լցուցանելով։ Ուրեմն երեսուն և երկու ժամի ճանապարհով յառաջընթաց կը լինիմ։ Մանուկը կորած է և նորա մայրը ոչինչ գտանելու չէ նորանից, բայց միայն մի ջարդուփշուր եղած դիակ մի անդունդի մէջ։ Բաղդը իմ հետ է, և ես չկամիմ լինել այնքան յիմար, որ օգուտ չքաղէի նորանից»։

Հոգենաւը առանց ձախորդութեան հասաւ Գերմանիայի ծովեզերքին։ Լօրդ Ուիլֆօրդը վճարեց նաւավարին, նաւաստիներին ձգեց մի բուռն ոսկի, հրամայեց բերել արշաւող ձիանք և շտապեց դէպ ի յառաջ։ Ոսկին և այս տեղ դարձեալ հրաշքներ գործեց։ Աւելի մօտ և մօտ գլորվումէր կորուստը անբաղդ Վիլլիու, որ տանը, իւր հելվետիական ձորի մէջ երբէք գուշակում չէր թէ ինչպէս մօտ էր նորան ամենավերին բաղդը, բայց և ինչպէս մօտ կախուած էր կորուստը նորա անմեղ գլխի վերայ։

Խաւար, ահաւոր և անփախչելի էր երևոյմ կորուստը։ Լօրդ Ուիլֆօրդը խստացուցել էր իւր սիրտը ընդդէմ ամենայն գթութեան, ընդդէմ ամենայն ցաւակցական շարժողութեան, նա մտքումը դրել էր իւր խաւար գործը մի խաւար ձեռնարկութեամբ պսակել։ Նախատինք, միտնջենաւոր ամօթ և մուրացկանի գաւազան վճճակուելու էին նորան, եթէ նա չկամեր յառաջ գնալ յանցանքի շաւղի վերայ։ Եթէ չքանար մանուկը, նա ապահով էր։ Ի՞նչ էր նորա աչքումն կեանքը մի մանուկի, որ նորան ի ծնէ անտի ատելի էր։ Նորա մահը պիտի մի անթափանցելի քօղ ձգէր անցած ու գնացածի վերայ. նորա մահը պիտի լաց դարձուցանէր յաւիտականի գլխից հրատարակութեան նախատինքը. նորա մահը պիտի ապահովէր նորա ձեռքումն հարստութիւն, արտաքին փառք և արտաքին պատիւ։ Բայց թէ այդ չարագործութենից յետոյ ինչպէս կը լինէր նորա խիղճը, թէ ինչպէս պատասխանատու կը լինէր Աստուծոյ առաջև, որ նա մի անմեղ մանուկի, մի անմեղ մօր կեանքի լաղդատորութիւն ոչնչացրել էր — այդ փոյթ չէր Լօրդ Ուիլֆօրդին։ Նա հետևումէր միայն անձնապահպանութեան, ագահութեան և ատելութեան ախտին։

Մի օր մի սալ չորս, քրտնքի մէջ կորած ձիերով լծած, դադարեցաւ Հիւրանոցի մօտ, ուր սովոր էին ժողովուիլ ալպեան սարերի ուղեցոյցները։ Ահա էր Լօրդի ճանապարհորդական սայլը, և Լօրդը դուրս եկաւ և հարցրեց մի ուղեցուցի մասին, որ կարող էր նորան տանել դէպ ի Ուրի վտակը։ Մի խաւար հաճութիւն տպաւորուած էր նորա երեսի վերայ։ Նա յառաջընթաց էր եղել — Լէդի Ուիլֆօրդը կարող չէր գալոց օրի երեկոյից յառաջ տեղ հասանել, որովհետև դժուար թէ անդադար ճանապարհորդած կը լինէր գիշերով, ինչպէս ինքն էր արել։

Եկաւ մի մարդ և առաջարկեց նորան իւր սպասաւորութիւնը իբրև ուղեցոյց. Լօրդ Ուիլֆօրդը կնջռեց ճակատը։ Նա յուսացել էր, թէ այն մանուկը մի հատ ուղեցոյցն էր լինելու դէպ ի Ուրի վտակը, ինչպէս եզրակացուցել էր նկարչի պատմութենից։ Սակայն նա թաքցրեց իւր տհաճութիւնը մի մեայլ դէմքի յետքում և հարցրեց թէ ուր էր Վիլլէ Շաֆրինգերը։

«Ո՛չ այս տեղ չէ, իմ պարոն», ասաց Հիւրանոցի տանուտէրը։ «Նա, ընակումէ աւելի հեռի, այն տեղ, ձորումը»։

«Այդ ինձ պատմել են, թէ նա մի հատ ապահով ուղեցոյցն էր դէպ ի ջուվէժը», պատասխանեց Լօրդը։ «Աստմեն, ճանապարհը, որ տանումէ դէպ ի այդ տեղ, շատ վտանգաւոր է, և ես չկամիմ իմ կեանքը ամեն մարդու հաւատալ»։

«Չ'անապարհը չէ այլևս այնպէս վտանգաւոր, ինչպէս նա էր, իմ պարոն», պատասխանեց տանուտէրը։ Վտանգաւոր տեղումը, ուր առաջին միջոցներում պիտոյ էր մի անդունդի վերայից քայլափոխ առնել, այժմ շինած է մի կամուրջ, թեպետ արդարև մի քանի ծառաբուներից, բայց ամուր և բաւական պինդ, որ չկար այսուհետև ոչինչ վտանգ»։

Լօրդ Ուիլֆօրդը խորասոյզ եղաւ մի մտախոհութեան մէջ. «Այո՛», ասաց նա ուղեցուցին, ես կամիմ փորձ փորձել ձեր հետ, յառաջ ընկէք»։

Ուղեցոյցը պատրաստ էր, և մի բաղմաժամեայ ճանապարհորդութենից յետոյ Լօրդ Ովիլֆօրդը հասաւ այն տեղին, ուր նկարիչ Աւգուստինը առանց վխլլելու զգաստութեանը և աջողակութեանը կորուսած կը լինէր իւր կեանքը և նկարների պահարանը։ Նէղ ճանապարհը ապառաժի պատի մօտից դեռ ևս անփոփոխ էր, բայց այն տեղ, ուր պիտոյ էր թեքուիլ անկիւնի մօտից և առաջին միջոցներում քայլափոխ լինել, կոկորդը բաց անդունդի վերայով, դրած էին մի քանի կոպիտ և անարուեստ տաշած ծառաբունների պարսպով պատած, այնպէս որ այժմ՝ առանց որ և իցէ վտանգի և դժուարութեան կարելի էր անց կենալ։

Լօրդ Ովիլֆօրդը խաւար հայեացքով քննութեր այն նեղ անցքը ապառաժի մօտից, կամուրջը և ահաւոր անդունդը գլուխ պտտեցնող խորութեան մէջ։

«Ես այդ տեղից պէտք էր մեզ անցանել, ջըվէժին հասանելու», հարցրեց նա։

«Այո՛, տէր», պատասխանեց ուղեցոյցը։ «Ճանապարհը ապառաժի պատի մօտից արդարև չէ շատ գրաւիչ և երևումէ բաւական վտանգաւոր— բայց ձեզ չկայ երկիւղի տեղիք, եթէ միայն կամիք չորս թաթերի վերայ սողալով անցանել, ապա իմ կեանքովս երաշխաւոր եմ՝, որ ձեզ անվտանգ անց կը կացնեմ»։

Լօրդ Ովիլֆօրդը շարժեց գլուխը։ «Ո՛չ», ասաց նա — «իմ կեանքս շատ սիրելի է ինձ, քան թէ կարող էի վտանգի տակ դնել նորան մի ջըվէժի պատճառով։ Աւելի լաւ էր ինձ ճանապարհորդել դէպ ի Շոէմըլի քաղաքը — ճանապարհը դէպ ի այն տեղ ծանօթ է ինձ և ինձ հարկաւոր չէ աւելի քան ուղեցուցութիւնը։ Ահա քո վարձը — գնա»։

«Այոյ, պարոն, եթէ կամիք փորձ փորձել — արդարև վտանգ չկայ»։

«Ինչ այլևս այդ մասին, մարդ ջա! Դու կ'երթաս դէպ ի հիւրանոցը և կ'ասես տանուտիրոջը, թէ ես գուցէ եղուց կը վերադառնամ այն տեղ։ գնա — ինձ հարկաւոր է հանգիստ և ես կամիմ միայն լինել»։

Ուղեցոյցը, թէև նորան զարմացուցել էր օտարականի խորթ ընթացքը, չհամարձակուեցաւ հակառակ խօսել, այլ հեռացաւ, շատ գոհ այն աստատ վարձովը, որ տուել էր նորան օտարականը։ Լօրդ Ովիլֆօրդը հանգըստացաւ ապառաժի վերայ և մնաց անշարժ, մինչև ուղեցուցի կերպարանքը անհետացած էր հեռակայքումը։ Այնուհետև վեր կացաւ նա, մօտեցաւ նեղ ապառաժեայ շաւղին, չորեց ծունկերի վերայ, աներկիւղ չորս թաթերի վերայ սողաց դէպ ի կամուրջը, որին և հասաւ առանց ձախորդութեան։ Հասանելով վտանգաւոր շաւղի վերջին, որ այս տեղ ընդարձակվումէր կազմելով մի աւելի լայն ապառաժեայ տափարակ, վեր ուղղեց իւր անձը և մի առանձին ուշադրութեամբ քննեց այն տկար փայտաշէնքը, որ թեքուելով տանումէր դէպ ի միւս կողմնան տափարակը։ Մանրամասնութեամբ քննեց նա դորա հիմքը, զօրաւոր բազկով ցնցեց նա ծառաբունները և ժպտեցաւ մի չարագուշակ դէմքով, երբ որ դրա առաջին շարժողութեամբ իսկոյն խախտուեցան իւրեանց տիրութենից։ Նա, երևումէր, որ-

պէս թէ առաջին կայքի մէջ բերեց կարիքն վայտաշէնքը, դեռ ևս մի քանի րոպէ քննեց իւր արարքը և ապա նեղ ապառաժեայ շաւղովը դարձաւ դէպ իւր առաջին տեղը։

«Ո՛վ ենայն ինչ լսարի է», մտմտաց քթի տակին։ «Իմ գնացքս անօգուտ չեղաւ։ Մի զարկ և ահա կամրջի վայտաշէնքը կը կործանուի, և ոչ ոք կարող չէր ասել, թէ ես էի պատահական ձախորդութեան պատճառը։ Այժմ դէպ ի յետ, և Վիլլի Շաֆրինգերը պիտի լինի իմ ուղեցոյցս»։

Դարձեալ մի հայեացք, որով հետ կրկին էր մի խորթ ժպտումն, ձգեց կամուրջի վերայ և յետոյ արագ ու վճռական քայլերով ճանապարհ ընկաւ դէպ ի ձորը, ուր դրած էր խաղաղութեան և հանգստի մէջ Պետրոս Շաֆրինգերի խուղը։ Այծերը մեն էին գալիս մերձակայ ապառաժների վերայ, երբ որ նա տեղ հասաւ և խուղի մօտակայքում նստած էր մի գօրեղ, գեղեցիկ մանուկ մի քարաժայռի կտորի վերայ և քանդակումեր մի կտոր փայտ, երգելով կիսաձայն մի զուարթ եղանակ։ Լօրդ Ուիլֆօրդը մի քանի րոպէ ընդեց մանուկը և գոյնը երեսից թռաւ։ Այո՛, սա նա էր։ Այս հոգիս մանուկն էր նկարչի պահարանի մէջ եղած պատկերի նախատիպը — Այս մանուկն էր յաւիտեանական երեխան, էր Լօրդ Ուիլֆօրդի եղբօրորդին, էր Ուիլիամը, հարազատ Լօրդ Ուիլֆօրդը — և նորա առաջին կանգնած էր նորա յաւիտենական, իւր հօրեղբայրը, խաւար ու արիւնոտ խորհրդներով։

Լօրդ Ուիլֆօրդը կարող չէր երկրայել։ Այսպէս էր եղել իւր եղբօր տեսքը մանկութեան միջոցին. սոքա էին նորա երեսի գծագրութիւնքը, նորա աչքերը, նորա կակուղ մետաքսեայ մազերը։ Եթէ մայրը գար, իսկոյն պիտի խոստովանէր նորան իւր որդի։ Եւ նա մտածումեր արդէն, կարող էր արդէն միւս օրին այն տեղ լինել — ուրեմն պիտոյ էր գործ դնել ժամանակը։

Լօրդ Ուիլֆօրդը ժողովեց իւր զօրութիւնքը և ձայն տուեց մանուկին։ Նորա ձայնը հնչումեր կոշտ և կերկերուտ — այնու ամենայնիւ Վիլլին իսկոյն վեր թռաւ տեղից և հարցրեց, թէ ինչ էր հաճոյ պարոնին։

«Դո՛ւ ես Վիլլի Շաֆրինգերը, ուղեցոյցը դէպ ի Ուրի վտակը», հարցրեց Լօրդը։

«Այո՛, տէր, ես եմ»։

«Խարի՛ է. տա՛ր ինձ այն տեղ — ես լաւ վարձ կը վճարեմ քեզ»։

«Խայց, տէր, արևը խոնարհումէ արդէն դէպ ի մուտք» — պատասխանեց Վիլլին. «մեզ հարկաւոր է երեք ժամ այն տեղ հասանելու համար և վեց ժամի մէջ արդէն գիշեր է։ Ձկամիք մնաւանդ սպասել մինչև էգուց առաւօտ։ Իմ հայրս յօժարութեամբ տեղ կը տայ ձեզ իւր խուղում»։

«Ո՛չ, տղայ, ես շտապումեմ և չեմ կարող սպասել», պատասխանեց Լօրդ Ուիլֆօրդը։ «Ես կը վճարեմ կրկնապատիկ վարձ ձեր ուղեցուցութեան համար — բայց եթէ դու չկամիս լինել իմ ուղեցոյցս, ապա կ'առնում մի այլ ուղեցոյց»։

«Ո՛չ, տէր, դուք կարօտ չէք այլ ուղեցուցի», ասաց Վիլլին։ «Իմ դիտաւորութիւնս բարի էր, որ ես ձեզ զգուշացնումէի։ Ինձ բոլորը միև է, ար-

դեօք յերեկով Թէ գիշերով ճանապարհորդուածէն. պրէ մեք ունինք լուսնակ գիշեր։ Այժմ՝ որպէս կամիք — ես պատրաստ եմ»։

«Արեմն յառաջ գնանք, յառաջ», ստիպումեր Լօրդ Ուիլֆօրդը։ Րոպէքը Թանգագին են։ Ես կամիմ մի քանի րոպէ յառաջ գնալ, մինչև դուկը բերես քո բաները։

«Ինձ ոչինչ հարկաւոր չէ, բայց ի մի ալպեան գաւազանից, տէր, ես իսկոյն դարձեալ կը լինիմ ձեր մօտ», խօսեց մանուկը և Թռաւ դէպ ի խուղը, մինչ Լօրդ Ուիլֆօրդը վերստին ոտք կոխեց մի փորը յառաջ լցուցած ճանապարհի վերայ։ Մի քանի րոպէ յետոյ Վիլլին դարձեալ նորա կողքին էր և զուարթութեամբ քայլումեր կոշտ ապառաժեայ շաւիղների վերայ։

Վ Իլլին սիրումեր զուարճ և քաղցր խօսակցութեամբ կարճացնել ժամանակը ճանապարհորդների համար։ Եւ դէպ ի իւր այժմեան ուղեկիցը շատ անգամ ուղղեց նա իւր խօսքը, դարձուց նորա ուշադրութիւնը ճանապարհի գեղեցկութեան վերայ և նկարագրեց նորան փառաւոր ջրվէժի հոյակապ տեսարանը, որին նա շուտով լինելու էր ականատես։ Բայց Լօրդ Ուիլֆօրդը չունէր ոչինչ պատասխանի այդ աղնիւ մանուկի համար, եթէ ոչ մի Թթուած այո և ոչ, կամ Թէ մի խաւար դէմք, որ վայրենի և մռայլ հայեացքով դադարումեր մանուկի րոպ, գեղեցիկ և անմեղ երեսի վերայ։ Վիլլին տհաճութեամբ նկատելով այս խորթ արարոյ լռութիւնը և չար, չար տպաւորութիւնը օտարականի երեսի գծագրութիւնների մէջ, և ինքը լռեց և անխօս քայլումեր իւր ուղեկցի մօտից։

Յետոյ ու կէս ճանապարհից յետոյ նորա հայեան այն նեղ ապառաժեայ ճանապարհին, ուր պիտոյ էր բոլոր չորս Թաթերի վերայ սողալ։

«Այս տեղ մի փորը զգաստ եղիք, տէր, անդունդը շատ խոր է»։

«Այո՛, այնքան խոր, որ կարող էր լինել մի անելանելի գերեզման», պատասխանեց Լօրդ Ուիլֆօրդը արհամարհական ժպտմամբ։ *«Միայն յառաջ գնա, տղայ։ Ես գալիս եմ քո հետևից։*

Բայց զգոյշ կացէք, տէր», ասաց Վիլլին։ *Սա է մի հատ վտանգաւոր տեղը բոլոր ճանապարհի վերայ, և եթէ հասանք կամրջին, այնուհետև բոլորը վերջացած էր»։*

«Այո՛, այո՛, այնուհետև ի հարկէ բոլորը վերջացած էր», պատասխանեց օտարականը։ *«Միայն Թէ յառաջ գնա»։*

Վ Իլլին չդադարեց։ Հեշտ և աղօրակ սողաց նա նեղ շաւղի վերայով և մնաց կանգնած կամրջի մօտ, որ սպասէ իւր ուղեկցին, որ կամաց կամաց հետևումեր նորան։ Եւ սա առանց ձախորդութեան անց կացաւ և քննողական աչքով նկատումեր տկար կամուրջը, որ ձգվումեր անդունդի վերայով դէպ ի միւս կողմը։ Մի վայրենի յաղթողական վստահութիւն փայլատակումեր նորա աչքերից, դրոշմած էր նորա պլանդակուած դէմքի վերայ։

«Պէտք է մեզ անց կենալ այս կամրջի վերայով», ասաց նա երևութական երկմտութեամբ։

«Լա՛յ, տէր. բայց նա բաւական ամուր է, և համարձակութեամբ կարելի է քայլել նորա վերայով»։

«Փորձիր, ես վստահ չեմ այդ կամուրջի մասին»— ասաց Լօրդ Ուիլլոբիդը, ծածուկ արհամարհութեամբ։

Վիլլին արդէն բարձրացրել ոտը, որ կոխէ կամրջի վերայ, և ահա լսեց նա հեռուից մի աղաղակ, որ ամեն մի րոպէ երևումէր, թէ աւելի մօտենումէ։ Վիլլին դադարեցաւ և ականջ դրեց։

«Լա՛յ ի՞նչ բան է», հարցրեց նա։

«Ի՛նչ պիտի լինի այդ», պատասխանեց օտարականը։ «Ի՛նչ փոյթ է քեզ. յառա՛ջ, յառա՛ջ գնա։ Մեք կորուսանելի ժամանակ չունինք»։

Դարձեալ լսուեցաւ աղաղակը մի զգուշացուցիչ ձայնի պէս, կոշտ ապառաժների միջնական անապատի մէջ։ Դարձեալ յապաղեց Վիլլին — բայց Նորա ուղեկիցը սաստիկ բառերով ստիպումէր Նորան և Վիլլին տեղէք տուեց վերջումը, համարձակաբար ոտք կոխելով կամրջի վերայ և անցանելով դէպ ի միւսակողմեան ապառաժի տափարակը։

«Տեսէ՛ք ահա՛ տէր, կամուրջը անվտանգ է»», ասաց նա, կանգնած մինալով Նորա մէջ տեղումը և երեսը շրջելով դէպ ի իւր ուղեկիցը։ «Տէր իմ Աստուած, այս ի՞նչ է», յաւելացրեց նա զարհուրած դէմքով, երբ որ նկատեց Լօրդ Ուիլլոբիդի վայրենի, պլանդակուած և գարշելի երեսը։

«Վրէս մահն է այս», որոտաց Լօրդ Ուիլլոբիդը արհամարհաբար ծիծաղելով — և բարձրացրեց ոտը — և մի հատ զարկով դուրս նետեց կամուրջը իւր տեղից, և ճայթելով, թնդալով, այս տեղ ու այն տեղ ապառաժի վերայ ջարդ ու փշուր լինելով կործանուեցաւ կամուրջը անդունդի անքննելի խորութեան մէջ։ Աւելի մի հատ աղաղակ անբաղդ մնուկի բերանից — սաստկաձայն և սիրտ պատառող — դղրդեց օդը — յետոյ վերջին ճայթիւնը և խորտակումը ներքևից դէպ ի վեր — այնու հետև լռեց ամենայն բան։

Լօրդ Ուիլլոբիդը, սպանողը, շրջեց քամակը դէպ ի անդունդը և յետոյ նեղ ապառաժեայ շաւղի վերայով։ Առանց ձախորդութեան հասաւ գլուխ պտուտնող գնացքի մէջ տեղին, թէև նորա անդամը դողդողում և մի խաւար թաղուղ երևումէր կախուած նորա աչքի առաջև։ Այնպիսի երկաթի ամուր թիւն չունէին նորա ջիղերը, որ իւր սարսափելի գործից չդողդողէին սաստկապէս։ Կամրջի որոտագին թնդիւնը, ամբոխալից կերպով սպանած մնուկի սաստկաձայն աղաղակը հնչումէր տակաւին նորա ականջում — և այժմ մի նոր վայրենի աղաղակ միւս կողմից — «սպանո՛ղ, վատթա՛ր, գարշելի՛ սպանող»։ Անհանգստացած դէպ ի վեր նայելով, տեսանումէ Լօրդ Ուիլլոբիդը երեք կերպարանք վերևումը, երեք կերպարանք, իբրև վրէժխնդիր պատժամուղք դատաստանի, Լէդի Ուիլլոբիդը, նկարիչ Աբգուստինը և Պետրոս Շաֆրինգերը, հոգեպարձու հայրը անբաղդ, դատաճանուած մնուկի։

Սարսափ ըմբռնեց սպանողի սիրտը — տագնապ, ահաբեկութիւն, երկիւղ, մի գուցէ յայտնուի իւր ամբոխալից գործը, գրե՛թէ ուշը խլեցին

նորա վերայից — փախուստ, փախուստ վրէժխնդիրների երեսից, էր նորա միակ մտածութիւնը — շտապով չետ քարշուեցաւ — կամեր վերադառնալ նեղ շաւղի վերայ — դողդոջուն ձեռները սխալուեցան — թուլացած ծունկերը կորուսին իւրեանց հաստատութիւնը — մի զարհուրելի աղաղակով սոյթաքեց ապառաժից — դեռ ևս մի րոպէ երկու ձեռքով կծկուած ամրացաւ ափուսը — ցոյց տուեց զարհուրած նայեցողներին իւր զարհուրած, այլանդակուած, մահու դեղնութեամբ պատած երեսը — այնուհետև մատերը սահեցան տեղից — և ցած, ցած կործանուեցաւ նա դէպ ի անդունդը մի վերջին ահարկու յուսահատական աղաղակով, որ զարհուրելի ձայնով հնչեցրեց կարծր ապառաժեայ սարերը։

Լ֊էդի Ուիլֆօրդը սիրտը թուլանալով ընկաւ նկարչի գիրկը։ Բայց պետրոս Շաֆրինգերը երբ որ գոյնը թռած երեսով խոնարհեցաւ ապառաժի ափի վերայ, որ նայէ անբաղդացածի քամակից, որ անհետ չքացած էր խորքի մէջ, խօսեց հանդիսաւոր ձայնով. «Տէր Աստուած երկնքում, այդ էր քո դատաստանը»։—Ցանկարծ ձայն արձակեց նա — բայց դա չէր զարհուրանքի, այլ մի ուրախութեան ցնծագին ձայն, որ եկաւ նորա շրթունքի վերայ։ «Վիլլի, իմ Վիլլի», ձայն տուեց նա։ «Ողորմած առատաշնորհ Աստուած, դու փրկել ես նորան»։

«Լ֊էյ՛, առ ի սրտէ սիրելի հայր», դէպ ի վեր հնչեց խորքից։ «Ես փրկուած եմ այնպէս, ինչպէս բարի մարդ Աւգուստինի նկարների պահապանը, որ Թուփերի ճիւղերի վերայ այս տեղ մնացել էր կախուած։ Մի րոպէ ևս, և ահա կը լինիմ ես քո մօտ»։

«Վիլլին փրկուած է», ցնծաց Աւգուստինը։ «Ով Բաղդատոր մայր, աչքդ բաց արա, քո երեխան պահպանուել է քեզ։ Վիլլի, Վիլլի, իմ աղնիւ մանուկ, արի՛ այս տեղ»։

Վիլլին եկաւ — ժպտելով դէպ ի վեր հանեց իւր վարդակարմիր երեսը խորքից և մի րոպէ յետոյ կանգնած էր իւր հոգաբարձու հօր մօտ և ուրախութենից ճառագայթուած դէմքով տուեց ձեռը նկարչին, իւր հին ծանօթին, մինչ զարմացած նայումէր տակաւին սիրտը թոյլ Լէդիու վերայ։

«Լ֊էդ ինչ բան է, դուք ինչպէս էք եկած այս տեղ», հարցրեց նա։

«Յետոյ, յետոյ կ'իմանաս», ասաց Աւգուստինը բաղդատոր ժպտմամբ, «Այժմ պատմիր ինձ, թէ ինչպէս փրկուեցար դու մահուանից»։

«Ամենևին պարզաբար, Աստուծոյ առատաշնորհ օգնութեամբ» պատասխանեց Վիլլին։ «Ես կանգնած էի կամրջի վերայ, տեսայ օտարականի սպառնալից, չար երեսը, տեսայ որ նա ոտով զարկելով դէպ ի անդունդը խթեց կամուրջը. իսկ ես փրկեցի իմ անձը այծեամի պէս թռչելով ապառաժի տափարակի վերայ, ուր միանգամ ձեր նկարների պահարանը մնացել էր կախուած։ Մի երկու րոպէ հարկաւոր էր ինձ զգաստանալու իմ ահաբեկութենից, և այդ տեղ նկատեցի ես այն գարշելի մարդու ցած կործանուիլը խորքի մէջ։ Աստուած գիտէ, թէ ինչու այդ մարդը այդպէս չարամիտ էր դէպ ի ինձ։ Ես ոչինչ վատութիւն արել չեմ նորան»։

«Հաւատամ է, Վիլլի, իմ աղնիւ մանուկ. դու վերահասու կը լինես

բոլորին», ասաց նկարիչը։ «Այժմ հեռացիր մի փոքր։ Լէդին ժողովուածէ իւր ոգիքը, և նորան պիտոյ չէր իսկոյն տեսանել քեզ։ Ո՜հ, նա բացուածէ աչքը. փառք Աստուծոյ. Լէդի Ուիլֆօրդ, քաջ կացիր», յաւելացրեց նա անգլիական լեզուով։ «Այլևս վտանգ չկայ և ամենայն բան յառաջ է գնում յաջողութեամբ»։

«Ո՛վ Աստուած — բայց Ուիլլիամը, իմ զաւակս»։

«Փրկուած է նա, մայ Լէդի. փրկուած է նա Աստուծոյ ողորմութեամբ»։

«Ո՞ւր է նա — ո՜հ.....» Մի անպատմելի երանութեան սրտաշարժ աղաղակ բարձրացրեց Լէդի Ուիլֆօրդը — և մի րոպէ յետոյ մայրը գրկախառնեց իւր զաւակը և նորա դողդոջուն շրթունքը դրոշմեցին հաղար քաղցր համբոյրներ Վիլլիս բերանի վերայ։ Լռութեամբ, աղօթելով, սիրտերը խոր շարժուած և երանացած կանգնած էին նոցա մօտ բարեպաշտ Պետրոս Շաֆրինգերը և Աւգուստինը, և արտասուքը աչքերում ականատես էին այս հոգեպայծառ տեսարանին, որ մի անբաղդացած մայր գտնում իւր կորուսած զաւակը — մի տեսարանի, որոյ երկնային երանութիւնը կարելի է գուշակել, բայց նկարագրել ո՛չ.....

Ինչ որ կը սերմանես, այն և կը հնձես։ — Լօրդ Ուիլֆօրդը թէև ամենայն բան ճիշդ հաշուել ու կարգադրել էր, սակայն մի բան մոռացել էր նա իւր անձնասիրական հաշուարարութեան մէջ, այսինքն, կարող, ամենայն բանի յաղթող մայրական սէրը դէպ ի իւր զաւակը։ Հաղիւ թէ մի ժամ անցած էր յետ Լօրդի ուղևորութեանը շոգենաւով, Լէդի Ուիլֆօրդը հասաւ Դուվը, որ նոյնպէս անցանէ դէպ ի Եւրոպայի ցամաքահողը։ Երբ որ նա հարց ու խնդիր էր առնում, թէ ի՞նչ նաւեր պիտի ճանապարհ ընկնէին, պատահմամբ տեղեկացաւ, որ մի փոքր յառաջ մի առանձնական ճանապարհորդ շոգենաւ էր վարձել, նոյն ճանապարհով ուղևորուելու, ինչպէս ինքը կամէր ուղևորուիլ։ Մի չար գուշակութիւն փայլատակեցաւ նորա հոգու մէջ — նա հարցրեց, աւելի տեղեկութիւններ հաւաքեց և շուտով բացայայտուեցաւ, որ իւր սկեսրարն էր այդ խորհրդաւոր ճանապարհորդը, որ ուներել էր մի այդպիսի շտապողութեան պատճառ։ «Նա ինձ յառաջընթաց է եղել, որ միւսանգամ յայտնակէ ինձանից իմ զաւակս»! Այս էր մտածութիւնը, որ զարթեցաւ նորա մէջ։ Մի շոգենաւ պատրաստ էր ճանապարհ ընկնելու դէպ ի Ֆրանսիա։ Նոյն րոպէին նաւամուտ եղաւ նա և փոխանակ ճանապարհորդելու Գերմանիայի վերայով, ուղևորուեցաւ կալէյի վերայով։ Աւգուստինը հոգաբարձու եղաւ, որ ամեն տեղ շուտով ձիանը ստացուին — ոսկին, որ նա լիք բուռներով ցանուեր, թևաւորեց ամենայն բան։ Նոքա հասան Հելվետիային, այն ծածկած ալպեան ձորը, Պետրոս Շաֆրինգերի խուղը։ Մի քանի խօսքեր բացայայտեցին ամենայն բան։ Վիլլին հաղիւ թէ կէս ժամ յառաջ մի օտարականի հետ գնացել էր դէպ ի Ուրի վտակը։ Մօր ահարկու դուշակութիւնը կրկնապատիկ սաստկութեամբ վերադարձան կրկին։ Ի՛նչ այլ մարդ կարող էր լինել այս օտարականը, քան թէ Լօրդ Ուիլֆօրդը, իւր սկեսրարը։ «Ո՛տք շարժիր, ի սէր Աստուծոյ, ո՛տք շարժիր», աղաչեց նա, որ մեք հասանենք նորան, պահ-

պանենք Նորան, փրկենք Նորան»։ Եւ Աւգուստինը ստիպուեր՝ ո՛չ աշխատութիւն, ո՛չ ճգնողութիւն, ոչ զաւ ի վեր սարերը բանի տեղ ձգելով, յառաջ էր դիմում քնքշասիրտ մայրը իւրև մի մատակ առիւծ, որից յափշտակել էին իւր ձագը։ Նորա թեթև կօշիկները պատառոտուեցան, նորա մետաքսեայ հանդերձը փշերից ծուատուեցաւ, նորա ոտերը ցաւումէին, արիւնով շաղախվումէին։ Ո՛չինչ էր այդ բոլորը նորա աչքում. յառաջ ու յառաջ էր շտապում նա։ Նորա երկիւղոտ ձայնարկութիւնը դէպ ի իւր սիրելի մանուկը, տարածվումէր ազդօլապէս հեռուումը — Վիլլիու սպանողը այո՛ լսումէր այդ ձայնը — նա կարողացած կը լինէր վերադառնալ — բայց Նորա ճակատագիրը քարշում տանումէր Նորան — նա պիտի հնձէր, ինչ որ սերմանել էր։ Լէդիու անկարծելի յայտնութիւնը առիթ տուեց կործանական գահավիժութեանը դէպ ի անդունդը։ Ինչ անբաղդութիւն կամէր նա պատրաստել մանուկին, նոյնը հասաւ Նորա գլխին։ Երկնքի արդարութիւնը հասաւ Նորան, գործը լցացանելուց յետոյ, և իւր մեղքերի մէջ կորաւ նա, որ Աստուծոյ աթոռի առաջ լսէ իւր դատակնիքը։

«Ա՜ւ նա մի՞թէ անպրկելի է», հարցրեց Լէդին։

«Անպրկելի», պատասխանեց Պետրոս Շաֆրինգերը։ Եւ ոչ իսկ Նորա ոսկերքը կը հանգստանան նուիրած հողի մէջ — Նորա կը լինին գիշատիչ թռչունների կերակուր — պատճառ, գուռ ևս ոչ մի մարդկային ոտք ջոջափել չէ այն անդունդքի յատակը։ Ինչ որ նա սերմանել էր, այն ևս հնձեց։ Աստուած ողորմի Նորա խղճալի հոգուն»։

Եւ Վիլլի՞ն։ — Ո՜հ, ինչպէս երջանիկ էր մանուկը, գտած լինելով մի մայր, մի այդպիսի հաւատարիմ, քնքուշ սիրով սիրող մայր։ Ի՛նչպէս երջանիկ էր նա, որ կարող էր նոյնպէս Էլֆին կացուցանել, երջանիկ կացուցանել Նորան, որ Նորան, իւրև անօգնական մանուկ, ընդունել էին իւրեանց խուղն և սրտի մէջ։ Թէպէտ Նորա բաղդաւորութեանն ևս չպակասեցաւ մի դառն կաթիլ. հրաժարումը բարեպաշտ Պետրոս Շաֆրինգերից և հաւատարիմ խնամարկու մօրից և իւր քոյրերից, որ ամենեքեան, ամենեքեան առ ի սրտէ սիրելի էին Նորան։ Բայց այս դառն կաթիլը քաղցրացաւ այն աներկմիտ յուսով, որ նա իւր սիրելի բարեկամքը այն փոքրիկ խուղն մէջ ամէն տարի վերստին տեսանելու էր և ամիսներով իւր մօր հետ կենակից կը լինէր նոցա։ Այս բանս խոստացաւ նա — և մինչև օրս հաւատարմութեամբ լցուցել է իւր խոստումը։

Ինչ որ կը սերմանես, այն ևս կը հնձես!

Երէկ դու, իմ ազնիւ ընթերցող, կը գաս միանգամ Հելվետիա և կը հասանես այն ձորին, ուստի ճանապարհը վեր է տանումէ սարերի վերայով դէպ ի Ուրի վտակը, ապա կը հանդիպի աչքիդ մի փառաւոր գաւիթ, մի մեծ, ընդարձակ տուն, վայելչապէս և ամուր շէնքով և հոյակապ քանդակներով զարդարած. դորա մօտ մի փոքրիկ, ընտանեկան խուղ հայելու պէս պարզ տպակի պատուհաններով — և շրջակայ մարգագետինների և սարաբլուրների վերայ ցրուած անթիւ կովեր և այծեր — և երէկ հարցանես. ո՞ւմէ պատկանում այս բոլորս, քեզ կ՝ասեն։ «Պետրոս Շաֆրինգերին և Նորա

գերդաստանին, ամենաբարեպաշտ և շատ քրիստոնեայ հռչակուած մարդերի»։ Իսկ եթէ դու կը տեսանես նոյն իսկ Պետրոս Շաֆրինգերը գեղեցիկ տան մօտ նստած պատուական տանտիկնոջ հետ միասին, քաղցր և սիրալից երեսով, ապա խնդրեմ ողջունել նորան ինձանից և միտ բերել այն խօսքը, որ գրած է. «Ինչ որ կը սերմանես, այն ևս կը հնձես»։ Այո՛, այո՛, Հայր Շաֆրինգերը մի բարի սերմէր սերմանել և պատուական պտուղներ է հընձել. մի պայծառ խիղճ, մարդերի հաւատարիմ սէրը և շնորհ տիրոջ առաջև։ Ամեն տարի Ուիլհամը, երիտասարդ Լօրդ Ուիլֆօրդը իւր մօր հետ միասին գալիս է Նորան տեսութիւն, և ասում էր շատ անգամ, թէ Նորա ամենագեղեցիկ օրերը են նոքա, որ նա անցուցանում էր այդ փոքրիկ սիրելի խուղի մէջ իւր հոգաբարձու ծնողների մօտ, ուր նա իւր մանկութեան միջոցին ապրել է այնքան գեղեցիկ, սիրալից, փառաւոր օրեր։

Ինչ որ կը սերմանես, այն ևս կը հնձես!

Նկարիչ Աւգուստինը, և մինչև այսօր իսկ, մնում Ուիլհու հաւատարիմ բարեկամը, և անզուգական փառաւոր պատկերներ նկարում նա — առաւել մեծ մասը արքայազն իշխանի համար, որ ոսկու կշռով գին է տալիս նոցա և նոցանով զարդարում իւր ապարանքի ամենաւիսաւոր սենեակները։ Բարձր պատուով ընդունուած ու մեծարուած է նա ամեններից, որ ծանօթ են Նորան և Նորա բաղդաւորութիւնը գրեթէ պակաս չէ նոցա բաղդաւորութենից, որոց օտարոտի պատահարին կիսով չափ մասնակից է եղած և ինքը։ Բայց ամենեքեան առ ի սրտէ շնորհակալ են Աստուծուց և գովաբանում են Նորա իմաստութիւնը և գթութիւնը — պատճառ, Նորա պարգևածն է ամենայն բարութիւն, որ հասել է նոցա, և Նորա երկնային տեսչութեանը պարտական են նոքա իւրեանց երկրաւոր երանութեան բոլոր ճոխ գանձերը։

Ինչ որ կը սերմանես, այն ևս կը հնձես! Ո՜հ, թո՛ղ և մեք բարի սերմանենք միշտ, որ նոյնպէս մի օր ժողովենք մի օրհնեալ հունձ, ճոխ և ծանր որպբով հունձ, թէև լինէր այդ երկնքում, այն կեանքումը, երկնային փառաւորութեան մէջ։—

Ս. Նազարեանց.

ՄԻ ՆԿԱՐԱԳԻՐ

ԿԱՄ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՈՀՄԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ։

Երկու եղբարք, Վ՚օլֆգանգ և Բայմունդ անուն, երկուքն ալ Գերմանիայում ծնած և դաստիարակուած, մի ժամանակ նաւ մտան, որ Ճանապարհորդին դէպ ի Մալտա կղզին։ Հայրը վաղուց արդէն հոգաբարձու էր եղած դոցանից աւելի կրտսերը դասակից առնելու Մալտեան ասպետների կարգին, և երիտասարդի զմայլուած հոգին անընդդիմանալի կերպով քարշումէր նորան դէպ ի այս կղզին, որ նա այն տեղ ծառայէ այդ կարգին իբրև ստոյգ գործունեայ ասպետ (այսինքն իբրև պատերազմող ընդդէմ ծովային աւազակների)։ Վ՚օլֆգանգը շատ մտերմաբար սիրումէր եղբայրը, քան թէ կարող էր բաժանուիլ նորանից։

Նա ծախեց իւր կալուածները, հաւաքեց իւր նշանաւոր դոյքը, իւր Բայմունդին ուղեկից եղաւ դէպ ի Մալտա և գնեց այն տեղ գեղեցիկ հողաստանիներ։ Այս տեղ գարձաւ նա բաղդաւոր ամուսնակից և հայր, և իւր երկիւղած ու անաստղ հոգով ստեղծագործեց իւր համար մի փոքրիկ դրախտ, մինչ եղբայրը շատ անգամ պատերազմ ունէր ծովային աւազակների հետ միջերկրական ծովի մէջ։ Վ՚տանգաւոր կռիւներից վերադառնալով Բայմունդը, գտանումէր իւր եղբօր մօտ հանգիստ և ղովութիւն, և երբ որ նա պատմումէր այն վտանգները, որոց հանդիպել էր, ուրախանումէր այն յաղթութիւնների վերայ, որ ստացել էր, և անդադար հրատարակումէր իւր առելութիւնը դէպ ի անհաւատները և ուխտ էր գնում յաւիտեան պատերազմելու ընդդէմ նոցա. այնուհետև ա-

ելլի հեզահոգի Վ՚օլֆգանգը աշխատուժը հաւանեցնել նորան, թէ այո՛, պիտոյ էր և այլ զէնք գործ դնել ընդդէմ այդ անհաւատներին, քան թէ լոկ սուրը։

Այսպէս ապրել էին նոքա շատ տարիներ Մալտա կղզւոմ, և ասպետների միաբանութիւնը որոշեց մի գլխաւոր ձեռնարկութիւն ընդդէմ ծովային աւազակներին, որ մի փոքր յառաջ յաչտակել էին շատ նաւեր։ Եւ Բայմունդը մանակից եղաւ այդ կռուին. բայց նա չվերադարձաւ ետիլի։ Վրիտոնեայ ասպետները թէև ձեռք բերեցին մեծամեծ շահաւէտութիւնք, բայց և կորուսին մի քանի բան, որոց կարգումն էր մանաւանդ այն նաւը, որոյ վերայ պատերազմել էր Բայմունդը։ Ականատես մարդիկ, որ նաւեր ձանկող ծովային աւազակների ձեռքից յաջողութեամբ փրկուել էին իւրեանց նաւակով, հաւատացնում էին, թէ այն նաւը իւր վերայի բոլոր պատերազմող ասպետքը կորուսանելով, առուած էր յետոյ և թէ Բայմունդն ևս սպանուած էր։

Վ՚օլֆգանգը ջերմութեամբ և առ ի սրտէ արտասուեց սիրելի եղբօր կորուստը։ Բայց դա մեռած չէր. նորան սպասում էր մի աւելի ծանր անբաղդութիւն։ Ծովային աւազակները նկատելով սաստիկ վերաւորուած ասպետի մէջ տակաւին չշնչած կեանքը, և ահա խնամով հոգ տարան, պահպանել նորան և բժշկել, որ նորան ծառաների վաճառանոցում Ալժիրի մէջ լըրբաբար իբրև ծախու ապրանք հանդէս հանեն։ Նորա բարձր, գեղեց հասակը գրաւեց շատ գնողների աչք. ուրախանում էին, որ կարող էին մի այդպիսի ահելիկեց ասպետ տանջել իբրև ծառայ, բայց ծովային աւազակը պահանջում էր շատ մեծ գին, և Բայմունդը տխրում էր մի քանի ահաւոր երկար ժամեր սպասել, մինչև կը վաճառուէր։ Ի վերջոյ երևեցաւ մի երիտասարդ մեծատուն տաճիկ, անունը Սայիդ Մուլէյ. սա քննեց և փորձեց այն վասաբաղդի անդամակազմութիւնը, ինչպէս մարդիկ սովոր են քննել մի բիւնաբարձ զրաստ գնելուց յառաջ և վերջումը վճարեց պահանջած գինը։ «Վնաս պիտոյ է լաւ մշակութիւն առնել ինձ, ով քրիստոնեայ ծառայ», խօսեց տաճիկը, «որ մի գուցէ այդպիսի մեծ արծաթի զուր վճարած լինիմ քո համար»։

Սայիդ Մուլէյ տաճիկը հաստատ կացաւ իւր սպառնալիքի վերայ։ Բայմունդը ընկաւ անզուտ վերակացուների բռնակալ կամքի տակ և ստիպուած էր լծուցանել անտանելի ծանր մշակու-

թիւններ։ — Ո՛վ կարող է նկարագրել, թէ ինչ էր կրում նա իւր ջօրաւոր ազնիւ սրտի մէջ, պատահելով այս անարժան վարեցողութիւնը։ Նորա ծառայակիցներից շատերը ստացան իւրեանց ազատութիւնը մի նշանաւոր վրկանքով (արծաթի հատուցմամբ). նա միայն չունէր այդ յոյսը, որովհետև այդ ապիտական կարգի խիստ օրէնքով ոչ մի ասպետ չունէր համարձակութիւն ստանալ իւր ազատութիւնը արծաթի գնով։ Ինչպէս նա հասաւ որոշել էր իւր մէջ, խոնարհելով Նախանձամութեան կամքին համբերել իւր ծանր ձակատագրին և իւր թշնամիների ամբարհաւաճութիւնը փոխարինել արհամարհանք, այնու ամենայնիւ վերջումը թուլացան նորա քաջութիւնը և զօրութիւնը։ Մի պատեհ միջոցում, երբ հպարտ Սայիդ Մուէյը, որ նորա ծառայքը շատ փոքր էին տեսանում, ներկայ էր նորա աշխատութեանը, մաղտացի ասպետը յուսահատութեան մէջ, ընկաւ նորա ոտքը և խնդրեց նորանից մահ։

«Մահ կարող չեմ քեզ տալ», պատասխանեց Մուէյը, «որովհետև շատ թանգ գնով գնուած ես դու։ Բայց գիտեմ, որ դու հաւատարիմ ես ինձ. իմ նոյն իսկ վերակացուքս գովում են քեզ բոլոր ծառաների մէջ։ Ընդած գիշերին իմ այգեպաններից մինը մեռել է անձնասպանութեամբ. ես եկայ այս տեղ, նորա փոխանակ կացուցանել մինը ձեզանից և իմ ընտրութիւնս ընկել է քո վերայ։» — Բայց նա պարտ էր հնազանդել և երջանիկ համարել իւր անձը, որ այնուհետև ազատուելու էր այն թշուառ, ախտանման օթևանից, ուր միւս ծառաների հետ անցուցանում էր իւր գիշերը, և իւր ծանր միակութիւններից անդադրում վերակացուների խարազանի հարուածների տակ. որովհետև այն ծառայքը, որ ունէին հոգալու իւրեանց իշխանի այգին, ստորադրուած էին նորա անմիջական իշխանութեան տակ և պահպանվումէին աւելի լաւ, քան թէ միւսները։

Մուէյը, մի ջերմեռանդ մահմետական, այս տեղ ընտրումէր յաճախ պատեհ ժամանակ խօսակից լինելու իւր ծառաների հետ։ Մի հարկաւոր բան էր համարում նա ամենայն տեսակ հնարներով որպէս և սպառնալիքով և խոստմամբք յօժարեցնել նորանց դէպ ի ընդունելութիւն մահմետական կրօնի։ Ամենք լինելով շատ տկար և մարմնասէր, քան թէ հաճելի էր նորա երկիւղած խոնարհութեամբ կրել ծառայութեան լուծը իւրեանց հա-

ւատի փառքի համար, տեղիք տուեցին։ Դոքա յանդգնաւորապէս ուրանալով իւրեանց սուրբ հաւատը, ստացել էին մի թշուառ ազատութիւն, և իբրև ուրացողք կարծելով իւրեանց անձը ա-մենայն քրիստոնէական պարտականութենից դուրս, իւրեանց նոր հաւատակիցքը օրինակ առած, այս և այն աններելի ճանապարհներով ձեռք էին բերել մեծամեծ հարստութիւնք։ Սորա հակառակ, ամենայն փոյթ անօգուտ ճնաց Պայմունդի մասին։ «Ես մի քրիստոնեայ ասպետ եմ», պատասխանում էր նա, «և այդպիսի կը ճնամ նոյնպէս իբրև ծառայ, մինչև ի մահ։ Ա՛յո, դուք իմ խաչս հանեցիք կուրծքիս վերայից, բայց իմ սրտիցս հանել կարող չէք երբէք։ Ոչ թէ քո ճարտարախօսութեան զօրութիւնը, ոչ թէ ձեր հաւատի ուսման կշռութը, այլ միայն ձեր անզթութիւնը, միայն ձեր վերակացուների արիւնոտ խարազանը, ստիպեցին այն տկարները, այն անկիրթքը համբերելու չարչարանքի, դէպ ի մի արտաքուստ հաւատուրացութիւն. բայց կեանքի ծովի մէջ ապառաժի վերայ, ճշմարիտ քրիստոնէի վերայ կը խորտակուին ձեր բոլոր անպտուղ փորձերը։ Եթէ երկմիտ ես ասածիս ճշմարտութեան մասին, ահա կարող ես դու փոյթ փորձել իմ վերայ»։

Մուէյը երեսը յետ դարձրեց նոքանից, բարկացած, բայց և ամօթ ապարտուած, որովհետև նա անզիտանում էր մի այդպիսի վեհ մտածութեան քաջահոգութիւնը և խոստովանեց իւր մէջ, որ ինքն կարող լինելու չէր դիմանալ այդ փորձին։ Ա՛յլև, հետ զհետէ զգում էր նա մեծապանք դէպ ի այդ Պայմունդը, որ հաւատարմութեամբ և խղճմտութեամբ լցուցանում էր իւր պարտականութիւնքը, թէպէտ նա իւր իշխանի որպէս խստութեանը, նոյնպէս բարեկամութեանը փոխարինում էր արհամարհանք և մերժում ծառայական հանգիրձի մէջ էս, հպարտ և անընկճելի ասպետը։

Ա՛յսպէս եկան ու գնացին տրտում տարիներ շատ, բայց Պայմունդը համբերում էր իւր ճակատագրին, որպէս տղամարդ ու քրիստոնեայ։ Ո՛չ այսպէս միւս ծառայքը. նոցա մէջ շարժվում էին վրէժխնդրութեան և դաւաճանութեան հոգիքը և դրդում էին դէպ ի ապստամբութիւն։ Նոցա վերակացուներից մինը, մի քարաւիրտ, անխիղճ մարդ, ուրացող էր։ Ինչպէս նա թեթևամտութեամբ հրաժարուել էր քրիստոնէութենից, նոյնպէս էս նոքա աչքում ոչինչ միւս բան սուրբ չէր այլևս։ Նահատակների մէջ

գաւառ նա իւր ժողովրդակիցներից շատերը, որ յայտնի և հարուստ տոհմերից էին, ականջ դրեց նոցա ծածուկ խոստմունքին, և շուտով ապստամբութեան դաշն կապեց նոցանից ուխտ մարդու հետ, որոց գիտաւորութիւնն էր սպանել Պայիդ Աւուլէյին, յափշտակել նորա մեծ գանձերը և փախստական լինել մի արդէն պատրաստ նաւի վերայ:

Պայմանդը գտանվումէր այգու մի հեռաւոր մասնում և այս տեղ ջրումէր իւր գեղեցիկ ծաղիկները, հանդարտ խորհրդածելով իւր տրամութեան և ցաւի: Ա՛ հեռի նորանից, մի թանձր թզենու քամակում, փառաւոր թթենի և նարընջենի ծառերից շրջապատած, գտանվումէր մի գեղեցիկ հովանոց այգումը, իւր սիրոջ սիրելի առանձնատեղը: Ա՛յս րոպէիս սիրտը լցուած կսկծութեամբ, մտածումէր իւր հայրենիքը, իւր սիրելի եղբայրը և նորա նաղելի երեխայքը, որ այժմ սիրտ աւելի գեղեցիկ ծաղկեին, քան թէ այս ծաղիկները, և ահա լսից նա այգու հովանոցի կողմից մի սաստիկ հնչիւն և երկիւղալից հեծեծանք: Շուտափոյթ անց կացաւ նա խիտ թուփերի միջով և շտապեց դէպ ի այն կողմ: Ա՛յգու հովանոցի մէջ տարածուած էր գետնի վերայ յաղթահարուած Աւուլէյը. դաւադիրները ամուր բռնել էին նորան, մինչ ուրացողը ծունկը դրել էր նորա կուրծքի վերայ և կամենումէր խեղդել նորան չուանով: «Պացի՛ր դու, դաւաճա՛ն», ձայն տուեց Պայմանդը և իւր ծանր բահով խորտակեց ուրացողը դէպ ի գետին: Ահաւոր, բոցեր դուրս թափող աչքերով կանգնած էր քրիստոնեայ տապետը և խօսքերովս «Պորէ՛ք, գնացէ՛ք, անղգամներ, սպանութեամբ և դաւաճանութեամբ ոչ մի քրիստոնեայ չունի համարձակութիւն գնելու իւր ազատութիւնը», դէպ ի դուրս վարեց դռնից ահաբեկուած, տակաւին անզէն ապստամբները:

Մինչ այս լինումէր, Աւուլէյը դարձեալ շունչ էր առել: Նա ականատես էր Պայմանդի քաջալնական սրտին, լսումէր արիւնաթաթաւ, սաստիկ հարուածներից դէպ ի գետին պլըրուած ուրացողի հոգեվարքը և հեշտութեամբ աչքի տակ ձգեց բոլորը: Դողալով բարձրացաւ գետնից և բերանից արձակելով բառերս «ով դու մեծահոգի փրկիչդ իմ կեանքիս», գրկախառնեց իւր ծառան: Ապա սա հպարտութեամբ և սառնութեամբ բաց մերժեց ամենայն շնորհակալութիւն և ամենայն վարձատրութիւն: «Առաւել բաց ու յայտնի հրապարակումը», խօսեց նա ծանրութեամբ, «ես յօժարու-

թեամբ դէպ ի գետին կործանած կը լինէի քեզ, բայց դաւաճանու-
թենից և գաղտնի սպանութենից քրիստոնեայ ասպետը կը պաշտ-
պանէ և իւր Թշնամին»:

Մ՚ուլէյի սիրտը շատ խոր դղրդուած էր Պայմունդի աղնիւ, մեծահոգի մտածութենից: Նա տարաւ նորան իւր ապարանքը, և երբ որ արդէն երդում էր կերել ահաւորապէս վրէժխնդիր լինել ապստամբներից, սրտաշարժ մեղմութեամբ խնդրեց ու աղաչեց իւր աղատիչը, որ մնայ նորա մօտ, բաժանորդ լինի նորա բոլոր ունեցածին և դառնայ մահմեդական: Նա ցոյց տուեց նորան իւր անչափելի հարստութիւնքը, իւր զեղեցիկ կալուածները, նա փառաւոր գուներով նկարագրեց նորան այն գրաւիչ կեանքը, որ կամէր ինքը պատրաստել նորան: Բայց Պայմունդը պատասխանեց ծանրութեամբ և մեղմութեամբ. «Դու, անտարակոյս, չէիր ինձ աւելի մեծարելու և չէիր ինձ աւելի հաւատալու, եթէ ես կատարէի քո խնդիրը: Տես ահա, այն ուրացողին, որ ես իբրև քո սպանողը պատժեցի մահուամբ, հաւատումէիր դու, թէ չաղթել ես: Բայց դու գրե՛թէ քո կեանքի կորստով վերահասու եղար, որ այն մարդը, որ կարող էր ուրանալ ամենասուրբ բանը, ոչինչ է համարելու և այլ միւս բաները»: Բայց երբ որ Մ՚ուլէյը ամենապատրաստած և սրտում կանգնած էր սպանել առաջև, որովհետև նա բաց էր մերժել ամենայն մատուցած փոխարէն. երբ որ նա աղաչումէր նորան ինքն պահանջել, ինչ ինուրհ կամէր ստանալ, և երդում կերբաւ մարգարէի (Մահմեթի) անուամբ լցուցանել նորա որ և իցէ խնդիրը, այնուհետև Պայմունդը խնդրեց ողորմութիւն և աղաւթութիւն այն անբազդ դաւադիրների համար, որոց ստանջանաւոր մահը որոշուած էր ապրէն:

Տաճկի դէմքը խոժոռուեցաւ. չգիտէր ինչ առնէ, բայց երդում էր կերել մարգարէի անուամբ. նա չկամեցաւ մեծահոգութեամբ յիտ մնալ իւր ծառայից և պատասխանեց. «Խարուք է, ա՛ռ քեզ պարգև ինձանից այն Թշնամիների կեանքը և վարուիր նոցա հետ, ինչպէս կամիս. բայց դու կարող չես այսուհետև իմ ծառայս լինել. ինչ որ դու չկամիս պահանջել ինձանից, քո ազնիւ հպարտութեան պատճառով, այդ բանը կամիմ ինքս պարգևել քեզ — քո աղաւթութիւնը: Վա՛ր կալ իմ դանձերից, որչափ կամիս, դարձիր դէպ ի քո հայրենիքը և միա բեր երախտագէտ Սայիդ Մ՚ուլէյը»:

Պայմանը ուրախութեամբ ընդունեց Նորան շնորհած ապաստանը. բայց բոլոր Նորան առաջարկած զանձերը մերժելով, վեր կալաւ միայն իւր ծառայական զգեստը իբրև յիշատակ այն տրտում տարիների, և նաև մեռած ութ արձակածների հետ միասին, որ Նորա քաջաշնական հոգին ազատել էր մի յանցանքից և որոց հաստատել էր ազատութիւն, ուղևորուելցաւ դէպ ի Պալտա:

Մինչև այս բաները լինումէին, վօլֆգանգը ապրումէր խաղաղ և երջանիկ իւր բազմաթիւ զերդաստանի մէջ: Իւր սիրելի եղբօր յիշատակը մոքից երթում չէր բնաւ: Վաղքր տրտմութեամբ նա պատմումէր իւրայիններին իւրեանց ամուր եղբայրական բարեկամութեան և երբէք չխախտուած միաբանութեան մասին գործունեայ կեանքի մէջ և զմայլվումէր հոգով, երբ որ Նորա սրտիքը հօր պատմելու միջոցին մատուցանումէին միմեանց ձեռնելը, որպէս թէ մի նոյնպիսի եղբայրական սրտակցութեան ուխտ էին դնում:

Ով կարող է նկարագրել Նոցա վերստին տեսութեան ուրախութիւնը, երբ որ մեռեալ համարուած եղբայրը կենդանի ներս մտաւ այս գերդաստանի մէջ, երբ որ ծերացած եղբարքը իւրեանց մանուկ ճնացած սիրով գրկախառնեցին միմեանց, երբ որ պատանի և երիտասարդուհի դարձած երեխայքը ցնծալով վաթսաթուեցան վերստին յարութիւն առածին և զմայլանքը չունէր այլևս ոչինչ յայտարար խօսք բաց ի արտասուքից:

Պայմանը պատմեց յետոյ իւր գլխի անցքը: Երբ որ նա վերջացրել էր պատմութիւնը, եղբայրը մատուց Նորան ձեռքը և ասաց. «Երանի՛ Նոցա, որոց հաւատը ամուր է դէպ ի Տէրը: Մի քրիստոնէի առաքինութիւն արդարև աւելի յաղթող է, քան թէ Նորա սուրը»: Պայրը և երեխայքը կցեցին ձեռնները և ասացին. «ամէն»:

Ըսպեան վերադարձը մեծ զարմայք յարուց: Ընչ ութ անբաղդ, Նորա աղնուամտութեամբ ազատութիւն ստացած քրիստոնեայ ծառայքը անփոյթ չարեցին պատմել բոլոր անցքի հանգամանքը և գովասանել իւրեանց տպետը: Պալտայի տպետների կարգը սկսաւ ցուցանել Նորան խորին մեծարանք և շուտով յանձնեց Նորան ամենաբարձր պատուաւոր պաշտօնները:

Պատերազմը ընդդէմ անհաւատներին տեւումէր. բայց Պայմանդի բարձր պաշտօնը ըստ իւր կարգի, չէր ներում Նորան ան-

միջաբար մանակից լինել դորան, այլ պահեց նորան Մալտայի մէջ։ Դարձեալ սկսան պատրաստութիւնք հոգալ. պատճառ, տա-ճարները մեծ ջնաս էին հասուցել քրիստոնեաներին և ասպետները վառուած էին սաստիկ վրէժխնդրութեամբ դէպ ի իւրեանց թշնամիքը։ Այս անգամ մեծ յաղթութեամբ վերադարձան ասպետները և երկու նաւ շատ մահմետական դերիներով բերեցին դէպ ի Մալտայի նաւահանգիստը։

Իւր յաղթական հանդէսը կատարելապէս տօնախմբելու համար, ասպետների դասապետը հրամայեց ժողովրդի ցնծութեամբ ման բերել կապած գերիքը քաղաքի փողոցների միջով մինչև իւր ապարանքի նախադաւիթը։ Այս տեղ ժողովուած էին բոլոր ասպետները, որ վճռեն այդ անբաղդների վիճակը։ Բայմունդը, լինելով այժմ ասպետական կարգի վիճակաւոր, կանգնած էր գերապոյն դասապետի կողքում և մեախոհութեամբ դադարեցրեց իւր աչքը գերիների վերայ. պատճառ, նորա հոգու առաջև պատկերացաւ այն րոպէն, երբ որ ինքը Ակռիրում նոյն կացութեան մէջ դտնուած էր։ Այդ տեղ հանդիպեցաւ նորա աչքը մի ծանօթ երեսի, և նա սխալուում չէր։ Այդիպ Մուլէյը գերիների մէջ էր։ Այդ հպարտ, վստահ տղամարդը իւր անբաղդութեան բեռ ի տակ խոնարհուած, համարձակվում չէր դէպ ի վեր նայել. Բայմունդը իսկոյն դէպ ի մի կողմ քաշվեց դասապետին և մի կարճառօտ ծանօթութիւն տալուց յետոյ, հրամայեց կանչել իւր եղբայրը որ տեղեկանալով բոլորին, մեծ արծաթով գնեց ասպետական կարգից իրեւ ծառայ, Այդիպ Մուլէյին։

«Մի՛ գնիր ինձ», ձայն տուեց սա, դու չես գտանելու իմ մէջ ոչ աշխատասէր և ոչ իսկ հնազանդ ծառայ. պատճառ, ես մեծատուն մարդ եմ և ուսած չեմ լինել ոչ մինը և ոչ միւսը»։

«Այդ դու կ'ուսանիս», պատասխանեց Ալ ջիգանդը։ «Մինչ քրիստոնեայքս դուցէ ունինք մեր ձեռքում աւելի զօրաւոր հնազանդեցնելու մեր ծառայքը քան թէ դուք»։

Ասքա հասան Ալջիգանդի օթեւանին. Տաճիկը տարան մի յարմար սենեակ, վերայից հանեցին նորա կապանքը, հոգաբարձու եղան կերակրով կազդուրել նորան և նորա անխնամ թողած վէրքը, որ սնացել էր ծովային կուռի մէջ, դարմանել։ Ալջիգանդի փոքրիկ թոռները բերուեցին նորան մխիթարելու և ծաղկունը, իւրեանց երկիւղած, երկնադոյն կապուտ աչքերով շատ անգամ նա-

յուզէին նորա վերայ այնքան մեծ ցաւակցութեամբ, որ կամեցած կը լինէին հալցանել նորանից, թէ ինչ էր պակաս նորան, միայն թէ նա այնպէս մնայլ հայեացք չցուցանէր:

Շատ օրեր անցած, Վ. օլֆգանգը մի առաւօտ նկատ մաստ նորա սենեակը: «Դու արդէն վերատին կաղդուրուած ես», խօսեց նա. «քո վէրքը ապաղջացած են. ուրեմն հեռևիր ինձ, և գնանք աշխատելու»:

Ոտժուադէմ լռութեամբ հնազանդութեամբ Մուլէյը: Հրամայողը տարաւ նորան դէպ ի իւր գեղեցիկ անկարկուճիւնները, ուր գտան նոքա արդէն բազմաթիւ աշխատաւորը զբաղուած գործով: Ոչոյց այս տեղ չկար ոչ մի շղթայակապ ծառայ. այս տեղ ոչ մի անդութ վերակացու չէր բարձրացնում խարազանը. ուրախամտութիւն և աշխատասիրութիւն էին վերակացուքը և փոխանակ հառաչանքի ու ողբական ձայների, որոց սովոր էր Մուլէյի ականջը, լսելի էին միայն զուարճութիւն և երգեր:

«Պահիր դու այն խաղողենու ճիւղերը դէպ ի վեր կապել և օդնական լինել ժողովելու հասած խաղողները», ասաց Վ. օլֆգանգ սիրալից կերպով: Մուլէյը շուտով մօտեցաւ, որպէս թէ կարող չէր այդպիսի քաղցրութեամբ խնդրած օգնութենից հրաժարուիլ, և գործնեայ գտանուեցաւ աշխատասիրութեամբ:

Կէսօրի այրող ջերմ ժամերը հասանելով, Վ. օլֆգանգը տարաւ նորան դէպ ի նորա հով սենեակը, ուղարկեց նորան զուարճացուցիչ կերակուրներ և թոյլ տուեց նորան մի քանի ժամ հանգստանալ: Յետոյ դարձեալ տարաւ նորան դէպ ի աշխատութիւն և կարողացաւ նոր ի նորոյ զբաղեցնել և կամաւոր գործնէութեան մէջ պահել նորան, մինչև օրը երեկոյացաւ:

«Դու այսօր հաւատարմապէս օգնական ես եղել ինձ իմ աշխատութեան մէջ, ուրեմն արժան է քեզ և կրկրպ լինել իմ հանգստութեանս», խօսեց Վ. օլֆգանգը և տարաւ մահմետականը դէպ ի մի մեծ, հովանաւոր սարվիենայ, ուստի ունէին ազատ հայեացք ծովի վերայ: Այս տեղ հանգստացան նոքա մի կակուղ նստարանի վերայ և մինչ նոքա վայելումէին ծովի մէջ մայր մտանող արեգակի հոյակապ տեսարանը, Վ. օլֆգանգը հարցրեց իւր կալանաւորից, թէ ինչ բան դրդել էր նորան նաև մնանել և ինչ էր պատճառը նորա դերութեան: Սա չդադարեց մի մայլ ափաճութեամբ և մի անթափանցանելի բարկութեան բոցավառութեամբ պատմել, թէ

նաւատեռւտ լինելով իւր մի քանի փախած քրիստոնեայ ծառաներուն քամակից հասանելու համար, երբ որ հասել էր դռցա, այնուհետեւ դերի ընկաւ թշնամի ասպետներուն ձեռքը: Սորանից յետոյ դառնապէս գանգատեց նա իւր խիստ ճակատագրին եւ քրիստոնեաներուն ուխտադրուժ բարքին վերայ:

«Ընթացիր աղամարդ», խօսեց Ռոլֆգանգը, «արդարեւ դու չունելիր ոչ մի անձն, որ սիրով եւ հաւատարմութեամբ անձնատուէր լիներ քեզ. ոչ մի սիրտ տանը կարօտով սպասում չէ քեզ. պատճառ, քո ծառաների համար իւրեանց բռնակալի կորուստը մի ուրախութեան տօն է»: — Մուլէյը լուեց խոժոռուած դէմքով: — «Տես ահա», Ռոլֆգանգը մեծամտութեամբ յառաջ տարաբաւ խօսքը, «այս տեղ ամենեքեան ապրումեն ազատութեան մէջ, ամենեքեան մի ուրախ, ինքն իւր համար ընտրած գործունէութեան մէջ, ամենեքեան հաւատարիմ սիրով միմեանց հետ»: —

Այդ խօսքերը ընդհատուեցան. ալէօրի դուստրները եւ հարսները իւրեանց երեխաներով մտեցան: Որքա գիտէին, որ իւրեանց պապը այս սիրելի տեղում հաճութեամբ նկատումէր արեւի մայր մտանելը, վառն որոյ եւ շտապեցան որոնել նորան այս տեղ: Ինչ ուրախ բաղմութիւն. քաղցր կերպարանների շուռով պատեց պապի չորս կողմը: Երիտասարդ գեղեցիկ կանայքը մատուցին նորան իւրեանց քնքուշ մանուկները, որ և ժպտելով իւրեանց փոքրիկ ձեռները տարածումէին դէպ ի նա, մինչ միւս երեխայքը ցընծալով ամենայն կողմից դէպ ի վեր էին սողում նորա վերայ և ամեն մինը կամենում էր նասել սիրալից պապի գոգում կամ թէ զբօսքը հանգստացնել նորա կուրծքի վերայ: Օ, ուրախ, զօրաւոր ծերունին սպիտակ մօրուքով ու մազերով նմանումէր մի, հրեշտակներից շրջապատած սուրբի. Այսպէս Մուլէյը կարողանում էր իւր հայեացքը դարձուցանել այս ընտանեկան սիրոյ և երջանկութեան երկնաքաղաքացի պատկերից: Մի երբեք չգուշակած զգայողութիւն շարժուեցաւ նորա սրտի մէջ, և կիսով չափ երազի մէջ հեռուեցաւ գերդաստանին դէպ ի օթեւանը, ուր երիտասարդները նոր էին վերադարձել աշխատութենից, և ծերունի, քաղցրասիրտ մեծ մայրը պատրաստումէր երեկոյեան սեղանը: Այս կանգնած էր այն տեղ, սիրտը խոր շարժուած, երբ որ ալէօրը իւր երկիւղած ընտանիքի մէջ կատարումէր երեկոյեան աղօթքը, և երբեք չզգացած խաղաղութեամբ իւր հոգու մէջ դնաց նա քնելու:*

Ա՛յսպէս անց կացաւ մի օրը միւսին հառաջապար: Ամենքեան լցուած էին աշխատասիրութեամբ և ընտանեկան ուրախութեամբք: Վ՛ալիգանդը երբեք ցոյց տալիս չէր, որպէս թէ կամք ունէր դարձուցանել մահմետականը դէպ ի քրիստոնէական կրօնը. պատճառ, նախ և յառաջ սա պիտի կենակցութեամբ նոցա հետ և փորձով տեղեկանար քրիստոնէութեանը, պիտի ուսանէր զգալ վրկութիւնը, որ դրած է նորա պատուէրների պահեցողութեան մէջ և իսկապէս կատարելով դորան, պատրաստուէր դէպ ի ընդունելութիւն քրիստոնէական հաւատարկութեան մէջ: Ասպետական կարգի ծերունի, երկիւղած վճռակատարը իւր եղբօրը պատուիրել էր այսպէս ընթանալ, և շատ անգամ գալիս էր նորա մօտ, տեղեկանալու գործի յաջողութեանը. սակայն նա երբեք երևում չէր Մուլէյի աչքին, որովհետև դեռ ևս չկամէր, որ սա դարձնալ հանդիպէր նորան և ճանաչէր:

Մուլէյի առաջին տրտմութիւնը կամաց կամաց չքացաւ և իւր հայրենիքի կարօտութիւնը ի վերջոյ տեղիք տուից դէպ ի Վ՛ալիգանդի դերդաստանը սիրոյն: Ա՛յլևս կարող չէր նա ապրել առանց այն երեխաներին, որ այնպէս մանրամասն սիրում էին նորան. նա ուրախանում էր, երբ որ ծագում էր առաւօտը, որ ծնողների հետ միասին գնայ աշխատելու, ուրախ խօսակցութեան մէջ սեղանակից լինի նոցա և երեկոյին ունկնդիր լինի (ականջ դնէ) Վ՛ալիգանդի ծանր խօսուածքին մարդկային արժանաւորութեան և կոչման, առաքինութեան և կրօնի վերայ: Կամաց կամաց, բայց իրաւ վերջնամբ ցած ընկան կեղևանքը (թեփքը) նորա աչքերից և քրիստոնէական կրօնի ճառագայթները սկսան ջերմացնել և ուրախացնել նորա սիրտը:

Միանգամ Վ՛ալիգանդը ճաճանչ ականջ էր դնում նորան, երբ որ նա սորվեցնում նոսաճ երեխաների մէջ և ապշեցնելից միևնոյն ցոյց էր տալիս նորան մի խաչելութեան պատկեր աբանոսեան փայտից, որ նա այսօր, իւր ծննդեան օրին, ընծայ էր ստացել մեծ մօրից: «Ցոյց դու, անբասիր տղամարդ», խօսեց երեխան, «դու այո՛ չես ճանաչում փրկիչը, որ այս տեղ բևեռած է խաչի վերայ, ևս կը պատմեմ քեզ նորա մասին»: Եւ այսպէս սկսաւ մանուկը իւր պարզ, սիրա շարժող պատմութիւնը, որոյ մէջ միւս քոյրերը նմա խառնեցին այս և այն դեղեցիկ, իմաստալից խօսքը, որ ասել է Ղրիստոս, որ և նոքա անգիր գիտէին: Մու-

լեյը լսումէր, սիրտը շարժուած։ Նա թոյլ տուեց պատմել իւրեան այն բանը, որ նա գիտէր արդէն։ պատճառ, երեխաների բերանից այդ բոլորը հնչումէր աւելի զթաշարժ կերպով և աւելի մխիթարող զօրութեամբ ներս էր մտանում նորա սրտի մէջ։

«Լսկ այժմ, լաւ նայիր դու նաղելի, խաչհանած Փրկչի վերայ», մանուկը յառաջ տարաւ խօսքը, «նոյն իսկ մահը կարողացել չէ նորա քաղցր երեսը ոգեղացնել։ Ո՜հ, քանի որ դու սկսել ես մեզ սիրել, ես մտածումեմ միշտ, թէ դու արդէն քրիստոնեայ էիր. պատճառ, Յիսուսը ասել է. Լսէ դուք իմ աշակերտք է, կ'իմացուի նորանով, որ դուք միմեանց սիրումէիք»։ «Նա մանաւանդ սիրել է Նա երեխայքը», յաւելացրեց մանուկներից մինը։ «Նա միանգամ ասել է իսկ իւր աշակերտներին. «Լոյր տուեցէք երեխաներին գալ իմ մօտ, մի արգելեցէք դորանց, վասն զի նոցա է երկնքի արքայութիւնը»։

«Լյո՛», ձայն արձակեց Ուլէյը, սիրտը շատ խոր դղրդուելով այս երեխայական պարզութենից, «այո՛, ձեր մաքուր սրտի մէջ բնակուում է Աստուծոյ խաղաղութիւնը։ Ո՛վ դու մեծ, տուր տղամարդ, թոյլ այդ խաղաղութիւնը իջանէ և իմ սրտի մէջ»։— Յետոյ ձեռք ձգեց նա խաչելութեան պատկերը, որ տակաւին բռնած ունէր երեխան, և արտաստւելով սեղմեց նորա վերայ երեսը։

Ընդհուպհետև վ՚օլճգանդը մօտեցաւ նորան, որպէս թէ ոչինչ լսել չէր նոցա խօսակցութենից։ «Դու ահա մի տարի է, որ իմ մօտ ես. ես կամէի ցուցանել, թէ մեք մեր կրօնի պատուիրաններով լինչպէս ենք վարվում մեր թշնամիների հետ։ Դու տեսել ես արդէն մի քրիստոնեայ գերդաստանի կեանքը և գործունէութիւնը. այժմ դու ազատ ես. դու կարող ես վերադառնալ քո հայրենիքը, եթէ հաճոյ է քեզ։

Ուլէյը լուեց, շուարած և անշարժ աչքով նայումէր խաչելութեան պատկերի վերայ իւր ձեռքում. բայց երեխայքը վաթաթուեցան նորան և ձայն արձակեցին. «Ո՛չ. դու չպիտի թողուս մեզ. դու պիտի մեր մօտ մնաս։ Պատճառ, այն տեղ ոչ ոք քեզ այնպէս սիրում չէ, ինչպէս մեք»։

Ընդհուպհետև արտաստւելից աչքերով գլորուեցաւ նա ալեւոր գիրկը և ձայն արձակեց. «Խնդրումեմ և ազաչումեմ, պահեցէք ինձ ձեր մօտ. մի մերժէք ինձ, դուրս ձգելով դառարկ ու անսէր

աշխարհի մէջ։ Ես կամիմ նոյնպէս քրիստոնեայ դառնալ, ինչպէս դու. ես»։

Եւ նոցա առաջև կանգնած էր այժմ ասպետական կարգի վեհաշուք Պայմունդը։ «Ո՛վ Մուէյ», ձայն արձակեց նա, տալով ծելով դէպ ի նա ձեռները։ Մուէյը իսկոյն ճանաչեց նորան. նոքա երկար միջոց, անխօս զրկախառնած բռնել էին միմեանց, և սիրտերը միայն աստակահնչիւն բաղխումէին միմեանց մօտ։ «Դու իմ պահապան հրեշտակն ես», ասումէր Մուէյը. «դու ու օր փրկել ես իմ կեանքը, իսկ այժմ իմ հոգին»։ Պայց երկիւղած վեհաշուքը մեղմութեամբ շարժեց գլուխը և պատասխանեց. «Ո՛չ ես, Տէրը միայն կարող է տկարների մէջ և Քրիստոս միայն է ճանապարհը, ճշմարտութիւնը և կեանքը»։

Գ. Թովմասեանց.

ԲՆԱԿԱՆ ՕՐԻՆՔՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԿԱՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԱԾԻ ՎԵՐԱՑ ՆԻ ԸՆՀԱՆՆԵՐԻ ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ·

—

ՀԱՆՈՒԱԾ ԹՈՎՄԱՍ ՀԵՆՐԻԿՈՍ ԲԵՕԿԼԻ

«History of the civilisation in England».

(Շարունակութիւն. տե՛ս հիւսիսափ· Ամսատետր Գ·)

Ահա այսքան են հետևանքը կենսական հնարների թևթևաթևութեան մի աշխարհում, որ ընդհանրապես ունի աւելի մեծ, բնական աղբիւրներ շահաւէտութեան, քան թէ որ և իցէ Եւրոպայի մէջ: Ես եթէ մեք ազգերի ընկերական և տնտեսական կացութիւնը նկատենք աւելի ընդարձակ չափով, այնուհետև գտանելու ենք, որ մի և նոյն հիմնական կանոնը ամենայն տեղ գործունեայ է. մեք գտանելու ենք, որ, եթէ հաւասար էին հանգամանքը, կերակրի առատութիւնը բազմապատկումէ ժողովրդի բազմութիւնը, որպէս դարձեալ սորա առաւելութիւնը որոշումէ նոցա աշխատութեան վարձի չափը: Այլև գտանելու ենք, որ եթէ աշխատութեան վարձը տևողապէս փոքրիկ է, ուրեմն և հարստութիւնը անհաւասար կշռով բաժանուած է ժողովրդի մէջ, ապա և քաղաքական կարողութիւնը որպէս և ընկերական ազդեցութիւնը կը լինի անհաւասար. ուրիշ խօսքերով. մեք կը տեսանենք որ ստոյգ և ընդհանուր առընչութիւնը բարձր և ստորին դասակարգերի մէջ, սկզբնաբար կախ է այն բնական առանձնութիւններից, որոց ազգեցութիւնը ցոյց տալու փորձ փորձելի ես: Եթէ այս բոլորս առնունք միասին, ապա մի այնպիսի լուսափայլութեամբ, որ մինչև այժմ տեսուած չէ, կը պայծառանայ մեր աչքի առաջև բնական ու բարոյական աշխարհի մէջ եղած ամենամեծ լծակցութիւնը. մեք կը տեսնենք նոյնպէս այն օրէնքները, որոց տակ ստորադրուած է այդ լծակցութիւնը, և պատճառները թէ ինչու այս և այն հին քաղաքակրթութիւնը հասանելով մի որոշեալ կատարելութեան աստիճանի, դարձեալ աւերուեցաւ, ոչ լսվհետև չունէր կարողութիւն ընդլայնելու բնութեան գործութեանը կամ թէ ճակատը դէմ դնելու այն արտաքին խոչընդոտ-

նելին, որ ապրողապէս ներգործումին ընդդէմ նոցա յառաջադիմութեան:

Եթէ դարձուցանենք մեր դիմքը դէպ ի Ասիա, կը գտանենք այդ տեղ ուշադրութեան արժանի օրինակ երկպառակութեան ներքին և արտաքին յայտնութիւնների մէջ: Երդէն վերևում բացատրած պատճառներով ասիական քաղաքագործութիւնը սահմանափակուել է միշտ այն ձոխ աշխարհների մէջ, ուր միայն կարելի էր հեշտ ձեռք բերել հարստութիւն: Այս ահագին տարածութիւնը պարունակում իւր մէջ երկրի առաւել պտղաբեր մասներից մի քանիսը, և այդ բոլոր աշխարհների միջից Հնդկաստանը, անտարակոյս, է այն տեղը, որ մի շատ երկարաձիգ միջոց ունեցել է առաւել մեծ քաղաքագործութիւն: Աղբիւրը, ուստի կարող էինք հանել փոքր ի շատէ տեղեկութիւնք Հնդկաստանի մասին, առաւել ճոխ է, քան թէ Ասիայի որ և իցէ այլ բաժնի մասին. վասն որոյ կամիմ դորան օրինակ առնուլ և դորանով լուսաւորել կացուցանել այն օրէնքը, որ հանած են քաղաքական տնտեսութենից և քիմիաբանութենից, բայց ստուգվումն այն ընդարձակ շրջահայեցութեամբ, որ կարող է միայն տալ մեզ մարդկութեան կեանքի նկարագիրը:

Հնդկաստանում կլիմայի ջերմութիւնը փորձով ապացուցանում է այն օրէնքը, որոյ հիման վերայ սովորական կերակուրը բովանդակում իւր մէջ աւելի թթուածին, քան թէ ածխածին: Եւ մի այլ օրէնքի հիման վերայ հնդկական ժողովուրդը ստիպուած է իւր սովորական կերակուրը առնուլ ոչ թէ շնչական (մեղէն), այլ բուսական աշխարհից, և սորա գլխաւոր բաղադրական մասը է աւիւնն: Միանգամայն և ջերմութեան աստիճանը այդ տեղ անընդունակ է կացուցանում մարդս աշխատելու և պահանջում մի մնուռնդ, որ դոյանում առատութեամբ և, համեմատաբար, փոքր քանակութեան մէջ պարունակում շատ սննդանիւթ: Ուրեմն մեք ունինք այս տեղ մի քանի որոշիչ յատկութիւնք, որ պիտի դրատանում հնդկական ազգերի սովորական կերակրի մէջ, եթէ վերևում յառաջ բերած կարծիքները ուղիղ են: Եւ դորա բոլորեքեան ուղիղ են: Սկսեալ շատ կանուխ ժամանակներից, Հնդկաստանի առաւել սովորական կերակուրը եղած է բրինձ, որ բոլոր հացատեսակների մէջ առաւել սննդարարն է. դա պարունակում իւր մէջ գերօրինակ շատ ածխը և տալիս է շինականին գոնեայ վաթսնաւոր չափով պտղաբերութիւն:

Ընդպէս ահա պիտանելով մի քանի փիլիքական օրինքներ, կարելի է յառաջուց գուշակել թէ ինչպէս պիտի լինելը մի աշխարհի ժողովրդական անունդը, ուրկից և դորանից հանել մի երկար շարք միւս եզրակացութիւնների: Ընդ դիպուածում, ոչինչ պահանջ արժանի է ուշադրութեան, որ բրինձը հնդկական կիսակղզու հարաւումը թէև չէ այլևս այնքան գործածական, ինչպէս յառաջ, բայց դորա վոխանակ գործ չէ դրվում շնչական մնունդ, այլ միւս տեսակ հաց, որում ասումեն Ռոտի: Այդց սկզբնական բրինձը այնքան զուգապատշաճ է իր նկարագրած որպիսութիւններին, որ մինչև այսօր իսկ է առաւել ընդհանուր մնունդը Ասիայի գրեթէ բոլոր ջերմ աշխարհների մէջ. ուսման և զանազան միջոցներում փոխադրուած է դէպ ի այլ կողմերը աշխարհի:

Ընդ յատկութեամբքը կլիմայի և կերակրի յառաջացել է Հնդկաստանում այն անհաւասար չափ ու կշռով հարստութեան, որ պիսի հանդիպումէ մեզ ամենայն տեղ, ուր մշակների հրապարակը միշտ չափից դուրս լցուած է: Նրթէ մոտիկ լինինք այն հնդկական տեղեկութիւններին, որ լինելով 2000 մինչև 3000 տարի հին, պահած կան մինչև այսօր, մեք կը գտանենք նոցա մէջ նկարագրած մի ժողովրդական վիճակ, որ ամենևին նման է այժմեան վիճակին, և կարող ենք հաւաստի լինել, որ դա միշտ այդպէս եղած է այն օրերից, երբ տիրապէս սկսուել էր հարստութեան բազմապատկութիւնը: Մեք գտանումենք ժողովրդի վերին դասակարգերը անչափ հարուստ, իսկ ստորինները ողբալի չքաւորութեան մէջ. մեք գտանումենք, որ նոքա, որոց աշխատանքով հարստութիւնը գոյանումէ, ստանումեն դորա ամենափոքր բաժինը. իսկ միւս բաժինը վայելումեն վերին դասակարգերը իբրև տոկոսիք կապիտալից: Եւ որովհետև խելքից չիտոյ հարստութիւնը առաւել հաստատ աղբիւրն է կարողութեան, վասն որոյ շատ բնական է, որ մի մեծ անհաւասարութիւն հարստութեան ունենալ է իւր հետ կից և մի դորան համեմատ անհաւասարութիւն ընկերական ու քաղաքական կարողութեան: Այս պատճառով զարմանալի չէ, որ սկսեալ Հնդկաստանի ամենահին ժամանակներից, որոց հասանումեն մեր տեղեկութիւնքը, ժողովրդի շատ ու շատ մեծագոյն մասը ապրել է ամենադառն ազքատութեան լծի տակ, ուսելով ինչ որ օրամէջ վաստակել էր, և ճնացել է միշտ տգէտ ու արհամարհուած, անդադար վատաբաղդութեամբ խոտորուած, իւր

տէրանց առաջև սողալով իբրև մի անարգ ստրուկ, և ստիպուած միայն կամ ինքը լինելու ծառայ, կամ թէ տալուելով դէպ ի պատերազմ, միւսերը ծառայեցնելու իւրեան:

Մինչակայն վարձի ճիշդ ոլքանոութիւնը, որ մշակը Հնդկաստանի մէջ երկար միջոցներ սասացել է, յայտնի կացուցանել անհնարին է. թէև կարելի լինէր այդ բանը յստակացնել արծաթի չափով, այնու ամենայնիւ արծաթի արժէքը, այսինքն նորա գնողական զօրութիւնը ենթարկուած է անհաշուելի փոփոխութիւններու, որ յառաջանում են բոլորի գիներից: Ասայց մեր այժմեան խորհուրդը լցուցանելու համար, կարող ենք ընտրել մի քննութեան ոճ, որ մեզ տալու էր շատ աւելի ճիշդ հետևութիւնք, քան թէ մի բացատրութիւն, որ հիմնուելու էր միայն վարձի ոլքանոութեան մասին հաստաքած վկայութիւնների վերայ: Այդ ոճը պարզապէս այս է. որովհետև մի աշխարհի հարստութիւն կալող է միայն բաժանուիլ աշխատութեան փոխարէն, հողի վարձ, շահաստացութիւն և տոկոսիք, և որովհետև տոկոսիքը է մի ճիշդ չափ շահաստացութեան, դորանից հետևում է, որ եթէ մի ազգի մէջ հողի վարձը և տոկոսիքը բարձր են, աշխատութեան փոխարկէնը սիտի լինի չնչին: Ուրեմն եթէ մեք ստուգական տոկոսիքը արծաթի և այն մասը հողի պատարերութեան, որ դառնում վարձու տալու նիւթ, կարող ենք բացորոշել, այնուհետև կը ստանանք բոլորովին ճիշդ դաղափար աշխատութեան փոխարէնի մասին. պատճառ, աշխատութեան փոխարէնը այն վաստակն է, որ յետ է մնում աշխատաւորին, երբ նա վճարել էր հողի վարձը, շահն ու տոկոսիքը:

Այժմ ուշադրութեան արժանի է, որ Հնդկաստանում թէ տոկոսիք և թէ հողի վարձ եղած են մեծագանակ: Մանուի օրինադիքում, որ մօտ 900 տարի Քրիստոսից յառաջ շարադրած է, արծաթի տոկոսիքը օրէնքով սահմանադրվում այսպէս. առաւել փոքրիկ տոկոսիքը 100 ից 15. ամենամեծ տոկոսիքը 100 ից 60. Ւս այս ոչ թէ մի հին օրինք է, որ չէ այլևս դործածական, ոչ. Մանուի օրէնսդրութիւնը է մինչև այսօր Հնդկական իրաւաբանութեան հիմը, և մեք հաստատ աղբիւրից դիտենք, որ 1810 թ. տոկոսիքը տարուբերում է 36 ի և 60 ի մէջ:

Այսքանս հերիք լինի մեր հաշուարարութեան մի մասնի համար. միւս մասին, այսինքն հողի վարձի վերայ ունինք մեք նոյնպիսի

ձիշդ և հաւասար տեղեկութիւն։ Անգլիայում և Շոտլանդիայում հողի վարձը, որ մշակողը վճարում է հողի պիտառութեան փոխարէն, գնահատւում է բոլորակ թուերով, ընդհանրապէս չորրորդ մասնովը հում արդիւնաբերութեան։ Գերմանիայում միջակային համեմատութիւնը է մօտաւորապէս մի երրորդ մասը, մինչ հիւսիսային Ամերիկայի միաւորեալ տէրութիւնների մէջ, ինչպէս յայտնի է, շատ չնչին է, և ինչ ինչ սահմաններում, արդարև, անուանական միայն։ Այդ Նդկաստանում օրէնքով դրած վարձը հողի, այսինքն ամենաստորին, օրէնքով ու աշխարհի սովորութեամբ ընդունուած հողավարձը կացուցանում է արդիւնքի կէսը. և սոյն իսկ անդութ օրէնքը չէ պահպանվում իւր չափի տակ, որովհետև յաճախ վարձը այնքան ծանրաբեռնվում է, որ հողի մշակողը ոչ թէ միայն ստանում է արդիւնքի կէսից պակաս, այլ այնքան սակաւ, որ հազիւ թէ կարող էր հոգալ գալոց հնձի սերմանացանութիւնը։

Թէ ինչ պիտոյ էր եզրակացնել այս իրողութիւններից, դա բացայայտ է ամենեցուն։ Հողի վարձը և արծաթի տոկոսների չափը լինելով տեղապատկէս մեծաքանակ, այլև վերջինը փոխուելով շահատացութեան հետ միասին, յայտնի է, որ և՛ աշխատութեան վարձը պիտի շատ չքաւոր եղած լինի։ Որովհետև Նդկաստանում մի որոշեալ հարստութիւն պիտի մանաւորուէր հողի վարձի, շահատացութեան և մշակի ստանալիքի վերայ, լուսափայլ է արդէն, որ երեք առաջին ժողովրդակարգերը կարող էին միայն բարձրանալ, ձեռնհասելով չորրորդին, այսինքն աշխատաւորի վարձատրութիւնը շատ փոքրիկ էր համեմատաբար երեք վերնադոյն դասակարգերի օգտատացութեանը։ Ու թէպէտ այս մի հարկաւոր հետևանք է և կարօտ չէ արտաքին զօրացուցիչ վիճակների (պատճառների), սակայն կարող ենք յիշել, որ նոր ժամանակներում, որոց մասին միայն ունինք յատկապէս վկայութիւնք, աշխատանքի վարձը Նկատատնում եղած է միշտ անչափ փոքրիկ և ժողովուրդը ստիպուած է եղել և այժմ իսկ ստիպուած է աշխատել մի այնպիսի ընչին դնով, որ բաւական էր միայն լցուցանելու կեանքի կարիքը։

Այս էր առաջին մեծ հետևանքը, որ յառաջացաւ Նդկաստանի համար, ժողովրդի ընդհանուր կերակրի թերևսաւնութենից և առատութենից։ Այդ ճնաստակարութիւնը չէ և չէ ճնում այս սահմանի մէջ փակուած։ Ինչպէս Նդկաստանում, նոյնպէս

և ամենայն տեղ չքաւորութիւնը պատճառ է տալիս արհամարհութեան և հարստութիւնը տալիս է կարողութիւն: Այլև ամենայն տեղ, ուր պայմանքը հաւասար էին, պիտոյ է ժողովրդական կարգերը, որպէս և անհաւասարները նոյնքան աւելի ազդողութիւն ունենան, որքան աւելի հարուստ են: Այսն որոյ պարտ է սպասել, որ մի անհաւասար չափ ու կշիռ հարստութեան պիտի յառաջացնէր և մի անհաւասար չափ ու կշիռ կարողութեան. և որովհետև ոչ մի օրինակ չկայ պատմութեան մէջ, որ մի ժողովրդակարգ ձեւնուամբ կարողութիւն ունեցած լինէր, բայց դորան դէպ ի չքաւորը գործ դրած չլինէր, դորանից հեշտ կարող ենք իմաստասիրել, թէ ինչպէս է եղել, որ Ընդհակառակ իւրեանց կլիմայի ֆիզիքական օրէնքներով դատապարտուած դէպ ի չքաւորութիւն, կործանուել են մի այնպիսի նուաստութեան մէջ, ուստի կարողացել չեն երբէք դուրս գալ: Ունենք այս տեղ մի քանի օրինակ միայն, վասն և աւելի լուսաբանելու, քան թէ ապացուցանելու մի առաջնորդական կանոն, որ մինչև այժմ տուած ճանաչութեամբքս, ինչպէս յուսամ, ամենևին անտարակոյս է կացուցած:

Ընդհակառակ ազգի ռամիկ բազմութեանը տուել են անունս Սուդրա, և տեղական օրէնքը պարունակում իւր մէջ մի քանի նեղսիրտ և օտարամիտ սահմանադրութիւնք նոցա մասին: Ինթէ մինը այս արհամարհուած ժողովրդակարգից համարձակուել էր նոյն տեղում բազմիլ, ուր նորա մեծաւորքը սովոր են բազմիլ, նա պիտի կամ աքսորուէր, կամ թէ համբերէր մի ցաւեցուցիչ և նախատական պատիժի*): Ինթէ նա խօսել էր նոցա վերայ արհամարհութեամբ, պիտոյ էր այրել նորա բերանը. եթէ նա ստուգապէս վէրացուցել էր իւր մեծաւորի սիրտը, ապա պիտոյ էր նորա լեզուն ձեղքել. եթէ նա տաղակոցուցել էր մի բրահմանի, պարտական էր մահու. եթէ նա բրահմանին գահակից էր եղել մի օթոցի վերայ, պիտի անդամալուծուէր յաւիտեան յաւիտենից. եթէ նա ուսումն նախրութեամբ ունկնդիր էր եղած մի սուրբ գրքի ընթերցանութեան, ապա պէտք էր եռացուն իւղ թափել նորա ականջների մէջ. բայց եթէ, Ընտուած մի՛ ապացէ, անգիր սերուել էր մի բան, մտովք պիտի մեռանէր: Ինթէ նա մեղապարտ էր, պիտի տուել տասնիւ պատժուէր, քան թէ վերին դասակարգի մարդիկը. բայց

*) Նա արտաքսուէր, յետոյքի վերայ դրոշմելով մի խարտոպական նշան, կամ թէ մի ճեղք գործելով նորա յետոյքի վերայ:

եթէ ինքը սպանուած էր, , դորա պատիժը նոյնքան էր, ինչքան մի շան, կատուի, կամ թէ ոգուաւի սպանման պատիժը. բայց եթէ նա իւր դուստրը ամուսնացնէր մի բրահմանի հետ, այնուհետև ոչինչ հատուցումն այս աշխարհումն կարող չէր քաւել այդ յանցանքը. վասն որոյ սահմանադրուեցաւ, որ բրահմանը դժոխք գըներ, որովհետև ապականուած էր ամուսնութեամբ մի կնոջ հետ, որ անչափ շատ ստորակարգ էր նորանից: Այս օրինադրուեցաւ պիղծ համարել մի մշակի լոկ անունը, որպէս զի նորա պատկանաւոր կարգը անվիջապէս յայտնի կացուցանուէր: Եւ որպէս թէ բաւական չէր այս, ստորադրութիւնը հաստատ պահելու համար հասարակութեան մէջ, օրինադրուեցաւ յատկապէս, որ ոչ մի աշխատաւոր չհամարձակուէր հարստութիւն վաստակել, մինչ մի այլ կապող ու կաշկանդող պայման հրամայուէր, որ եթէ մի Սուդրա իւր տիրոջից ստացած լինէր ազատութիւն, այնու ամենայնիւ ինուէր նա ծառայ. պատճառ, ասուէ օրէնսդիրը. «ո՛վ կարող էր նորան ազատել այդ կացութենից, որ նորան ի բնէ սեփական է»:

Ընդարձակ, ո՛վ կարող էր նորան ազատել այդ կացութենից: Ես չգիտեմ, ո՛ւր լինելու էր այն կարողութիւնը, որ ձեռնհաս լինէր այդ հրաշքը գործել: Պատճառ, ընդհակառակն՝ ծառայութիւն, մի վատթար, մշանջենաւոր ծառայութիւն էր ժողովրդի բազմութեան բնական վիճակը. դա էր այն վիճակը, որոյ մէջ ինալու դատապարտել էր նորան բնական, անընդդիմանալի օրէնքը: Այս օրէնքի ղօրութիւնը արդարև այնպէս անյաղթելի է, որ նա, ուր և ներգործող է դառնուած, պահել է ստրկութեան մէջ աշխատաւոր ժողովուրդը: Ոչ մի օրինակ չկայ պատմութեան մէջ, որ ցուցանէր մեզ մի արևադարձեան աշխարհ, ուր եթէ հարստութիւնը ստացել էր մի ընդարձակ կարողութիւն, ժողովուրդը ազատուէր իւր ճակատագրից. ոչ մի օրինակ, որ կլիմայի ջերմութիւնը չլինէր յառաջացուցած ապրուստի առատութիւն, և այս առատութիւնը ապրուստի մի անհատապար չափ, նախ հարստութեան և ապա քաղաքական ու ընկերական կարողութեան: Այն ազգերի մէջ, որ ենթարկուած են եղել այս պայմաններին, ժողովուրդը ոչինչ կշիռ ունեցել է, դա չէ ունեցել ոչինչ ձայն քաղաքական կառավարութեան մէջ, ոչինչ յոյս հատանելու այն հարստութեանը, որ դոյացած էր նորա քրտինքով: Նորա միակ գործը եղած է աշխատել, նորա միակ պարտականութիւնը հնազանդիլ:

Այդպէս իսկ յառաջացել է նորա մէջ այն սովորութիւնը երկիւղած խոնարհութեամբ ստորագրելու իւր անձը, մի երկիւղած խոնարհութեամբ, որով նա, ինչպէս յայտնի է պատմութենից, միշտ նշանաւոր է գտանուած: Պատճառ, մի աներկբայ իրողութիւն է, որ այդ ասիական ազգերի պատմագրութիւնքը ոչ մի օրինակ ցուցանում չեն մեզ, որ նոքա երբ և իցէ վեր կացած լինէին ընդդէմ իւրեանց իշխաններին. մեք գտանում չենք ոչինչ կռիւ ժողովրդական պարտքերի մէջ, ոչինչ ժողովրդական ապստամբութիւնք և ոչ իսկ որ և իցէ մեծ դատապիր վարանութիւն: Այդ ճոխ և պըղտղաբեր աշխարհներում յառաջացել են ինչ ինչ փոփոխութիւնք, բայց բոլորը վերևից, ոչ միևնոյն ներքևից. ժողովրդապետական տարրը ամենևին պակասել է այդ տեղ: Թագաւորների պատերազմեր և իշխանատների պատերազմեր եղած են բաւական շատ. եղած են յեղափոխութիւնք (revolutions) կառավարութեան, պըքուճական պալատի մէջ, աթոռի վերայ, բայց ոչինչ յեղափոխութիւնք ժողովրդի մէջ. ոչինչ փոփոխութիւն այն դառն լծի, որ բնութիւնը առաւել, քան թէ մարդս դրել էր նոցա վզին: Այս վիճակի մէջ եղած է մարդկութիւնը, մինչև եւրոպական հողի վերայ ծագելով քաղաքակրթութիւն, հանդէս մտան այլ փիլիսոփական օրէնքներ և յառաջացան այլ հետևութիւնք: Եւրոպա էր, ուր առաջին անգամ երևեցաւ մնաւորութիւն դէպ ի հաւասարութիւն, մի ձգտողութիւն բարեխառնելու հարստութեան ու կարողութեան անյարմարութիւնը, այն, որ կացուցանում է մանաւանդ շատ մեծ և շատ հին թագաւորութիւնների ակար կողմը: Դա իսկ է բուն պատճառը, որ Եւրոպայում սկիզբն առաւ այն բանը, որ արժանի է ասելու քաղաքակրթութիւն. վասն զի այդ տեղ միայն փորձեր փորձուեցան պահպանելու հաւասարակշռութիւն իւր մասների առնչութեան մէջ: Այդ տեղ միայն հաստատութիւնը կարգաւորել է իւր անձը մի գազաթնակի հիման վերայ, որ թէպէտ բաւական չէ, բայց այնքան պարունակ է, որ բոլոր զանազան դասակարգերը, ուսոի բաղկանում է նա, կարող է շրջապատել իւր մէջ, և այն բանով, որ ամեն մինին տալիս է յառաջադիմութեան ասպարէզ, ապահովում է բոլորի անդորրութիւնը և յառաջխաղացութիւնը:

Թէ ինչպէս Եւրոպայի այս և այն միւս փիլիսոփական առանձնութիւնքը փութացուցել են մարդկութեան յառաջադիմութիւնը, յայտնելով (փոքրացնելով) նախապահապահութիւնը, դորա

վերայ կ՚ակնարկենք մեր ձառի վերջում։ Որովհետև այս խնդիրը փակում իւր մէջ բացատրութիւնը ոմանց օրէնքների, որ ես տա կաբին յիշել չեմ, վասն որոյ պատշաճ է երևում նախ առարտել առաջիկայ քննութիւնս. ուրեմն ես կ՚աշխատիմ ցոյց տալ թէ ինչ որ մի փոքր յառաջ ասուած է Նոկտատանի մասին, ունի նոյնքան իսկ պիտանութիւն Եգիպտոսի, Մեքսիկոյի և Պերուի վերայ։ Եթէ այսպէս բովանդակենք տեսութեամբ առաւել նշանաւոր քաղաքագործութիւնքը Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի, ապա կը նկատենք, որ այդ, վերևում յառաջ բերած հիմնական կանոնները պիտանութիւն ունին զանազան, միմեանցից շատ հեռաւոր աշխարհների վերայ, և այնուհետև կ՚ունենանք բաւական լայնատարած վկայութիւնք, այն մեծ օրէնքների ուղղութիւնը ստուգելու համար։ Ուստի այս զգուշութեանս պիտի կասկածանք յարուցանէի, թէ իմ եզրակացութիւնքս հանել էի չքաւոր և անկատար նիւթերից։

Պատճառները թէ ինչու Աֆրիկայի ազգերից Եգիպտացիք միայն հասան մի քաղաքագործութեան, ալդէն ոլոշած են։ Մենք ցոյց տուեցինք, թէ նոքա հիմնաւորուած են այն առանձին ֆիզիքական պայմանների վերայ, որ նոցա աշխարհը գերազանց էին կացուցել դրացի աշխարհներից, որ թեթևացնելով հարստութեան վաստակը, բացումէին Եգիպտացոց առաջև ոչ թէ միայն նիւթական հնարների ազբիւրը, որոց նոքա այլապէս հասանելու չէին երբէք, այլև նոցա կրթեալ դասակարգերին տալիս էին պարապ ու պատեհ ժամանակ ընդարձակելու իւրեանց հմտութիւնների սահմանքը։ Թէպէտ այս յարմարութիւնքս ունելով էս, չեն եղած Եգիպտացիք շատ արդիւնագործ, բայց ինչ ինչ պատճառներով, որ յետոյ յառաջ կը բերենք, այնու ամենայնիւ պիտոյ է խոստովանել, որ նոքա իւրեանց անձը շատ դիր ի վերոյ են կացուցել Աֆրիկայի բոլոր միւս ազգերից։

Եգիպտոսի քաղաքագործութիւնը, ինչպէս Նոկտատանի, յառաջացաւ հողի պտղաբերութենից, և որովհետև կլիման էս շատ ջերմ է, վասն որոյ նոյն օրէնքը գործակից դառնուեցան և ի հարկէ ունեցան նոյն հետևանքը։ Թէ Եգիպտոսի և թէ Նոկատատանի մէջ դասնուելինք աշխարհի անուղղը թեթևաստաց և առատ, և այդ պատճառով մշակների հրատարակը չափից դուրս լքուած, այդ պատճառով մի շատ անհաւասար չափ հարստու-

թեան ու կարողութեան և այդ պատճառով այն բոլոր հետևութիւնքը, որ անհրաժեշտ պիտի յառաջանան մի այնպիսի անհատատութենից։ Թէ ինչպէս այս կարգը ներդործել է Հնդկաստանում, մի փոքր յառաջ տեսել ենք։ Թէպէտ աղբիւրքը, ուստի կարելի էր ուսումնասիրել Եգիպտոսի վաղեմի որպիսութիւնը, շատ աւելի չափաւոր են, սակայն հերիք են ապացուցանելու զարմանալի համաձայնութիւնը այդ երկու քաղաքագործութիւնների մէջ, որպէս և նոյնութիւնը այն մեծ հիմնական կանոնների որ ուղղութիւն են տուել նոցա ընկերական և քաղաքական բարգաւաճանքին։

Եթէ քննենք հին Եգիպտացոց վիճակը, միա գնելով գլխաւոր յատկութիւններին, ապա գտանելու ենք, որ նա հնդկականի բուն նմանատիպն է։ Ա՛սն գլ, եթէ առնուագը սնունդը, Աֆրիկայի մէջ արմաւը (խուրման) նոյն բանն է, ինչ որ Ասիայի շատ պըտղաւէտ մասներում բրինձն է։ Արմաւենին (խուրմայի ծառը) աճում ամեն աշխարհում, սկսեալ Տիղրիս գետից մինչև ատլանտեան ովկիանոսը և միլիոնաւոր մարդերի Աբրահայում հաստացնում իւրեանց կերակուրը, և նոյնպէս Աֆրիկայի գրեթէ բոլոր մասներում, Եկվատորից դէպ ի հիւսիս։ Մեծ Աֆրիկական անապատի ինչ ինչ տեղերում արգաւոր կարող չէ արմաւենին պտուղ բերել. բայց նա ի բնէ շատ զօրաւոր տունկ է և բերում այնչափ առատ արմաւ, որ դա Սահարայի հիւսիսակողմում կերակրում ոչ թէ միայն մարդիկ, այլև ընտանի անասունն. և Եգիպտոսի մէջ, ուր ինչպէս ասում են, արմաւենին ամում վայրի դաշտում, արմաւը ոչ թէ միայն ժողովրդի գլխաւոր սնունդն է, այլ այնքան առատ, որ կանուխ արդէն գործ է գրուած իբրև ուղտերի կերակուր. ուղտը այդ տեղ միակ բեռնաբարձ գրատան է։

Եթէ առնունք Եգիպտոսը իբրև ամենակատար ձևակերպութիւնը աֆրիկական քաղաքագործութեան, իսկ Հնդկաստանը իբրև ամենակատար ձևակերպութիւնը ասիական քաղաքագործութեան, ապա վերևում յառաջ բերած իրողութիւններից հետևում է, որ արմաւը Եգիպտոսի համար նոյն բանն է, ինչ որ բրինձը Ասիայի համար։ Ահա արդ, մեք գտանում ենք բրնձի առաւել կարևոր ֆիզիքական յատկութիւնքը և արմաւի մէջ։ Մի միաբար սնուցիչ նիւթի գլխաւոր բաղադրական մասը մի և նոյն է երկուսի մէջ էս, միայն թէ հնդկական բոյսի ամիլոնը յեղափոխվում

եգիպտաբոյսի շաքար։ Նմանապէս բացայայտ է տղգակցութիւնը կլեոպատրական օրէնքներէն, որովհետև արմատն ու բլիթը պատկառելի չեմ աշխատիներին և ամուսնեն շատ բարձր արհատարձներէն մէջ կամ թէ մօտ։ Նոցա բեղմնաւորութիւնը և առընչութիւնը հողի հետ եւրոպացիներ միանոյն համաձայն։ Որպէս արմատը, նոյնպէս և բլիթը կարօտ է փոքր աշխատութեան, տալիս է առատ կորիք և համեմատելով նորա բերքին, բռնում այնքան փոքր տեղ, որ երբեմն 200 և աւելի արմատներէք կարող են ամել մի օրինաւոր հողի վերայ։

Հայերէն պարտական են նմանութիւնքը, որ գտնուած աշխատներում բնականաբար հետևում են մի և նոյն ֆիզիքական պայմաններից։ Վիանգամայն և, թէ Եգիպտոսում և թէ Հնդկաստանում, քաղաքագործութիւնը հնարաւորութեամբ մի շատ պարզաբերի հողի նախընթաց ժառանգութեամբ, և ինչպէս հողի պարարտութիւնը փութացրեց հարստութեան յառաջադիմութիւնը, նոյնպէս կերակրի առատութիւնը կանոնաւորեց այն համեմատութիւնը, որով մանուածովումէր այդ հարստութիւնը։ Եգիպտոսի առաջնակարգ մասը է Սայդ, և այս տեղ իսկապէս գտնում են ձարտարութեան և գիտութեան ամենամեծ բարդաձանքը, փառաւոր աւերակները Թեբայի, Կարնակի, Լուքսորի, Դենդերայի և Էդֆուի։ Սայդում, կամ թէ, ինչպէս դա ասվում է յաճախ, Թեբայիսում գործ է ածվում մի մեծագոյն հնարագոյն որ այդ աւերակ արդարացուց է, քան թէ արմատը և բլիթը։ Դա է Պտոլեմայ բոյսը, որ մինչև նորագոյն ժամանակները գործածական էր վերին Եգիպտոսում միայն, և որոյ պատահութիւնը այնպէս մեծ է, որ տալիս է հունձ 240 չափով։ Ստորին Եգիպտոսում պտղրան անծանօթ էր յառաջ, բայց ժողովուրդը արմատից յետոյ պատրաստում մի տեսակ հայ լոռոս բոյսից որ նեղոսի պարարտ յատակի վերայ աճումէր վայրենի կերպով։ Սա սիրած մի շատ թեթևագին և հեշտ սառնալի մտունդ եղած լինի. բայց ի սորանից կային միւս շատ բուսակներ, ուսոր Եգիպտացիք ապրումէին։ Ընդարձակ լճութիւնը այնչափ անապատ էին էր, որ մահմեդականների ներս յարձակուելու միջոցին, Կէյ-քսանդրիայում միայն գտանվումէին աւելի քան թէ 4000 մզգտաճառաք։

Այս աշխատութեամբ սովորական կերակրի լճութենից յառաջացան բաղմաթիւ նոյնպիսի հետևանք, որպիսի Հնդկաստանում։

Աֆրիկայի մնացած բաժնումը թէպէտ ջերմ կլիման ձեռնտու էր ժողովրդի բազմանալուն, բայց և հողն չքաւորութիւնը խափանարար էր դարձեալ: Սորա հակառակ, Նեղոսի գետեղիքում չկար այդ արգելարիթը, ուստի որով և վերոյիշեալ օրէնքները սկսան ներգործել ազատօրէն: Այս օրէնքների զօրութեամբ Եգիպտացիք ստանում էին ոչ թէ միայն թէթեւապին մնունդ, այլև համեմատաբար գործ էին գնում դրանից ստակ, և այդպէս կրկնակի բազմացնում էին այն ժողովրդութիւնը, որում կարող էին հասանել: Միանգամայն և, սոցին դասակարգերը կարող էին իւրեանց երեխայքը աւելի հեշտ մեծացնել, որովհետև ջերմութեան պատճառով իւրեանց համար կարօտ էին միայն փոքր և թեթև հագուստների, իսկ իւրեանց երեխայքը պահում էին ամենևին մերկ, զարմանալի ներհակութեամբ այն աշխարհներին, ուր աւելի ջերմ և աւելի թանդագին հագուստ էապէս հարկաւոր է առողջութիւնը պահպանելու: Պ. Ռոդրոս Սիկիլացին, որ 1900 տարի յառաջ ճանապարհորդել է Եգիպտոսում, ասում է. մի երեխայ դաստիարակել և հասուցանել այրական հասակին չարժէ աւելի քան թէ 20 դրաքմէ, այսինքն 5 թալերից պակաս. և այս հանգամանքից իրաւացի ընծայում նա մի բաժինը այն պատճառի, որ դործակից է եղել ժողովրդի մեծապէս բազմանալուն:

Մինչև այժմ առած ծանօթութիւնքը մի խօսքի մէջ համառօտելու համար, կարող ենք ասել. Եգիպտոսում սրընթաց քայլերով բազմանում էր ժողովուրդը, որովհետև կլիման փոքրացնում էր նորա պիտոյքը, իսկ հողը տալիս էր նորան լի և առատ մնունդ. վասն որոյ Եգիպտոսը ոչ թէ միայն աւելի խիտ բազմութեամբ բնակաւորուած էր քան թէ Աֆրիկայի որ և իցէ միւս մասը, այլ, որպէս հաւանական է, աւելի խիտ բազմութեամբ, քան թէ որ և իցէ հող հին աշխարհում: Թէպէտ մեր տեղեկութիւնը այս մասին մի փոքր պակասաւոր է, բայց հանած է այն սխալ աղբիւրներից, որոց արժանահաւատութիւնը անհերքելի է: Հերոդոտոսը, որչափ մեք աւելի լաւ ուսանում ենք նորան հասկանալ, նոյնչափ և հանդիսանում ստուգախոս. և նա ասում է. Ամենից թագաւորի օրերում, պատմել են նորան, դտանուած են Եգիպտոսում 20000 բնակաւոր քաղաքներ: Թէև երևէր այդ չափազանց. բայց ուշադրութեան արժանի է, որ Պ. Ռոդրոս Սիկիլացին, 400 տարի Հերոդոտոսից յետոյ ճանապարհորդելով

Եդիպատոսում և նախանձախնդրութեամբ դէպ ի իւր հոչակաւոր նախորդը յօժարամիտ լինելով երկրայութեան տակ ձգել նորա տուած տեղեկութիւնքը, այնու ամենայնիւ հաստատումէ այս կարևոր խնդիրը: Պատճառ, ոչ թէ միայն վկայումէ նա, թէ Եդիպատոսը այնքան բազմամարդ էր, որքան որ և իցէ միւս աշխարհ, այլ յաւելացնումէ դորա վերայ, թէ, այն ժամանակի ճանոթութիւնների հիման վերայ, Եդիպատոսը առաջին օրերում եղած է առաւել ժողովրդաշատ երկիրը և ունեցել է 18,000 քաղաքներ:

Այժմ են երկու հին մատենագիրքը միայն, որ ականատես վկայահասութեամբ ծանօթ էին Եդիպատոսի որպիսութեանը. և նոցա վկայութիւնքը նոյնքան ևս պատուական են, որովհետև հանած են զանազան աղբիւրներից. Հերոդոտոսի տեղեկութիւնքը, ինչպէս երևումէ, հաւաքած են Մեմֆիսում, իսկ Դիոդորոսինը Թևթայում: Եւ ինչքան ևս տարբեր լինէին դորա, այնու ամենայնիւ համաձայն են ժողովրդի շուտափոյթ ազդուութեամբ բազմանալու և այն ծառայական վիճակի մասին, որոյ մէջ ընկղմած էր նա: Ընդարձ, մի լոկ հայեցուած այդ մեծամարմին և ճանապարհին շինուածների վերայ որ կան տակաւին, վկայումէ այն ժողովրդի վիճակը, որ կատուցել է դորանց: Ընդպիսի ահագին և այնու ամենայնիւ այդպիսի անօգուտ շինուածք կատուցանելու համար, իշխանները պիտի բռնակալք եղած լինէին, իսկ ժողովուրդը ծառայութեան լծի տակ: Ընմեծամեծ հարստութիւնը, շատ ու շատ վատնողաբար ծախքը կարողացած լինելու չէին հնարաւորել այդպիսի կերտուածք, եթէ լինէին դորա ազատ մարդերի գործ, որ իւրեանց աշխատութեան փոխարէն ստացած լինէին արժանաւոր ու արդար վարձ: Բայց ինչպէս Ընդկաստանում, նոյնպէս և Եդիպատոսում եղած չէ մի այդպիսի կշռողութիւն, որովհետև միակ խորհուրդը թագաւորութեան մէջ էր, յառաջ տանել հաստատութեան վերին դասակարգերը և հարստահարել ստորինքը: Երկոցունց մէջ խորոց էր ընկել մի անչափելի լայն և անանցանելի վիհ (փոս): Եթէ մի մարդ աշխատաւոր դասակարգից, փոխումէր իւր սովորական վաստակարարութիւնը, կամ թէ թոյլ էր տալիս նկատել, թէ նա հոգս ունի քաղաքական կառավարութեան մասին, նա պատժվումէր ստոտիկ պատժով. ոչինչ կերպով կարող չէր մի շինական, մի արուեստաւոր, կարճ ասեմ, որ և իցէ մարդ, բաց ի թագաւորից, հոգևորներից, և զինուորներից հոգի

սեփականութիւն ձեռք բերել: Հասարակ ամբոխը մի շատ աւելի բան չէր, քան թէ բեռնասարձ գրաստներ, և համարվում էր ոչինչ բանի պիտանացու, եթէ ոչ անդադար և անվարձ աշխատելու, եթէ դրա յատկակոտ էին իւրեանց աշխատութեան մէջ, լեռնում էին դանաճեճ. այսպէս էր սովորական պատիժը և տան ծառաների ու կանանց: Այս և սոցա նման կարգերը յարմար ու աւելևին պատշաճ էին այն ընկերական սիստեմային, որ հիմնած էր բռնակալութեան վերայ և կարող էր միայն հաստատ պահվիլ անգութ ընթացքով: Ողոր ազգի աշխատասիրութիւնը դրած էր մի սակաւաթիւ փոքրագոյն ժողովրդամասնի բացարձակ հրամանի տակ և այս պատճառով կարելի եղաւ կառուցանել այն ահագին շէնուածները որոց վերայ անմիտ նկատողներ զարմանում էրվև թէ քաղաքագործութեան յիշատակարանների վերայ. բայց դրա սառգապէս վկայում էին մի աւելևին ապականուած և վատառողջ վիճակ, մի վիճակ, որոյ մէջ մի անկատար կրթութեան աղօրակութիւն և արուեստք վնասակար եղան նոցա, որոց պիտի օգտակար լինէին, որպէս զի նոյն հարստութիւնքը, որ ստացուել էին ժողովրդի քրտինքով, գործ դրուեցան ընդդէմ նոյն ինքն ժողովրդի:

Ընդարձակ անտեղի էր այսպիսի հանգամանքի մէջ յուսալ, թէ մարդկային վիշտ հանդիպելու էր պիտութեան. այնու ամենայնիւ զարհուրանք է բերում մեր վերայ այն անողորմութիւնը որով Եգիպտոսի մէջ վերին դասակարգերը վատնում էին ժողովրդի աշխատութիւնը և կեանքը: Այս մասին—վկայ են դրան տակաւին մնացած յիշատակարանքը—միակ ու անզուգական դրած են դրա մեր աչքի առաջև: Մենք կարող ենք փոքր ի շատէ նկատագրել մրցքով այն բոլորովին խելքից դուրս վատնողութիւնը, երբ որ լսում ենք, թէ 2000 հոգի երեք տարի զբաղուած էին մի հատ քար Էլեփանտինեից դէպ ի Սայս քարշելու, թէ միմիայն ջրմուղը դէպ ի կարմիր ծովը արժել է 120,000 Եգիպտացոց կեանք, և թէ պիրամիդներից մինի շինութեան վերայ 20 տարի աշխատել են 360,000 մարդ:

Ս. Նազարեանց:

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ

ՀԱՆԴՈՒՑԵԼ ՄԸՆՈՒՑԱԿ ՏԻԿՆՈՋ ՆԱԶԱՐԵԱՆՑ·

Ընդեալ մայիսի 2 թուականին, Թիֆլիզում, աւարտեց իւր երկրաւոր կեանքի ասպարէզը Մանուշակ տիկինը Նազարեանց, պարին Տէր Եսայի քահանայի Նազարեանց: Այս ազգատոհմը, որ յառաջ ասլումէր Շահնազարեանց, չէ բնիկ Թիֆլիզեցի, այլ եկաւոր և տեղափոխուած Պարսկահայքի խոյ քաղաքից ներկայ դարու սկզբում, կամ թէ անցելու վերջում: ուրեմն այն ժամանակից, երբ Վրաստանը ստորագրեաց Ռուսաց իշխանութեան պաշտպանի տակ: Մանուշակ տիկնոջ և Տէր Եսայի քահանայի ամուսնութենից յառաջացել են 4 զաւակ, բոլորը ծնուած Թիֆլիզում, այսինքն Դեմետրիոս, Հովիսէմէ, Մարտիրոս և այս բառերիս գրող, ամենակրտսեր զաւակը Նազարեանց ազգատոհմի: Անդրանիկը դոցա մէջ— Դեմետրիոսը—ինչպէս լսած եմ յաւերժացած մօրս բերանից, վախճանած է ծաղիկ մանկութեան օրերում, երբ Վրաստանում կատաղել է ժանտամահը, ահաւոր ապականութիւնք

գործելով և Թիֆլիզի բնակիչքը քաղաքից դուրս վարելով դէպ ի շրջակայ պաշտերն ու սարերը։ — Թիֆլիզի ալևորներին լաւ յիշելի պիտի լինի, թէ որ Թուականին է պատահել այս աշխարհաւեր անցքը։ — Երկրորդ զաւակը, Հռիփսիմէ անուն, մի նազելի աղջիկ և պատուական քոյր, իւր հասակի հրաշափառ գարնան մէջ, կանաչ ու գալար գլորուեցաւ դէպ ի հող գերեզմանի, մի տրտում ղօղ այն չար և վարակիչ հիւանդութեան, որով ցաւագարուած էին մեր ծնողքը, որոց օր ու գիշեր հընկող, անմեկնելի հոգաբարձուքը և գարմանիչքը եղած էին այդ քոյրս և այժմուս կենդանի երեց եղբայրս Մարտիրոս — ազնուամիտ ծնողքը հեռացուցել էին իւրեանց մօտից կրտսեր որդին, պատսպարելով նորան բարեկամների տներում։ Հռիփսիմէն վախճանուեցաւ հօրից մի շաբաթ յառաջ, և, աւաղ, այս բառերիս գրողը, այն օրերում մի կրակոտ ասիական մանուկ, ամենևին սիրտ, ամենևին զգացողութիւն, կատաղի ցաւով, կուրծքը մօտ դէպ ի պատառումն, դողդոջուն ձեռքով հող է ցանել այդ, թուփից կտրած, փշուր փշուր արած կոկոնի վերայ։ Գերեզմանի վիրապը մեր գերդաստանի մէջ միանգամ բացուած, պիտի հետ զհետէ կլանէր, նախ, մեր Հայրը, ապա մեր աղգականներից մինը, շատ սիրելի, աղնուամիտ կին, որ եկել էր գարմանելու հիւանդ ծնողիս, բայց վարակուելով նորա ցաւից, զկնի երկարաժամանակեայ, անասելի տառապանքի, վճարեց իւր կեանքը, իբրև բարեկամ, որ դրել էր իւր կեանքը իւր բարեկամի վերայ։ Սէր ու յարգութիւն այդ ազնիւ հոգի յիշատակին։ Մարդասէր բժշկի հոգաբարձութեամբ, գերեզմանի աւիից խլուեցաւ միայն մնայրս — մի նոր աստուածածին պարգև իւր որբացած, անապատ դարձած գերդաստանին։

Ա՛յս մի քանի ծանօթութիւնքը տուած Նազարեանց գերդաստանի մասին, թող այժմ, որչափ այս րոպէիս կարող եմ յիշողութեամբ նորոգել իմ մէջ հեռաւոր անցածի օրերը, գլնանք համառօտ խօսելու, թէ ինչպէս է եղած այդ գերդաստանի կեանքը և վերքը, օրպիսի ծնողք էին եղած ամուսնակից Նազարեանքը, և ինչ չափով լցուցել էին իւրեանց պարտականութիւնքը դէպ ի իւրեանց զաւակները, դէպ ի իւրեանց ընկերքը, դէպ ի Աստուած։

Որպիսական մեծարանքը թող չպղտորէ մեր տեսութեան

պայծառութիւնը, թո՛ղ չկաշառէ մեր սիրտը։ Արդարութիւնը չունի այլ և այլ կշիռ, այլ և այլ չափ իւրի և օտարի համար։ Ո՛չ. մեք կը խօսենք մեր ընթերցողների հետ նոյն լեզուով, նոյն անաչառ դատողութեամբ մեր յատուկ ծնողների մասին, ինչպէս միևնոյն այժմ Հայերը լսել են մեր բերանից օտարների մասին։

Մեր ծնող հայրը, Տէր Եսայի քահանան, մի շատ բարեմիտ, աղնուասիրտ, ցածուն հոգով մարդ էր և այս մասին գոհանութեամբ վկայած իւր մեծաւորներից։ Շատ որդեսէր հայր էր, բայց և շատ խիստ դէպ ի իւր զաւակները։ Իբրև ասիական պալրոցի աշակերտ, նա գիտէր միայն դաստիարակել երեխայքը ցաւեցուցիչ սաստողական հնարներներով, գաւազանով և ապտակով։ Ես շատ խաղասէր մանուկ էի. նորա ցանկով հանգստառութեան ժամերը ինձ նպաստ առնելով, կը թողուի ուսումն և կը թռչէի տանիքը — փուռան արձակել մի առանձին հաճութիւն էր ինձ — բայց քնից վեր կացած, հայրս չտեսանելով ինձ ուսման վերայ, կը որոնէր, կը գտանէր ինձ, կը կապէր և կը պատժէր փառաւորապէս։ Քնքուշ սիրով սիրող մայրս, պղպիսի դիպուածներում, շատ անգամ մէջ ընկնելով, կը պահպանէր մանուկները հօր պատժողական հարուածներից։ Հայրս չուներ գիտնական կրթութիւն, ինչպէս միևնոյն այժմ ևս, ասիական տխուր Հանգամանքի մէջ, չունի ոչ մի հայ քահանայ. բայց իմ հայրս ունէր մի տեսակ վերին կրթութիւն, իւր անձնական աշխատասիրութեամբ ստացած, օր ու գիշեր տարածուած խմորատախտակի վերայ — այն ժամանակ չունէին գրասեղաններ — օրինակելով գրչագիր ու տպագիր գործեր և շատ պարզ գեղեցիկ գրչով։ Նա գրուածք բանական ընտիր հին հայկաբանութեամբ, որ նորա ժամանակի միակ գիտութիւնն էր, և այնպիսի գաղափարներով, որ սեփական են այն ժամանակի և այժմիս հոգևոր կրթութեանը Հայերի մէջ։ Իմ նախակրթական ուսումն մի թշուառ և աղքատին բան էր, համեմատելով այժմեան մանուկների բազմամանեայ ուսանելի նիւթերին. մի փոքր ընթերցանութիւն գրոց լեզուով գրքերի, լոկ հայերէն և այն իսկ անհասկանալի հին հայերէն, որ չունէր ոչինչ անուցիչ նիւթ իմ երեխայական հոգուս համար։ Իմ առաջին կրօնական դաստիարակութիւնս ըս-

տացել եմ Նոր կտակարանի պատմութենից, որ տպած էր Պետերբուրգում Յովհաննէս Արղութեան վիճակաւոր առաջնորդի օրերում, պատկերազարդ։ Ընտրութիւնը վատ չէր, միայն թէ անգիր սերտել սրբազան պատմութիւնքը, մանաւանդ կիսով չափ հասկացած, ինչպէս պահանջումէր հայրս, վեստակար։ Տասն և չորս տարեկան հասակում, ինձ երէց եղբօրս հետ միասին յանձնեց հայրս մեծ քերական Պետրոսեանի պօղոս վարդապետին որ մեզ խելք և իմաստութիւն ուսուցանէ Զամչեանի քերականութեան վերայ, որոյ մի օրինակը, վարժապետի սեփականութիւն, գնեց մեզ հայրս 10 մանէթ արծաթով։ Ինչ կրթութիւն և լուսաւորութիւն կարող էր մեր հայրը այն տղայական և չքաւոր ժամանակներում հասուցանել մեզ, հոգացել է նա. բայց իմ գլխաւոր ստացուածքը և օգուտը եղել է միշտ իմ հօր յատուկ զգաստութեան և ուսումնասիրութեան օրինակը, նորա կենդանի խօսքը և խրատները ինձ։

Իմ հայրս հարուստ մարդ չէր և ոչ իսկ որոնել է հարստութիւն և բարեկեցութիւն։ Մեր առանին կեանքը շատ չափաւոր էր. պտուղ ամենայնիւ մեք երեխայքս միշտ ապրել ենք գոհ և երջանիկ. ծնողական սէրը միշտ պահել է մեզ զուգած ու զարդարած։ Մեզ ամենևին անծանօթ են եղած այժմեան մանուկների և երիտասարդների հազար տեսակ արուեստական և երևակայական կարիքները. բայց ոչինչ անմեղ ուրախութիւն, ոչինչ գեղեցիկ զբօսանք մեր ծնողքը խնայել չեն մեզանից, մանաւանդ հանդիսաւոր և արձակ օրերում։ Երեխայքը յատաջ ձգած, կը սիրէր հայրս մեզ առնուլ նոցա հետ սար ու ձոր և դաշտ, և այդպիսի զբօսանքներ զուարթ խօսակցութեամբ համեմած, մի կատարեալ հարսանիք էին երեխաներիս համար։ Երանելի օրեր մանկութեան, երբ տակաւին կեանքի ցաւերը և հոգսերը լցուցել չէին կուրծքը։

Իմ հօր ամուսնական ընթացքը մօրս հետ, մեղմ և քաղցր էր առհասարակ։ Հրամայողութիւն և հնազանդութիւն, սէր ու աղաւնին, այդպիսի բաներ նկատել չեն իմ աչքը — և երեխաների աչքը շատ քաջ հսկող և նուրբ նկատող են։ Մայրս միշտ ունեցել է մի մեծարական ակնածութիւն իւր ամուսնակից տղամարդից և դորանով ամենայն պայծառութեան քար հեռի է պահել իւր զաւակներից։ Երեխայքս միշտ իմացել ենք,

որ մեր հօր ու մեր կամքը միև է, և հնազանդել ենք նոցա առանց հակաճառութեան և դիմադարձութեան։ Մայրս իբրև վաղ ժամանակների ասիական կին, ստացել չէր ոչինչ գրագիտական կրթութիւն, բայց ի բնէ խելացի և հանճարեղ կին էր, կարող ըմբռնել և յարգել ամենայն բանաւոր խօսք և դատողութիւն։ Ինչ ինչ դիպուածներում, աւելի հետաւոր և պայծառահայեաց էր մայրս, քան թէ իւր փորձառու, բայց փոքր ինչ կրքոտ ամուսնակից տղամարդը։ Հօրս կենդանութեան վերջին տարիներում պատահեցաւ մեր ընտանիքի մէջ մի խնդիր, որոյ վերայ տարաձայնելով կարծիքները, հանդէս տուեցին տհաճութեան և երկպառակութեան երկուսի մէջ։ Սխալուածը, ցաւելի է ասել, մեծապէս սխալուածը հայրս էր, ինչպէս ըստուգուեցաւ դործով, իսկ իրաւը և արդարը, բայց անարժանապէս վշտացուցածը իմ մայրս։ Այնու ամենայնիւ մայրս, իբրև խելացի և աղնիւ կին, միշտ սիրել է և յարգել է իւր զաւակների հայրը, և անմխիթար տրտում էր, երբ ինքը հիւանդութեան մահճի մէջ դրած, ըղկուեցաւ իւր ամուսնակցից, որոյ հիշատակը երկար ու ձիգ տարիներ յետոյ ևս մեծարական սիրով պատուել ու յարգել է նա, և նոյնը ուսուցել է իւր որբացած զաւակներին։ Մայրս չափից դուրս, ինչպէս բոլոր ասիական մայրերը, անտաբորբոք սիրով կը սիրէր իւր զաւակները. մի քանի օր, ինչ եմ ասում, մի քանի ժամ բացակայութենէն նորանից, կարող էր ձգել նորան մի հալող ու մաշող մտատանջութեան մէջ. բայց թէ կրկին տեսութեան ժամերը — մանաւանդ մի տեղական բացակայութենից յետոյ որպիսի տարապայման շարժողութիւնը սովոր էին յարուցանել նորա մէջ, գժուար է ինձ նկարագրել։ Երկու դղրդեցուցիչ տեսարանների ականատես վկայ է եղել այս բառերիս գրող որդին. դորանից միևը մի անօրինակ, մայրական սրտի ախտաբորբոքութիւն է, որ պատշաճից դուրս լինելով, լուութեան ենք տալիս և մեք։ Միւսը վերաբերվում է այն րոպէներին, երբ պարտ էր ինձ հրաժարական ողջոյն տալ մօրս և նորա մայրական օրհնութիւնը ուղեկից առնուլ իմ ճանապարհորդութեանս դէպ ի Դորպատ 1832 թուականին։ Մինչև այժմ անջնջելի գրոշմած կայ իմ հիշողութեան տախտակի վերայ, երբ մայրս հրաժարման րոպէին համբուրելով ինձ — ամենևին գուի գարձած, ա-

մենևին սէր և քնքշութիւն, մերկացնում կանացի ստինքը և տարածանում գեանի վերայ, երդմնեցնելով ինձ, որ չմոռանամ նորա մայրական սէրը, իմ որդիական պարտքը դէպ ի նա։

Նազարեանց տիկինը եղել է մի բարեպաշտ, ջերմեռանդ և ժամասէր կին։ Նորա բոլոր կեանքը եղած է երկիւղածութեան, աստուածսիրութեան, բարեգործութեան և առաքինութեան հանդէս։ Ոչ մի կարօտեալ դատարկաձեռն հեռացել չէ նորա տան շէմքից. ոչ մի աղքատ զուրկ չէ մնացել նորա հացից ու սեղանից, ոչ մի օտարական և պանդուխտ նորա քրիստոնէական հիւրասիրութենից։ Նա ապրել է պարկեշտութեամբ և պատուով և վաստճանուել է արժանաւորապէս, տանելով իւր հետ բոլոր բարեկամների և ծանօթների սիրողապէս յարգութիւնը։ Նա հասել է մի օրհնեալ ծերութեան ոչ թէ լոկ հասակի շատ տարիներով, այլ որ լցուցել է իւր լիահասակ կեանքը երկիւղած և աստուածասէր վարքով, իբրև աշխիմայր, իբրև սիրող ամուսին, իբրև աշխատասէր և տնարար տանտիկին։

Մնք ամենևին հաւատալ կարող չենք, որ Նազարեանց տիկինը վաստճանուել է 104 տարեկան հասակում, ինչպէս կամէին թիֆլիզցիք. որ տեղից են գտել այդ զարմանալի հաշիւը։ Իմ մայրս շատ շատ 52 տարեկան էր, երբ որ ես 20 տարեկան հասակում 1832ին թողեցի Թիֆլիզը, որ ուղևորուիմ դէպ ի Դօրպատ. այժմ ես 52 տարեկան աղամարդ եմ, ուրեմն և իմ մայրս կարող է վաստճանուած լինել 84 տարեկան, բայց ոչ 104։ Ահա սխալանքի պատճառը, կարծեմ այն է, որ Ասիացիք չափից դուրս սիրումեն հնութիւնը, և կարծումեն, ինչ որ շատ հին է, այն ևս շատ պատուական է։ Բայց ուղիղն ասեմ, մի այդպիսի երկարակեաց ծերութիւն, որպիսի մեր բարեկամքը և ծանօթքը կամէին ընծայել մեր սիրելի հանգուցեալ ծնողին, հարկաւոր չէ, նորան մեծարելի և արժանաւոր կացուցանելու մեր համար. նա և իւր 84 ամեայ հասակով շատ արժանապատիւ հանգուցեալ է մեր որդիական սրտի համար։ Արդարի յիշատակը օրհնութեամբ լինի։

Մնր թիֆլիզեան նամակագրի ծանուցարարութենից առանձին հաճութեամբ տեղեկացանք, որ մեր բարեկամք ու ծանօթք յարգել են մեզ, հոգաբարձու լինելով մեր հանգուցեալ

մեր արժանաւոր, այո՛ փառաւոր Թաղմանը։ Այդ ազնիւ պարոններին հրապարակով յայտնուեմնք մեր առ ի սրտէ շնորհակալութիւնը և գրուեմնք մեզ նոցա բարեկամական շնորհին բարոյապէս պարտական։ Մեր անկեղծ շնորհակալութիւնը մատուցանուեմնք նոյնպէս Պ. Սիմէօնեան, Գ. Ակիմեան, Ն. Պոպովեան, Պոնդոյեան և միւս պատուելի պարոններին, որ վատ եղանակի պատճառով չկարողանալով ներկայ գտանուիլ հանգուցելու ուղարկաւորութեանը, յետոյ պատարագ առնել և ՝ի քահանայով նորա հանգիստը օրհնել են տուել։

Ասլէ, այս բառերիս գրողը մի սուրբ պարտք է համարում հրապարակով շնորհակալ լինել իւր մեծապատիւ եղբայր Մարտիրոս Նազարեանցին, որ այնքան տարի սիրալից որդիական խնամարկութեամբ պահպանել է մեր մայրը, դարմանել է նորան, միխիթարել է նորա ծերութեան օրերը։ Երախտագէտ սկեսարը կարող չէ այս տեղ մոռանալ իւր շնորհակալութեան պարտքը և դէպ ի իւր պատուական հարսը, Ովսաննա Նազարեանց, որ իւր քնքուշ հոգաբարձութեամբ ի ժամու և ի տարաժամու մօտ է գտանուել իւր սկեսրին, խնամել է նորա ծերութիւնը, լցուցել է նորա կարիքը — իւր քաղցր դստերական սիրով և մեծարանքով զարդարել է նորա կեանքը։ Վերջապէս բացակայ որդին շնորհակալ է իւր բոլոր բարեկամներին թիֆլիզում, որ յարգելով նորան, յանձնառու են եղած միխիթարել և սփոփել Նազարեանց սգաւոր, ամենևին որբացած տունը։

Ս. Նազարեանց.